




Զիաց Մեր Հանապազորդ

ԱՊՐԻԼ | ՄԱՅԻՍ | ՅՈՒՆԻՍ 2026



Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ ու երկինքի
հաստատութիւնը անոր ձեռքերուն գործերը կը ցուցնէ

Սաղմոս 19. 1

ԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՄ ԱՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Անիի Սուրբ Աստուածածին Եկեղեցին կամ Անիի Մայր Տաճարը՝ Անիի մեջկանգուն մնացած ամենամեծ եւ ամենագրու շինութիւնն է: Անին՝ միջնադարեան Բագրատունեաց Հայաստանի մայրաքաղաքը՝ գտնուած է ներկայիս Արեւելեան Թուրքիոյ տարածքին՝ արդի Հայաստանի սահմանին մօտ:

Տաճարը կառուցուած է 989-1001 թուականներուն ճարտարապետ Տրդատի կողմէ՝ Հայոց թագաւոր Սմբատ Բ. Տիեզերակալի նախաձեռնութեամբ: Ան կը դասուի Հայ եւ համաշխարհային ճարտարապետական լաւագոյն նմուշներու շարքին: Քառամույթ գմբեթաւոր հորինուածքով կառոյց է՝ կոթողային ձեւով եւ հարուստ յարդարանքով: Աւագ խորանը զարդարուած է «Քրիստոսը գահի վրա» որմնանկարով: Տաճարի միջին գմբեթակիր նաւը շնորհիւ ներքին նաւերի նեղացման կը գերիշխէ կառոյցի ներքին ամբողջ տարածքի երկայնքով: Տաճարի գմբեթին կանգնեցուած է մարդու հասակի չափ արծաթեայ խաչ: Տաճարը մօտ կէս դար ծառայած է որպէս Կաթողիկոսի գլխաւոր նստավայր:

1064-ին, երբ Սելճուկները գրաւեցին Անին, Տաճարը վերածուեցաւ մզկիթի: Աւելի ուշ՝ դարձեալ սկսաւ գործածուիլ որպէս Հայկական եկեղեցի: 1319-ի երկրաշարժին Տաճարը մեծ վնաս կրեց, երբ անոր կոնաձեւ գմբեթը փլեցաւ: Յետոյ՝ ան աստիճանաբար լքուեցաւ, եւ եկեղեցին կործանումի մատնուեցաւ: Եկեղեցոյ հիւսիս-արեւմտեան անկիւնը ծանր վնաս ստացաւ 1988-ի երկրաշարժին:

1860-1873 թուականներուն Հայաստանի Գյումրի քաղաքին մեջ Անիի Մայր տաճարի նմանութեամբ կառուցուած է Սուրբ Ամենափրկիչ Եկեղեցին:

Տաճարը, Անիի ամբողջ տարածքին հետ միասին, 2016-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմէ գրանցուեցաւ որպէս Համաշխարհային Բարեկարգութեան (World Heritage) վայր:



Զիաց Մեր Հանապազորդ

ԱՊՐԻԼ | ՄԱՅԻՍ | ՅՈՒՆԻՍ 2026

(April | May | June 2026)

ԼԷ. ՏԱՐԻ
Բ. ԵՌԱՄՍԵԱՅ

Անձնական եւ Ընտանեկան
Ամենօրեայ Աստուածաշունչի Ընթերցումներ
եւ Հոգեւոր Խորհրդածութիւններ

Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք
Our Daily Bread Ընկերակցութեան որուն
թոյլատուութեամբ *Our Daily Bread* գրքոյկէն
թարգմանուած են յաջորդ Էջերու
խորհրդածութիւնները

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն
Armenian Missionary Association of America
31 West Century Road
Paramus, New Jersey 07652
U.S.A.

Պարկե՛շտ վարք ունեցեք հեթանոսներուն մէջ, որպէսզի՝ ...
այցելութեան օրը փառաւորեն Աստուած՝ տեսնելով ձեր բարի գործերը: [Ա. Պետ. 2. 12]

ԳՆՄԱՐԻՑ ԱՆԵՂԾՈՒԹԵԱՆ

Գործի հարցազրոյցի մը ընթացքին, Քարոլի (Carol) բազմապատիկ անգամ հարցուցին. «Ինչո՞ւ ձգեցիր նախորդ գործը»: Հարցնողը՝ կարծես զիտէր՝ անոր նախորդ գործատէրին հետ՝ Քարոլի ունեցած բախումին մասին եւ ուզե՛ց տեղեկանալ՝ թէ՛ ի՛նչ պատահած է:

Քարոլ ընդունելով «գործելակերպի ոճերու տարբերութիւնները», մերժե՛ց բացայայտել իր կարծիքը՝ նախկին գործատէրին մասին՝ հաւատալով, թէ սխա՛լ պիտի ըլլար անոր մասին վատ բան ըսել: Աւելի ուշ, երբ արդէն ընդունուած էր գործի, իր նոր գործատէրը բացայայտեց, թէ անձնակազմը՝ սիրած էր անոր պատասխանը. «Քու անեղծութիւնդ՝ մեզ տպաւորեց: Մենք չե՛նք ուզեր, որ ապագային նաեւ մեր մասին վատ խօսիս»:

Իբրեւ նոր հաւատացող Տէր Յիսուսի, Քարոլ՝ միշտ մտածած էր՝ թէ ինչպէ՞ս կարելի է «աստուածավախ» եւ «ճիշդ» ապրիլ՝ գործնականօրէն: Ան հասկցաւ, թէ պատասխանը կրնայ պարզ ըլլալ. ցուցաբերէ՛ անեղծութիւն, եղի՛ր պատուաւոր, անկեղծ եւ տէր բարոյականի:

Ա. Պետ. 2. 12-ը՝ կ'ընդգրկէ անեղծութեան կարեւորութիւնը՝ ամէն բանի մէջ. «Պարկե՛շտ վարք ունեցէք հեթանոսներուն մէջ, որպէսզի՝ ... այցելութեան օրը փառաւորեն Աստուած՝ տեսնելով ձեր բարի գործերը»: Սա՛՛ կ'ընդգրկէ գործնական բաներ, ինչպէ՛ս՝ օրինաւոր իշխանութիւններուն ենթարկուիլ (Հմ. 13-14), բարիք գործել (Հմ. 15), խոնարհութեան եւ ծառայութեան ոգի ցուցաբերել (Հմ. 16) եւ յարգանք ու սէր ցոյց տալ ուրիշներուն հանդէպ (Հմ. 17): Աստուծոյ օժանդակութեամբ, ծառայե՛նք Անոր այնպէ՛ս, որ Անոր անունը փառաւորուի:

Աղօթք - Յայր, տո՛ւր ինձի իմաստութիւն, որ իւրաքանչիւր օր ցուցաբերեմ՝ անեղծութիւն, սէր եւ յարգանք ուրիշներուն, որպէսզի ամեն բանի մէջ, որ կ'ըսեմ եւ կ'ընեմ, քու անունդ փառաւորուի: Ամեն:

Ինչպէ՛ս կրնաս՝ պարզ եւ գործնական կերպով ապրիլ քու հաւատքդ: Ի՛նչ բառեր եւ գործողութիւններ կ'օգտագործես կամ կը խոսասփիս օգտագործել:

Այս բաժակը նո՛ր ուխտն է՝ իմ արիւնովս. ըրէ՛ք ասիկա՝ քանի՛ անգամ որ խմէք՝ իմ յիշատակիս համար: [Ա. Կորնթ. 11. 25]

ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Երբ բազուկիս վերի ոսկորը կոտրեցի, ընկերս՝ Ռէքս (Rex)՝ անակնկալ մը ըրաւ, զրկելով խնամքի տուփ մը, լեցուն սառած ապուրներով եւ գեղեցիկ՝ արծաթագոյն շերեփով: Շատ յուզուեցայ եւ պահեցի շերեփը՝ երկար ժամանակ, ապուրները սպառելէ ետք: Թեւս առողջացաւ, եւ անկէ ետք սիրելի Ռէքսը մահացաւ, սակայն անոր սիրով կատարուած ժեստը շարունակեց յայտնել ինծի Աստուծոյ սէրը: Ամէն անգամ, երբ շերեփը կը բարձրացնեմ, շնորհակալուեմ ինչ որ յայտնեմ Աստուծոյ՝ Իր սիրոյն համար, որ ցոյց տուաւ ինծի՝ իմ ընկերոջս միջոցով:

Յիսուս մեզի տուաւ տեսանելի նուէր մը՝ Սուրբ Հաղորդութեան միջոցով, որպէսզի յիշենք Իր անհամեմատելի սէրը՝ մեր հանդէպ (Ղուկ. 22. 19): Պօղոս առաքեալ՝ յիշեցուց Կորթացիներուն, թէ Յիսուս հացը կտրեց եւ ըսաւ. «Այս է իմ մարմինս՝ որ կը կտրուի ձեզի համար. ըրէ՛ք ասիկա՝ իմ յիշատակիս համար» (Ա. Կորնթ. 11. 24): Ապա Քրիստոս «բաժակը առաւ ու ըսաւ. 'Այս բաժակը նո՛ր ուխտն է՝ իմ արիւնովս. ըրէ՛ք ասիկա՝ քանի՛ անգամ որ խմէք՝ իմ յիշատակիս համար» (Հմ. 25): Աստուծոյ առատ սէրը միշտ կը յիշուի, երբ հացը կ'առնենք եւ բաժակը կը բարձրացնենք՝ որպէս Յիսուս Քրիստոսի հաւատացողներ:

Ռէքս իր սէրը ցոյց տուաւ մատչելի խնամքի տուփի նուէրով, ինծի ձգելով շերեփ մը՝ որպէ՛ս յիշեցում: Յիսուս մեզ սիրեց կեանք փոխող Իր մարմինին զոհաբերութեամբ խաչին վրայ, մեր մեղքերուն թողութեան համար: Ան մեզի ձգեց Սուրբ Հաղորդութեան խորհուրդի արարողութիւնը՝ որպէս յիշեցում Իր անփոփոխ սիրոյն:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ զիս սիրեցիր՝ այդքա՛ն զոհողութեամբ եւ թողուցիր Սուրբ Հաղորդութեան խորհուրդի տեսանելի արարողութիւնը՝ դարձեալ ու դարձեալ մեզի յիշեցնելու Զու սերդ: Ամեն:

Ե՛րբ կը նշես Սուրբ Հաղորդութիւնը (Տէրոջ Ընթրիքը): Ինչպէ՛ս կրնայ այդ խորհուրդին մատակարարութիւնը՝ աւելի իմաստալից դառնալ, մինչ կը յիշես Աստուծոյ սերը՝ այս բարի սովորութեան միջոցով:

Սերը ասո՛ր մէջ է. ո՛չ թէ մենք սիրեցինք Աստուած, հապա ան սիրեց մեզ եւ զրկեց իր Որդին՝ իբր քաւութիւն մեր մեղքերուն: [Ա. Յովհ. 4. 10]

ԻՆՉՈՒԻ ԲԱՐԻ/ԼԱՒ ՈՒՐԲԱԹ (GOOD FRIDAY)

Ի՞նչն է՝ «Բարի»ն կամ «Լաւ»ը Աւագ Ուրբաթին մէջ: Ինչո՞ւ այս օրը՝ «Վատ» կամ «Տխուր» Ուրբաթ է՝ կոչուած: Ի վերջոյ՝ այս օրը խոկումի եւ վիշտի օր մըն է, ո՛չ թէ ուրախութեան: Երբեմն՝ այս օրուան այլ անուններ կը տրուի, ինչպէս՝ «Սուրբ Ուրբաթ»: Գերմանիոյ մէջ, այս օրը կը կոչուի Գարֆրէյթէկ (*Karfreitag*), այսինքն՝ «Տխուր Ուրբաթ»: Իսկ ինչպէ՞ս եղաւ, որ այդ օրը կոչուեցաւ «Բարի/Լաւ»: Ոմանք կը խորհին, թէ անիկա ծագում առած է՝ հին աւանդութեան «Աստուծոյ Ուրբաթ»ը (*God's Friday*)՝ արտայայտութեան:

Ի՛նչ ալ ըլլայ անունին ծագումը, հաւատքի տեսանկիւնէն՝ իրապէս յարմար է Յիսուսի խաչելութեան օրը, «Լաւ» կամ «Բարի» կոչել: Քրիստոս իր զոհաբերող սիրով մեռաւ մեր մեղքերուն համար: Այդ է, որ «Բարի Ուրբաթը» լաւ կը դարձնէ: Եւ աւելի հիանալի լուրը՝ այն է, որ երեք օր ետք Ան յաղթական կերպով յարութիւն առաւ գերեզմանէն:

Նոր Կտակարանի մասնագէտ՝ Տ. Ա. Քարսըն (*D. A. Carson*)՝ գրած է. «Գամերը չէին, որ Յիսուսը պահեցին այդ անհարթ խաչին վրայ, այլ իր անխախտ վճռականութիւնն էր՝ կատարելու Հօրը կամքը, Հօրը հանդէպ ու մեզի նման մեղաւորներուն հանդէպ իր ունեցած սիրով»: Ա. Յովհաննու 4-ին մէջ կը կարդանք. «Սէրը ասո՛ր մէջ է. ո՛չ թէ մենք սիրեցինք Աստուած, հապա ան սիրեց մեզ եւ զրկեց իր Որդին՝ իբր քաւութիւն մեր մեղքերուն» (Հմ. 10):

«Բարի Ուրբաթ»ի լաւ լուրը ա՛յն է, որ Աստուած կը սիրէ մեզ եւ կ'ոզէ յարաբերութիւն ունենալ մեզի հետ: Այդ սիրով է, որ մենք կոչու՞մը ունինք սիրել զիրար (Հմ. 7, 11): Երբ այդ կ'ընենք, ցոյց կու տանք մեր սէրը առ Աստուած:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ կը սիրես զիս: Կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի՝ որ պատմեմ ուրիշներու՝ Զու մասիդ: Ամեն: **Թեզի համար՝** Ի՛նչ կը նշանակէ Բարի Ուրբաթը: Ինչպէ՛ս կրնաս պատուել Յիսուսի՛ այսօր:

Երկինքը գանձեր դիպեցեք ձեզի: [Մատթ. 6. 20]

ՍԻՐՈՎ ՄՂՈՒԿԾ ԾԱՌԱՅԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Հ ա՛յրս՝ ծանր աշխատանքի մարդ էր, թէ՛ մեր ազարակին
 Հ վրայ եւ թէ գործարանին մէջ, բա՛յց ամենարար մէկը չէր:
 Ատեններ, երբ մեր քարշակը թրաքթորը, ջերուցիչը կամ ջրման
 համակարգը աւրուէր, դրացի մը կամ բարեկամ մը կու գար
 օգնելու: Հայրս միշտ առաջարկ կ'ընէր վճարելու, թէեւ գիտէր,
 որ չէ՛ր կրնար տալ՝ որքան որ կ'արժէր այդ եղած գործը: Բայց
 անոնք ոչի՛նչ կ'ակնկալէին եւ սիրով կու գային օգնելու: Ան
 կ'ըսէր. «Շնորհակալ եմ, մինչեւ որ աւելի լաւ վարձատրուիք»:
 Մինչեւ այսօր, տակաւին չեմ գիտեր, թէ ի՞նչ կը նշանակէր այդ:
 Գուցէ՛ ինք կամ ուրիշ մէկը՝ բանով մը օգնէր իրենց ապագային:

Յիսուսի հաւատացողները, որոնք ուրիշներուն կը ծառայեն՝
 իրեն հանդէպ իրենց ունեցած սիրոյն համար, օր մը պիտի
 վարձատրուին: Թերեւս այդ ձեւ մըն է՝ «մինչեւ որ աւելի լաւ
 վարձատրուիք» խօսքին: Յիսուս իրեն հետեւողներուն ըսաւ.
 «Երկինքը գանձեր դիպեցէք ձեզի» (Մատթ. 6. 20): Ուրիշներուն
 բարիք ընելը, կրնայ միջոց մը ըլլալ այդ գանձերէն մէկ
 մասը հաւաքելու: Ան ըսաւ, որ պէտք չէ՛ «փող հնչեցնելով»
 յայտարարենք մեր գործերը: Եթէ այդպէս ընենք, ապա մեր միակ
 վարձատրութիւնը այդ պիտի ըլլայ (Հմ. 2): Բայց կրնանք վստահ
 ըլլալ, որ Աստուած մեզ կը տեսնէ: Եբրայեցիս նամակը՝ կը
 հաստատէ այս գաղափարը. «Աստուած անիրաւ չէ՛ որ մոռնայ
 ձեր գործը, եւ այն սէրը՝ որ ցոյց տուիք իր անունին համար,
 երբ սպասարկեցիք սուրբերուն ու կը սպասարկէք ալ» (6. 10):

Մենք չենք ծառայեր վարձատրութեան համար, ա՛յլ կը
 ծառայենք՝ որովհետեւ Յիսուս մեզ կը սիրէ եւ մենք՝ իր սիրոյն
 պատասխանելով, կը սիրենք եւ կը փառաբանենք զի՛նք:
 Ինչպիսի՛ օրհնութիւն պիտի ըլլայ Աստուծոյ լսելը. «Ապրի՛ս,
 բարի ու հաւատարիմ ծառայ» (Մատթ. 25. 21, 23):

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, կ'ուզեմ օգնել ուրիշներու՝ այն ձեւով,
 ինչպէս Դո՛ւն կ'ուզես: Կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի, որ քեզ ցո՛յց տամ
 անոնց եւ ապրիմ հաճութեանդ համար: Ամէն:

**Ի՞նչ գանձեր ժողուած ես երկինքի մէջ: Ի՞նչ պարգեւներ տուած է
 Աստուած քեզի, որոնք կրնաս բաժնել ուրիշներուն:**

Յիսուս Նազովրեցի'ն կը փնտռեք՝ որ խաչուեցաւ: Ան յարութի'ն առաւ, հոս չէ: [Մարկ. 16. 6]

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Լօրէթթայի (Loretta) ջուր/ելեկտրականութեան հաշիւը հարիւր տուար էր, սովորականէն շատ աւելի բարձր, ան իր որդիին ըսաւ. «Բայց Տէրը պիտի հոգայ»: Նոյն օրը, իր ամենափոքր եղբայրը՝ արցանց պատգամ մը զրկեց. «Լօրէթթա, դուն միշտ զիս կը քաջալերես, ու ես կը փափաքիմ շնորհակալութիւն յայտնել քեզի: Նայիր նամակներուդ մէջ ու բան մը պիտի գտնես ի'նձմէ»: Այդ կէսօրէ ետք, նամակներուն մէջ՝ Լօրէթթան գտաւ 100 տուարի արժէքով՝ նուէր քարտ մը: Հրա՞շք մը: Գուցէ ոմանց համար՝ ո՛չ: Բայց Լօրէթթայի համար՝ այդ «գուգադիպութիւնը» հրաշալի զգացում մը ունեցաւ: Ան միշտ կ'ակնկալէ, որ կենդանի Աստուածը՝ իր կարիքները պիտի հոգայ:

Լօրէթթայի տեսութիւնը՝ կը լուսաբանէ դաս մը՝ Յիսուսի յարութեան պատմութեան մէջ: Երբ Շաբաթը անցաւ երեք կիներ բոյրեր գնեցին, որպէսզի երթան եւ օծեն Տէր Յիսուսի մարմինը՝ գերեզմանին մէջ: Բայց արեւածագէն ետք՝ անոնք ճամբայ ելան, հրաշքի ակնկալութիւն չունէին, այլ՝ խնդիր մը. «Ո՞վ պիտի գտնէ քարը՝ գերեզմանին դռնէն» (Մարկ. 16. 1-3):

Իրենց ըրած հարցումին մէջ՝ թաքնուած էր տարօրինակ կասկած մը, յատկապէս՝ այս կիներէն, ներառեալ Մարիամ Մագդաղենացին, որոնք ուղեւորուած էին Յիսուսի հետ եւ վկան եղած էին՝ անոր զօրութեան: Բայց անոնք այդ առտու՝ մեռած Յիսուս մը կը փնտռէին:

Փոխարէնը, անոնց ըսուեցաւ. «Ան յարութի'ն առաւ. հո՛ս չէ» (Հմ. 6): Այդ յայտարարութիւնը կը բացատրէ, թէ ի՛նչ կրնանք ակնկալել կենդանի Յիսուսէն. Անոր հրաշափառ յարութեան զօրութիւնը: Ան կենդանի է: Երբ դիմագրաւենք «ծանր քարեր», որոնք պէտք է շարժին. Ան մեզի հետ է եւ կ'օգնէ: Ան գերեզմանին մէջ չէ: Իրապէս՝ յարութիւն առած է:

Աղօթք - Դուն կենդանի ես, Յիսու՛ս եւ Դո՛ւն ունիս յարութեան զօրութիւնը, որ մեզի պէտք է: Ամէն:

Ե՞րբ տեսար Աստուծոյ գործը՝ զարմանալի ձևով: Ի՛նչ կը նշանակէ քեզի համար ապրիլ Յիսուսի յարութեան զօրութեամբ:

Ես կրակը ձգեցի գայն (ոսկին), եւ այս հորթը դուրս ելաւ: [Ել. 32. 24]

ՀԱՒԱՏԱՐԻՍ ԵՒ ՆԵՐՈՂ

«Սիսալը՝ իմս չէ՛»: Այսպէս կ'ըսէ Հան Սոլօն (*Han Solo*)՝ «Կայսրութիւնը Դարձեալ կը Յարձակի»ին (*The Empire Strike Again*) մէջ, երբ իր նաւը յարձակումի կ'ենթարկուի եւ փախուստի այլ ճամբայ չկա՛յ, պարզապէս անոր համար, որ անհրաժեշտ նորոգութիւնը չէ՛ր կատարուած: Երբ ան կ'ըսէ այս, կը զարմանա՛ս՝ արդեօք ինք ի՞նչ չափով պատասխանատու է այս իրավիճակին համար, բայց չ'ուզեր ընդունիլ:

Ես ալ եղած եմ այդտեղ: Երբեմն աւելի դիւրին է յանցանքը՝ ուրիշին վրայ դնել, քան թէ ինքդ պատասխանատուութիւնը ստանձնես: Ադամ եւ Եւա այդպէ՛ս ըրին (Ծն. 3. 11-13) եւ Ահարոն ալ՝ նոյնը ըրաւ: Երբ Մովսէս Սինայի լեռան վրայ Աստուծոյ հետ էր՝ Տասը Պատուիրանները ստանալու, Աստուած ըսաւ իրեն, որ այն ժողովուրդը, որ նոր փրկած էր ստրկութենէ, արդէն դարձած էր՝ կուռքերու պաշտամունքի (Ել. 32. 7-8): Երբ Մովսէս վերադարձաւ եւ դէմ առ դէմ եկաւ Ահարոնի հետ (որու վստահած էր ժողովուրդը), Ահարոն պատասխանեց. «Դուն կը ճանչնաս այս ժողովուրդը, որ չարին հակամէտ է» (Հմ. 22): Ապա արգարացաւ՝ իր պատրաստած կուռքին մասին ըսելով. «Բերին ինձի (ոսկին) եւ ես կրակը ձգեցին գայն, եւ այս հորթը դուրս ելաւ» (Հմ. 24):

Հակառակ մեր կամակորուսեան, Աստուած կը ներէ մեզ, երբ կը խոստովանինք իրեն մեր սխալները: Ան վստահելի եւ արդար է «ներելու մեր մեղքերը» (Ա. Յովհ. 1. 9): Ներուած եւ ընդունուած ըլլալով Անոր կողմէ, կրնանք բաց սիրտով մօտենալ՝ մեր կտորած վիճակով՝ այն Աստուծոյ, որ մեր մեղքը իր վրայ առաւ խաչին վրայ՝ Իր կատարեալ եւ զոհաբեր սիրոյն շնորհիւ:

Աղօթք - Սիրելի Յիսուս, շնորհակալ եմ՝ որ իմ մեղքս, ամօթս ու յանձանքս հեռացուցիր: Օգնէ՛ ինձի, որ մի՛շտ քեզի համար ապրիմ: Ամէն:

Ինչպե՞ս ունեցար Աստուծոյ ներումին փորձառութիւնը: Ինչպե՞ս կրնաս այսօր բաժնեկցիլ ա՛յն, ինչ որ Աստուած ըրաւ քեզի համար:

Խօսքը գործադրողներ՝ Եղե՛ք: [Յակ. 1. 22]

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ ԳՈՐԾԱԴՐՈՂՆԵՐ

Գրասեղանիս վրայ յիշեցումներու յուշատախտակ մը կայ: Անոր վրայ գամուած է «Լաւ Առողջութեան 10 Սովորութիւններ»՝ անունով հիանալի ցուցակ մը, զոր տարիներ առաջ սննդաբանական ամսագիրէ մը կտրած էի: Վերջերս՝ ապշեցա՛յ, որովհետեւ՝ թէեւ ամէն օր կը տեսնեմ այդ ցուցակը, կը յիշէի միայն չո՛րս կէտ: Յուցակը այնքա՛ն ծանօթ դարձած էր առօրեայ միջավայրիս մէջ, որ կը նայէի՝ առա՛նց իսկապէս տեսնելու կամ հետեւելու անոր ըսածին:

Յակոբ կը նկարագրէ նման բան մը՝ Հաւատացեալներու կեցուածքին մասին՝ Աստուծոյ խօսքին նկատմամբ. «Եթէ մէկը միայն լսէ խօսքը ու չգործադրէ, կը նմանի մարդու մը՝ որ Հայելիի մէջ կը դիտէ իր բնական երեսը, ... ու կ'երթայ, եւ իսկոյն կը մոռնայ թէ ի՛նչպէս է» (Յակ. 1. 23-24): Քրիստոսի հետեւողներէն շատեր՝ գիտեն, թէ ի՛նչ կը սորվեցնէ Աստուածաշունչը: Բայց կրնայ պատահիլ, որ մենք «միայն խօսքը լսողներ» կ'ըլլանք (Հմ. 22)՝ ու մեր հնազանդութիւնը այդտեղ կը վերջանայ: Այսպէ՛ս՝ մենք մեզ կը խաբենք՝ Աստուածաշունչին զօրութեան եւ հեղինակութեան մասին ու չենք տեսներ Աստուծոյ խօսքը՝ իբրեւ «ազատութիւն տուող կատարեալ Օրէնք» (Հմ. 25):

Յակոբ կը խրախուսէ մեզ «խօսքը գործադրողներ» ըլլալու (Հմ. 22): Գործադրող մը «ակնկառոյց» կը նայի Սուրբ Գիրքին եւ «կը կենայ անոր մէջ (Հմ. 25), Հաստատակամ ընելով՝ ինչ որ կ'ըսէ (Հմ. 22): Աստուծոյ հնազանդիլը՝ պէտք չէ՛ ըլլայ միայն բան մը, որ կը գործադրենք, այլ պէտք է բխի մեր էութենէն: Անոր զօրութեամբ մենք կրնանք իր խօսքը ապրեցնել մեր աշխարհին մէջ:

Աղօթք -Սիրելի Աստուած՝ շնորհակալ եմ՝ Զու խօսքիդ ճշմարտութեան համար: Կը խնդրեմ, օգնե՛ ինձի, որպէսզի Զեզի հնազանդիլը՝ դառնայ իմ ինքնութիւնս: Ամէն:

Ինչո՞ւ պէտք է Աստուծոյ Խօսքը «գործադրողներ» ըլլանք:
Ի՞նչ Աստուածաշնչական ուսուցման համար կրնաս Աստուծմէ օգնութիւն հայցել՝ հնազանդելու համար:

Ա՛ն առաջին ձուկը որ կ'ելլէ: Երբ անոր բերանը բաւասա՛ սաստեր մը պիտի գտնես: [Մատթ. 17. 27]

ԱՍՏՈՒԱԾ՝ ՄԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԸ

2024 թուականին, պատանի Քիիկըն (Keegan)՝ ուրախութեամբ բռնեց՝ երկու ոտք երկարութեամբ պարամանտի (barramundi) ձուկ մը: Բայց անոր ուրախութիւնը՝ վերածուեցաւ ցնծութեան, երբ փոքր քոյրը՝ մատնանիշ ըրաւ՝ ձուկին վրայի պիտակը: Իր որսացած ձուկը՝ կ'արժէր մէկ միլիոն տոլար, որպէս Աւստրալիոյ մէջ տարեկան ձկնորսական մրցոյթի՝ մրցանակը: Այս միջոցառումը տեղի կ'ունենար 2015-էն ի վեր եւ Քիիկըն՝ առաջինն էր, որ կը շահէր այս փափաքելի մեծ դրամական մրցանակը:

Որքան քիչ հաւանականութիւնները՝ այսպիսի ձուկ մը բռնելու, ա՛լ աւելի անհաւատալի էր պատահական ձուկի մը բերանին մէջ մետաղադրամ մը գտնուիլը: Բայց Մատթէոս Աւետարանին մէջ՝ Յիսուս՝ Պետրոս առաքելային հրահանգեց. «Գնա՛՛ ծովը ու կա՛րթ նետէ, եւ ա՛ն առաջին ձուկը որ կ'ելլէ: Երբ անոր բերանը բանաս՝ սաստեր մը պիտի գտնես:» (17. 26):

Այս անհաւատալի որսին նախապատմութիւնը՝ ա՛յն հարցումն էր, թէ արդեօ՞ք Յիսուս տաճարին տուրք կը վճարէր (Հմ. 23): Յստակ էր, մարդոց հեզնանքը պնդելու, որ Յիսուս - Աստուծոյ Որդին - տուրք վճարէ՛ նիւթապէս աջակցելու Աստուծոյ տաճարին: Ան կը մատնանշէ, որ թագաւորին որդիները հարկ չեն վճարեր թագաւորին (Հմ. 24-25):

Բայց Յիսուս չէ՛ր ուզեր «անարգանք պատճառել» եւ մարդիկ շեղել իր ուսուցումէն՝ իբրեւ հարկ չվճարող երեւելով (Հմ. 26): Հետեւաբար՝ Յիսուս պատուիրեց Պետրոսի բռնելու այդ ձուկը, որ ահաւաստի կ'բռնած ձուկը ճիշդ՝ գումարը ունէր, որ բաւարար է թէ՛ Յիսուսի եւ թէ՛ Պետրոսի տալիք տուրքին համար: Հաւանաբար՝ այս պատահարը յիշեցում մըն էր թէ՛ Պետրոսին եւ թէ՛ մեզի համար, որ Աստուած մատակարար է՝ միշտ ներկայ իր զաւակներուն հետ, երբ անոնք կը հետեւին Իրեն:

Աղօթք - Սիրելի Աստուա՛ծ, օգնե՛ ինձի հանգչելու Քու մատակարարումիդ մէջ, մինչ կը հետեւիմ Քեզի: Ամէն:
Ե՛րբ հանդիպած ես անհաւատալի իրադարձութիւններու, որոնց մէջ Աստուծոյ ձեռքը տեսած ես: Ինչպե՛ս Աստուծոյ վրայ վստահիլը կ'ազատէ քեզ հնազանդ ապրելու:



Մի՛ վախնար, քանի որ ես քեզի հետ եմ. ... եւ իմ արդարութեանս աջ ձեռքով քեզի սեցուկ պիտի ըլլամ: [Ես. 41. 10]

ԱՊԱՅՈՎ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԶԵՌՔԵՐՈՒՄՆ ՄԷՁ

Իմ աչքերս գոցեցի, երբ զուարճանքի պարտէզին հսկայ հեծելակը՝ սկսաւ կամաց-կամաց բարձրանալ փորձեցի անտեսել ճռինչները, որ կու գար շատ սիրուած հեծելութենէն: Երբ պահ մը կանգ առաւ՝ վե՛ր բարձրանալէ ետք, սխալ ըրի՛ աչքերս բանալով. սարսափեցայ տեսնելով այն խորխորատը, որու մէջ պիտի իջնէինք: Աչքերս կրկին գոցեցի ու ամբողջ ճանապարհին՝ աղաղակեցի: Ա՛յդ մանկուլթեան յիշողութիւնը տակաւին կը ցնցէ՛ զիս:

Կեանքի մէջ երբեմն կը թուի թէ կ'իյնանք՝ աւելի եւ աւելի խոր, առանց ոեւէ մէկու մը՝ որ մեզ բռնէ: Բայց երբ կեանքը քառսի կը վերածուի եւ դուրս կու գայ մեր հսկողութենէն, մենք կը գտնենք մխիթարութիւն՝ գիտնալով, որ Աստուած մեզի հետ է: Որպէս հաւատացեալներ՝ գիտենք, որ Աստուած կը բնակի մեր մէջ՝ Սուրբ Հոգիին միջոցով: Կարելի է խօսիլ իր հետ եւ առաջնորդուիլ Աստուծոյ Խօսքով:

Աստուած ուզեց վստահեցնել Իսրայէլացիներուն, որ ինք պիտի «բռնէ» զիրենք՝ նոյնիսկ իրենց ապստամբութեան մէջ: Եսայի մարգարէին միջոցով Ան ըսաւ. «Մի՛ վախնար, քանի որ ես քեզի հետ եմ. մի՛ գարհուրիր, քանի որ ես քու Աստուածդ եմ. քեզ պիտի զօրացնեմ, քեզի պիտի օգնեմ, եւ իմ արդարութեանս աջ ձեռքով քեզի նեցուկ պիտի ըլլամ» (Ես. 41. 10): Աստուած ուզեց, որ անոնք գիտնան թէ պիտի օգնէ իրենց՝ փորձութիւններուն ընթացքին (Հմ. 13): Զարմանալի մխիթարութիւն պէտք է ըլլար Իսրայէլացիներուն՝ իմանալու, որ Աստուած չէ՛ լքած զիրենք, նոյնիսկ երբ օտար երկրի մէջ՝ որպէս գերի կը բնակէին:

Երբ մեր կեանքին ընթացքը դուրս կու գայ վերահսկումէ, կրնանք քաջութիւն ունենալ՝ գիտնալով որ Աստուած պատարաստ է մեզի օգնելու: Մենք ապահով ենք՝ իր ձեռքերուն մէջ:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ ապահով եմ Զու ձեռքերուդ մէջ: Ամէն:

Ի՞նչ փորձութեան դիմաց կանգնած ես այսօր: Ինչպէ՞ս կը զգաս՝ գիտնալով թէ Աստուած քեզի հետ է:

Արդարեւ ան ողորմած եւ գթած է. համբերատար ու շատ կարեկից: [Յլ. 2. 13]

ԴԱՆԴԱՂ ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

«Դանդաղ հեռուստացոյց» առումը, կը նկարագրէ երկարատեւ ուղիղ հեռարձակում՝ սովորաբար իրական ժամանակով ցուցադրուած: Այս ոճը ժողովրդականութիւն շահեցաւ 2009-ին, երբ Նորվեգիական (Norwegian) Հեռարձակման Կազմակերպութիւնը՝ ուղիղ եթերով ցուցադրեց, եօթը ժամ տեւողութեամբ, մէկ գնացքի ճամբորդութիւն մը: Այո՛, եօթը ժամ՝ գնացքի վրայ: Կը հնչէ ... ձանձրալի: Բայց դիտողներուն թիւը բարձրացաւ, որովհետեւ մարդիկ կը գտնէին տեսարանները՝ հմայիչ:

«Դանդաղ Հեռուստացոյցի» գաղափարն էր, ցոյց տալ բան մը ճիշդ փորձառութեան ընթացքով, ինչպէս կը պատահի եւ ո՛չ թէ այն արագութեամբ, որով կը ներկայացուի թատերական պատմութիւնը: Ան հիմնուած է անցումի եւ շարժումի վրայ, ո՛չ թէ լարուածութեան եւ ծրագիրի: Այս տեսակի ծրագիր մը՝ հրաւէր մըն է՝ կեանքի իւրաքանչիւր պահը վայելելու, փոխանակ զանոնք հաշուելու:

Բանաստեղծ՝ Ֆրանսիս Թամբսըն (Francis Thompson)՝ գրած է «խաղաղ ընթացքի» կամ «դանդաղ ընթացքի» մասին: Թամսըն ուզեց ըսել, որ Աստուած կը շարժի մտածուած, համբերատար եւ ճշգրիտ քայլերով: Այս դանդաղութիւնը կը տեսնենք՝ նոյնիսկ Աստուծոյ զգացումներուն մէջ: Աստուածաշունչին մէջ՝ Յովէլ մարգարէն, երբ հրաւիրեց ժողովուրդը ապաշխարութեան, ըսաւ. «Արդարեւ ան ողորմած եւ գթած է. համբերատար ու շատ կարեկից» (Յլ. 2. 13): Ի տարբերութիւն մեր թատերական պատմութիւններուն, որոնք շատ յաճախ կը կառավարուին բարկութեամբ եւ եսասիրութեամբ, Աստուած այլ ընթացք կ'ընտրէ: Իր բարկութիւնը դանդաղ կու գայ: Իր դէմ ապստամբած ժողովուրդի մը Աստուած կ'ըսէ. «Ձեր սիրտե՛րը պատռեցէք, եւ ո՛չ թէ ձեր հագուստները, ու վերադարձէ՛ք Տէրոջ՝ ձեր Աստուծոյն» (Հմ. 13):

Աստուած դանդաղ է բարկանալու եւ այս իրականութիւնը մեզ կը հրաւիրէ ամբողջ սիրտով՝ դարձի գալու իր մօտ:

Աղօթք - Սիրելի Աստուած, Դուն դանդաղ ե՛ս բարկութեան մէջ եւ ես յաւիտեան շնորհակա՛լ եմ: Ամէն:

Ե՞րբ եւ ինչպէ՞ս Աստուած դանդաղ շարժած է քու կեանքիդ մէջ: Ինչո՞ւ Աստուած դանդաղ է բարկանալու, բայց արագ՝ գթալու:

Իմ խորասու ձեր մէջ պիտի դնեմ: [Դեւ. 26. 11]

ՀՈՒՆՁՔՐԸ՝ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Է

Ալընը (*Alan*)՝ Հինգերորդ սերունդի պտուղներու ազարակապան մըն է, որ կը տնօրինէ իր ընտանիքին՝ կեռասի, դեղձի եւ խնձորի այգին: Տարիներու ընթացքին, իր ընտանիքը՝ կատարելութեան հասցուցած է, առաւելագոյն արդիւնք տուող ծառերու աճեցման արհեստով: Անոնք զգուշութեամբ ցանած են նորատունկ ծառեր՝ ապագային համար, շինած են եղջերուներէ պաշտպանող պատնէշ եւ նիւթական ծախսած են՝ յատուկ օդափոխիչներ գնելու, որոնք կ'օգնեն տաք պահելու օդը, երբ ցուրտը կը սպառնայ իրենց բերքին: Բայց հակառակ այս բոլոր միջոցառումներուն, լաւ բերք ունենալու երաշխիքը չունին: Որովհետեւ եղանակը, անոր անակնկալ փոփոխութիւնը եւ հիւանդութիւնները՝ իրենց վերահսկողութենէն դուրս են:

Բայց՝ ամբողջ բնութիւնը Աստուծոյ վերահսկողութեան տակ է: Ան գիտէ, թէ մեզի պէտք է նիւթական ապահովութիւն. օրինակ՝ առողջ բերք, բայց Ան կը քաջալերէ, որ աւելի բարձր նայինք՝ դէպի գերագոյն բարիքին՝ Իրեն: Դեւտացիներուն գիրքը կը պարունակէ օրէնքներ՝ զոհաբերութեան, երկրպագութեան, յարաբերութիւններու եւ ոճրային արդարութեան վերաբերեալ: Անոր առաջնորդութեան հետեւիլը՝ բարիք պիտի բերէ՝ ներառեալ առատ բերքի ապահովում (Դեւ. 26. 3-4), իսկ անհնազանդութիւնը անէծք ու թշնամիները պիտի վայելէին իրենց աշխատանքի պտուղը (Հմ. 16): Աստուծոյ օրհնութիւնը կը ներառէ՝ առատ բերքէն աւելի (Հմ. 10), խոստում մը՝ իր ժողովուրդին հետ բնակելու (Հմ. 11) եւ «ուշադրութիւն դարձնելու» անոնց (Հմ. 9):

Իսրայէլացիները ձախողեցան դարձեալ ու դարձեալ: Նոյնպէս մենք պիտի ձախողինք: Բայց կրնանք ապաշխարել, հնազանդիլ եւ ետ դառնալ՝ վայելելու իր ներկայութեան պարգեւը (Հմ. 40-42), որ յայտնուած է Յիսուսի մէջ եւ հիմա՝ կը յայտնուի Սուրբ Հոգիին միջոցով:

Աղօթք - Սիրելի Աստուած, թո՛ղ որ Զու մօտդ բնակիմ, մինչ կը հետեւիմ Զու կեանքիդ օրինակին: Ամէն:
Ի՛նչ կերպերով կը փնտռես խաղաղութիւն եւ ապահովութիւն: Ինչպէ՛ս կ'երեւի քեզի՝ Աստուծոյ ներկայութեան եւ Իր ուղիներով կեանք ապրիլը:

Բանասարկութեան գացողը գաղտնիքը կը յայտնէ, իսկ հաւատարիմ հոգի ունեցողը բանը կը ծածկէ: [Առ. 11. 13]

ԴԱՏԱՐԿ ՈՒՌԵՆԻ

Երբ Թոմաս (Tomáš) կը բացատրէր, թէ որքա՛ն արժէքաւոր կը նկատէր մեծ տարիք ունեցող խորհրդատուի մը իր հետ անցուցած ժամանակը. մէկը որ կանոնաւոր կերպով կ'ուսնորդէր իր մտահոգութիւնները, Ան ըսաւ. «Ան՝ իմ դատարկ ուռենին է»: Երբ անոր տարակուսած նայեցայ, Թոմաս բացատրեց, որ այս արտայայտութիւնը՝ Սլովաք (Slovak) ասացուածք մըն է, որ կը նշանակէ՝ մէկը, որ գաղտնիքին կը պահէ: Իր էութեամբ՝ այդ մարդը նման է՝ ուռենի ծառի մը, որ գաղտնի տեղեկութիւնները ապահով կերպով կը պահէ իր միջուկին մէջ:

Մեծ գանձ մըն է՝ ունենալ մէկը, որուն կրնանք վստահիլ մեր ամենախոր վախերն ու ձգտումները: Հաւանաբար իր անձնական փորձառութենէն ելլելով, Առակաց գիրքին մէջ՝ ուր շեշտուած է խօսքի զօրութիւնը, Սողոմոն թագաւոր գովեց զսպուածութիւն ցուցաբերող անհատը՝ մէկը, որ կրնայ «լռել» (Առ. 11. 12): Ան նոյնպէս հակադրեց երկու տեսակ մարդոց. «Բանասարկութեան գացողը գաղտնիքը կը յայտնէ, իսկ հաւատարիմ հոգի ունեցողը բանը կը ծածկէ» (Հմ. 13): Այս համեմատութիւնը օգտակար յիշեցում մըն է, որ հարկ է զգուշաւոր ըլլալ՝ անձնական խօսակցութիւններու նկատմամբ, թէեւ երբեմն պէ՛տք է խօսիլ, երբ լուրջ մտահոգութիւն ունինք՝ մէկու մը ապահովութեան համար:

Մեր թուային աշխարհին մէջ, ուր տեղեկութիւն տարածելը դիւրին է եւ արագ, կրնայ փորձութիւն ըլլալ (եւ դիւրին) բաժնեկցիլ «հետաքրքիր» մանրամասնութիւններ, որոնք կրնան արձագանգ յառաջացնել: Բայց բամբասանքը՝ ո՛չ միայն վնաս կու տայ այն մարդուն, որ վստահեցաւ քեզի բաժնեկցելով գաղտնիք մը, այլեւ՝ լուրջ վնաս կը հասցնէ յարաբերութիւններուն, երբ վստահութիւնը խախտուի:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրե՛մ, օգնե՛ ինձի պատասխանատու կերպով պահել ուրիշներու խօսքերը: Ամէն:
Ո՞վ է ան՝ որ կը մարմնաւորէ «դատարկ ուռենի» ըլլալու իտեալը: Ինչպե՛ս կրնաս պատասխանատու կերպով վերաբերիլ ուրիշներու խօսքին:

Պայքարեցայ բարի պայքարը, աւարտեցի ընթացքը, պահեցի հաւատքը: [Բ. Տիմ. 4. 7]

ՈՒԺ՝ ՅԱՐԱՏԵԻԼՈՒ

Մարք (Mark) - մարաթոն վազող մը՝ եւ նուիրեալ հովիւ մը, որ 35 տարուան ընթացքին երկու եկեղեցիներու ծառայեց - վերջերս հանգստեան կոչուեցաւ: Անոր նուիրուած ընծաներէն մէկը՝ մարաթոնի զոյգ մը վազելու նոր կօշիկներ էր: Ես Մարքին հետ անգամ մը վազեցի՝ աւելի քան քսան տարիներ առաջ, բայց իր կեանքին ընթացքին՝ ան բազմաթիւ քաղաքներու մէջ վազած է 26.2 մղոն երկարութիւն ունեցող մարաթոնը: Մարքի հանգստեան կոչուելու առիթով կազմակերպուած յատուկ տօնակատարութեան ընթացքին՝ համայնքէն եւ եկեղեցիներէն մարդիկ՝ իրենց գնահատանքը յայտնեցին իր հաւատարիմ ծառայութեան համար: Աստուծոյ զօրութեամբ եւ շնորհքով, Մարք իր ընթացքը լաւ կերպով աւարտեց:

Կեանքը աւելի մարաթոնի կը նմանի՝ քա՛ն արագ վազքի: Շատ ժամանակ կը յոգնինք եւ կ'ուզենք հրաժարիլ: Բայց Աստուծոյ շնորհքը եւ զօրութիւնը անվե՛րջ են՝ անոնց համար, որոնք կը վստահին Իրեն: Երբ բանտարկուած Պօղոս առաքեալ կը մօտենար իր կեանքի վախճանին (Բ. Տիմ. 4. 6), քաջալերեց իր սիրելի աշակերտը՝ Տիմոթէոսը. «Պայքարեցայ բարի պայքարը, աւարտեցի ընթացքը, պահեցի հաւատքը» (Հմ. 7): Կեանքի ճամբաները մեզ կ'առաջնորդեն տարբեր վայրեր: Բայց անկախ անկէ, թէ ո՞ր փուլին հասած ենք մեր ճամբորդութեան մէջ, միշտ օգտակար է յիշել թէ հաւատքով դիմանալը անհրաժեշտ է եւ պարգեւաբեր (Հմ. 8): Աստուած մեր զօրութեան աղբիւրն է (Հմ. 17) եւ Իր շնորհքով, Ան «պիտի ազատէ ու փրկէ՝ իր երկնային թագաւորութեան հասցնելով» (Հմ. 18):

Աղօթք - Սիրելի Յայ՛ր, կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի յիշելու, որ Զեզի վստահողները արժանի են գերբնական զօրութեան - «անոնք պիտի վազեն ու չոգնին, պիտի քալեն ու չպարտասին»: Ամէն: **Ե՛րբ զգացած ես Աստուծոյ զօրութիւնը՝ նոյնիսկ երբ ուզած ես թողուլ ամէն ինչ: Ինչպե՛ս կրնայ ուրիշներու Յոգիով լեցուն դիմանալը՝ քաջալերե՛լ քեզ:**

Սուրբ Հոգիին ձեր վրայ եկած ատենը՝ զօրութիւն պիտի ստանաք, եւ ինծի համար վկաներ պիտի ըլլաք ... մինչեւ երկրի ծայրերը: [Գործք 1. 8]

ԵՐԿՐԻ ԾԱՅՐԵՐԸ

Քիրապաթի (*Kirabati*), Խաղաղական Ովկիանոսի մէջ կղզի երկիր մըն է, միակը աշխարհի մէջ, որ կը գտնուի մոլորակին չորս կիսագունդերուն մէջ: Քրիստոսի երեսուն երեք կղզիները՝ կը գտնուին թէ՛ հասարակած (Հարաւային եւ հիւսիսային կիսագունդերու միջեւ), թէ՛ 180° միջօրէական գիծին վրայ (արեւելեան եւ արեւմտեան կիսագունդերուն սահմանին): Նաեւ աշխարհի ամենահեռաւոր պետութիւններէն մէկն է:

Մենք կը ծառայենք Աստուծոյ մը, որ հոգ կը տանի այս հեռաւոր վայրերուն: Երբ Յիսուս իր աշակերտները կը պատրաստէր՝ իր երկիրք վերադարձին, ան ըսաւ. «Երբ Սուրբ Հոգիին ձեր վրայ եկած ատենը՝ զօրութիւն պիտի ստանաք, եւ ինծի համար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմի մէջ, ամբողջ Հրէաստանի ու Սամարիայի մէջ, եւ մինչեւ երկրի ծայրերը» (Գործք 1.8): «Երկրի ծայրերը»՝ կոչ մըն է՝ Աւետարանը տանելու աշխարհի ամենէն մեկուսացած անկիւնները: Բայց այդ կոչը սահմանափակուած չէ՛ր միայն հեռաւոր վայրերով: Ան ներառեց նաեւ իրենց ներկայ վայրը՝ Երուսաղէմը եւ մօտակայ շրջանները՝ Հրէաստանն ու Սամարիան:

Յիսուս այս բաժանումի խօսքերը տալէ ետք, ըսա՛ւ իր աշակերտներուն. «Մինչ կը նայէին՝ համբարձաւ, եւ ամպ մը վերցուց զայն անոնց աչքերէն» (Հմ. 9): Երկու հրեշտակներ երեւցան ու ըսին. «Այս Յիսուսը՝ որ երկիրք համբարձաւ ձեզմէ, նո՛յնպէս պիտի գայ ինչպէս տեսաք անոր երկիրք երթալը» (Հմ. 11):

Յիսուս Քրիստոսի աւետարանը ամենէն կարեւոր լուրն է, որ մարդ մը երբեւէ կրնայ լսել: Որպէս իր զեսպանները, մեր պատասխանատուութիւնն է՝ այդ լուրը փոխանցել: Սուրբ Հոգիին օգնութեամբ, կրնանք վստահ ըլլալ, որ բոլորը – մօտ եւ հեռու – հնարաւորութիւն ունին լսելու այդ լուրը:

Աղօթք - Սիրելի Հայր, կը խնդրե՛մ՝ իմ սիրտս լեցուր անոնց հանդէպ, որոնք դեռ չեն ճանչնար Զեզ: Ամէն::

Ի՞նչ կը նշանակէ՝ Յիսուսի վկան ըլլալ «մինչեւ երկրի ծայրերը»:
Ինչպ՛ս Անոր այս պատուերը կը մղէ մեզ տարածելու իր սերը ուրիշներուն:

Երբ մեկը ... ուխտագանց ըլլայ ... ան իր գործած մեղքը թող խոստովանի եւ իր յանցանքին վնասը լման թող հատուցանէ: [Թ. 5. 6-7]

ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆԸ՝ ԿԱՐԵՒՈՐ Է

Դատաւոր մը՝ յատուկ մօտեցում մը գործածեց՝ խանութէն գողութիւն ընողները դատելու: Ան դատապարտեց ու տեղական շուկային կայանատեղիին մէջ ինքնաշարժներ լուալու պատիժը տուաւ անոնց, որպէ՛ս հասարակական ծառայութիւն: Իր նպատակը ա՛յն էր, որ այս փորձառութիւնը՝ գողութենէ ե՛տ պահէ անոնց եւ յստակ կերպով ցոյց տայ յանցանքներ գործելու հետեւանքները: Ան շեշտեց, որ գործուած արարքներուն՝ հետեւանքներ կան եւ հաշուետուութիւնը՝ կարելոր է:

Այս դատավճիռը՝ կը յիշեցնէ թուոց 5. 6-7-ի ուսուցումը. «Երբ մէկը ... ուխտագանց ըլլայ ... ան իր գործած մեղքը թող խոստովանի եւ իր յանցանքին վնասը լման թող հատուցանէ»: Այս համարներուն մէջ կը տեսնենք, թէ Աստուած ինչքա՛ն մեծ կարեւորութիւն կու տայ՝ սխալը ճանչնալու, մեղքը խոստովանելու եւ վերականգնումի փնտռութիւն: Այս ամենը կը շեշտէ նաեւ կարելոր ճշմարտութիւն մը. ամէն մեղք եւ յանցանք՝ անհաւատարմութիւն կը յայտնաբերէ Իսրայէլի արժէքներուն ու այդ մեղք գործող անձը «Տէրոջ հանդէպ ուխտագանց եղած է» (Հմ. 6):

Ինչպէս որ հրապարակային կերպով ինքնաշարժ լուալը՝ կը ծառայէ ի՛բր խոնարհեցնող հետեւանք մը ու կը քաջալերէ ինքնավերլուծութիւն եւ հաշուետուութիւն, Աստուած կոչ ըրաւ Իսրայէլի ժողովուրդին՝ ճշմարտապէս ճանչնալու իրենց մեղքերը՝ գանոնք խոստովանելով եւ ներում խնդրելով: Ըշմարիտ ազատութիւնը եկաւ՝ այն ատեն, երբ անոնք ընդունեցին եւ խոստովանեցան իրենց մեղքերը, պատրաստ եղան հատուցանելու եւ ընդունեցին Աստուծոյ շնորհքը:

Երբ կը ձգտինք հաշտութեան եւ՝ ուր անհրաժեշտ է հատուցում ընելու (տես՝ Մատթ. 5. 23-24, Ղուկ. 19. -8-10), Անոր ողորմութիւնը եւ ներումը կը վերականգնեն մեզ ամբողջութեամբ:

Աղօթք - Սիրելի Աստուած, ցոյց տուր ինծի, թէ ո՞ւր սխալած եմ եւ օգնէ՛, որ ձգտիմ հաշտութեան եւ հատուցումի: Ամէն:

Ինչպէ՛ս կրնաս ձգտիլ հաշտութեան՝ մեկու մը հետ, որուն դէմ սխալ գործած ես: Ինչո՞ւ հատուցումը այդքան կարելոր է:

Ո՛վ Տեր Աստուած, ես ո՞վ եմ ու իմ տունս ի՞նչ է, որ զիս միևչեւ հոս բերիր: [Ա. Մաաց. 17. 16]

ԽՈՆԱՐԶ ԶՈՅՈՂՈՒԹԻՒՆ

Օղաչու մը՝ եւ իր երկու դուստրերը, զբօսաշրջական թուիչքի մը սկսան, Սօլտօթնայէն (Soldotna), Ալասքա (Alaska): Բայց իրենց փոքր ինքնաթիռը երբէ՛ք չհասաւ իր նպատակակէտին: Երբ տեղացի օղաչուները սկսան փնտռել կորսուած օդանաւը, մէկը՝ Թէրրի Կոտէս (Terry Godes) անունով, ի վերջոյ նկատեց՝ գրեթէ ամբողջովին սուզուած ինքնաթիռի բեկորները, մասնակի սառած լճակի մը մէջ: Երեք ընտանիքի անդամները՝ ժամեր շարունակ կայնած էին օդանաւին թեւերուն վրայ: Բարեբախտաբար, շուտով Ազգային Պահակները՝ փրկեցին զանոնք: Կոտէս՝ խոնարհութեամբ զոհեց իր ժամանակն ու միջոցները ուրիշներու համար, որու շնորհիւ՝ այդ երեք կեանքերը փրկուեցան: Սոնարհաբար, ան ըսաւ. «Ես պարզապէս այն անձն էի, որ եղա՛յ առաջինը՝ տեսնելու ինքնաթիռը»:

Դաւիթ թագաւորը՝ շատ բան զոհեց Իսրայէլի ժողովուրդին համար, ներառեալ՝ կոիւ մղելը՝ փրկելու զանոնք թշնամիէն (Ա. Մնաց. 14. 8-17): Յետոյ, Նաթան մարգարէէն լսեց, որ իր սերունդէն՝ «յաւիտենական» թագաւորութիւն մը պիտի հաստատուի, որ կատարուեցաւ Քրիստոսի միջոցով (17. 14, տես՝ Դուկ. 1. 30-33): Ան խոնարհութեամբ պատասխանեց. «Ո՛վ Տէր Աստուած, ես ո՞վ եմ ու իմ տունս ի՞նչ է, որ զիս մինչեւ հոս բերիր» (Ա. Մնաց. 17. 16): Ան գիտէր, որ իր կեանքը հատատուած էր Աստուծոյ եւ իր կամքով (Հմ. 19), եւ որ ի վերջոյ Աստուած էր այն մէկը, որ կատարած էր փրկութեան եւ արիւնալի ձերբազատման գործը՝ Դաւիթին եւ իր ժողովուրդին համար (Հմ. 20-22):

Յիսուս «Ինքզինք խոնարհեցուց» եւ կտարեց գերագոյն զոհաբերութիւնը մեզի համար (Փիլ. 2. 8): Մինչ՝ Ան կ'օգնէ մեզի, մենք ալ՝ եկէ՛ք խոնարհ սիրտով զոհենք մեր կեանքը ուրիշներու համար:

Աղօթք - Սիրող Աստուած՝, օգնէ՛, որ խոնարհ սիրտով՝ զոհեմ անձս՝ Զեզի եւ ուրիշներուն համար: Ամէն:
Ինչո՞ւ խոնարհուիմք՝ Աստուծոյ առջեւ այդքան կարեւոր է: Ի՞նչ պիտի նշանակէ՝ ուրիշներու համար խոնարհաբար զոհուիլ:

Ուրախացէ՛ք ինձի հետ, որովհետեւ գտայ կորսնցուցած դրամս: [Ղուկ. 15. 9]

ԿՈՐՍՈՒԿԾ՝ ԲԱՅՑ ԶԻՍԱ՛ ԳՏՆՈՒԿԾ

Շատ տարիներ առաջ՝ երբ **Տորս հետ այցելեցի Էքուատորի (Ecuador) Ամազոն (Amazon)** շրջանը, հաճելի արագ նաևով ճամբորդեցինք դէպի փոքր գիւղ մը, դիտելու տեսարժան վայրեր եւ ծանօթանալու տեղացի ցեղերուն: Սիրելի հայրս՝ **ինձի ձեռագոծ զարդեր գնեց, որոնց մէջ էր՝** ականջի զոյգ մը **օղեր:** Այդ ականջի օղերը կը դնէի միայն առիթներով, օրինակ երբ **իմ տարեդարձիս առիթով՝ քրոջս այցելեցի:** Երբ դարձայ ճամբորդութենէս, սարսափեցայ երբ գիտցայ՝, թէ ականջի օղերէս մէկը կորսնցուցած էի: Ամէն տեղ փնտռեցի:

Պարզապէ՛ս՝ ականջի օղ մըն էր, բայց զայն փոխարինելու համար պիտի ստիպուէի վերադառնալ մինչեւ Ամազոնի անտառը: Զարմանալիօրէն, երբ քոյրս վերադարձաւ այն ճաշարանը, ուր մենք ընթրիք ըրինք, տեսաւ՝ որ կորսուած ականջի օղս՝ գտնուած իրերու բաժինին մէջ էր: Խիստ ուրախացայ:

Յիսուս պատմեց առակ մը՝ կնոջ մը մասին, որ կորսնցուցած էր՝ իր արծաթ դրամը: Ան հանգիստ չէ՛ր կրնար ըլլալ, մինչե՛ւ որ չգտնէր այդ թանկարժէք դրամը: «Ո՞վ է այն կինը, որ ... ճրագ չի վառեր, տունը չ'աւելեր եւ ուշադրութեամբ փնտռեր, մինչեւ որ գտնէ» (Ղուկ. 15. 8): Իսկ երբ գտաւ դրամը, մեծ ուրախութեամբ լեցուեցաւ (Հմ. 9):

Յիսուս այս պատմութիւնը ըսաւ, ցոյց տալու համար, թէ **ինչքա՛ն թանկ ենք Աստուծոյ համար:** Ան «եկաւ՝ որպէսզի փնտռէ կորսուածը եւ փրկէ» (Ղուկ. 19. 10): Թէեւ մենք ժամանակին կորսուած էինք, բայց երկինքը ցնծաց, երբ գտնուեցանք:

Աղօթք - Սիրելի Աստուա՛ծ, շնորհակալ եմ, որ փնտռեցիր զի՛ս: Ամէն: **Ինչպե՛ս կը զգաս՝ իմանալով, որ թանկ ես Աստուծոյ համար:** **Ինչպե՛ս կը զգաս՝ իմանալով՝ որ երկինքը ուրախութիւն կ'ունենայ, երբ մենք կը գտնուինք:**

Պիտի ազատե՛ ... դժբախտն ալ, եւ ան՝ որ օգնական չունի:
[Սաղմ. 72. 12]

ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԱՎԿՑԻԼ՝ ՕԳՆԵԼՈՒ

2021-ին՝ Թալիպանները (Taliban) արագ նուաճեցին Աֆղանիստանի կառավարութիւնը, տասնեակ հազարաւորներ շրջափակուած մնացին առանց փախուստի միջոցի: Շատերը՝ մեկուսացած ու յուսահատ էին: Սովորական քաղաքացիներ սկսան գործի անցնիլ: Օրինակ՝ երիտասարդ մը Instagram-ի վրայ՝ արշաւ մը սկսաւ եւ հաւաքեց 7 միլիոն տողար՝ յատուկ թռիչքներու միջոցով՝ փախստականները երկրէն տարահանելու համար: Լրատուական աղբիւրներու ըսաւ. «Մենք մէկ կողմ դրինք քաղաքական բաժանումները եւ իրարու հետ միասին գործեցինք՝ զրկեալները փրկելու համար»: Անոնք որոշեցին նետուիլ վտանգի մէջ:

Բայց խնդիրը միայն Աֆղանիստան չէ՛: Աշխարհի երկնասլաց շէնքերով քաղաքներէն՝ մինչեւ հեռաւոր գիւղերը, բազմաթիւ մարդիկ միայնակ են, կքելով ծանր վիշտերու տակ: Տպաւորիչ է տեսնել թէ ինչպէ՛ս Աստուծոյ ուշադրութիւնը ուղղուած է դէպի այդ ցաւի ու յուսահատութեան վայրերը: Սաղմոսը կ'ըսէ. «Պիտի ազատե՛ ... դժբախտն ալ, եւ ան՝ որ օգնական չունի» (72. 12): Ու զարմանալի կերպով՝ Աստուծոյ օգնութիւնը յաճախ կու գայ մեր ձեռքերով ու մեր միջոցով: Սաղմոս 72-ը կը վերաբերի՝ թէ՛ Սողոմոն թագաւորի գործին եւ թէ՛ ալ Աստուծոյ գործին. երբեմն դժուար է զանազանել, թէ ո՞րը՝ որն է: Աստուած է՝ փրկարարն ու գործի շարժիչը. բայց Ան մեզ կը կանչէ՛ իր հետ շարժելու:

Երբ անարդարութեան կամ ցաւի միջավայրի մէջ կը գտնուինք, կրնանք միանալ Աստուծոյ, մոռտք գործելով կորստեալ վիճակներու կեդրոնը: Կրնանք հետեւիլ Աստուծոյ եւ երթալ այն վայրերը, ուր «ոչ մէկը կայ օգնելու համար»:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ խոստացար օգնել մեզի, եւ կը կանչես մեզ՝ միանալու Ձեզի՝ ուրիշներու օգնելու համար: Ամէն:

Ո՞ր իրավիճակի մէջ հանդիպեցար, ուր կարծես ռեւէ օգնող չկար:
Ինչպէ՛ս կրնաս միանալ Աստուծոյ՝ այդտեղ օգնելու համար:

Ընդունեցե՛ք զիրար, ... Աստուծոյ փառքին համար: [Քոռն. 15. 7]

ՔԱԼԵԼ՝ ՄԻԵՒՆՈՅՆ ՔԱՅԼՈՎ

Լիլիան Քոլոն (*Lillian Colon*), որ հասակ առած էր որբանոցի մէջ, չորս հարիւր պարողներէ առաջ անցաւ՝ տեղ գրաւելու համար աշխարհահռչակ պարախումբի մը մէջ: Ան երկար տարիներ մասնակցեցաւ այդ խումբին մէջ՝ իր խիստ համաչափ եւ համաժամանակեայ պարագիրով, մինչեւ իր քառասունականներու վերջը: Այսօր, եօթանասուն տարեկանին, երբ կը դասաւանդէ պար, իր աշակերտներուն կը փոխանցէ՝ իր մեծագոյն դասը, ճշգրիտ արուեստէն՝ աշխատակցիլ միասին: Ան ըսաւ. «Բեմի վրայ եւ անկէ դուրս, մեր կեանքերը՝ խոր կերպով կապուած են եւ բոլորս աւելի լաւ կ'ըլլանք, երբ զիրար կը զօրակցինք եւ հոգ կը տանինք իրարու»:

Պօղոս առաքեալը գիտէր այս սկսզբունքին կարեւորութիւնը: Տէր Յիսուս Քրիստոսի մէջ համերաշխութիւնը կ'առաջնորդէ իր ճշմարիտ նպատակին՝ Աստուծոյ փառաւորութեան: Պօղոս այս պատգամը փոխանցեց Հռոմի հաւատացեալներուն, թէ՛ Հրեաներուն եւ թէ՛ հեթանոսներուն, զիրենք քաջալերելու միութեան մէջ: «Ուրեմն համբերութեան ու մխիթարութեան Աստուածը թող շնորհէ, ձեզի համախոհ ըլլալ իրարու հետ՝ Քրիստոսու Յիսուսի համաձայն» (Հռոմ: 15. 5): Այսպէ՛ս՝ «որպէսզի միաբան ու միաբերան փառաբանենք Աստուած, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը» (Հմ. 6):

Մրցակից ձայները՝ այդ արդիւնքը չեն ունենար: Միասնական գովքով Աստուծոյ փառք տալը առանց ռեւէ անձի կամ խումբի նսեմացման, կը բացայայտէ Քրիստոսի մէջ միութեան իսկական նպատակը: Պօղոս գրեց. «Ուստի ընդունեցե՛ք զիրար, ինչպէս Քրիստոս ալ ընդունեց մեզ՝ Աստուծոյ փառքին համար» (Հմ. 7): Երբ Աստուծմէ օգնութիւն կը հայցենք այս նպատակով, Ան կը ներշնչէ մեր միացեալ ձայնը, որպէսզի միասին քալենք ու զինք փառաւորենք:

Աղօթք - Սիրելի Աստուած, բա՛ց իմ սիրտս՝ միացեալ գովքի համար՝ ուրիշներու հետ: Ամէն:

Որո՞ւ ձայնը կրնաս միացնել Աստուծոյ գովքին: Ինչպէ՞ս կրնաս առաջնահերթութիւն տալ՝ միացեալ գովքին:

Ինչպես Մովսեսի հետ էի, այնպես ալ քեզի հետ պիտի ըլլամ:
[Յեւ. 3. 7]

ԱՆՅՆԵԼՈՒ ԳԵՏԵՐ

Ամէն տարի, Ապրիլ 24-ին, աշխարհացորիւ Հայ ժողովուրդը կ'ոգեկոչէ Հայկական Յեղասպանութիւնը: Կը վերջիչէ՛ այդ սարսափելի ու տառապանքի օրերը, ինչպէս նաեւ մէկ ու կէս միլիոնէ աւելի անմեղ զոհերը՝ այրեր, կիներ ու մանուկներ: Սրտաճմլիկ եւ դառն զգացումներով կը յիշատակենք՝ մեր պատմութեան ամենէն մութ եւ ցաւալի օրերը: Կը նշենք՝ թշնամիին վայրագ արարաքններուն հետեւանքով, այդ ողբերգական ու անմոռանալի օրերը, երբ ազգովին անցանք մահուան գետին ընդմէջէն:

Հին Իսրայէլի ժողովուրդը՝ նոյնպէս կարեւոր «գետանց» մը ունեցաւ՝ մտնելու համար խոստացեալ երկիրը: Սակայն Յորդանան գետը՝ լեցուն էր եւ կ'ողողէր իր բոլոր ակերը (Յեւ. 3. 15) եւ այս մարտահրաւէրը պիտի անցնէր անոնց հաւատքը: Աստուած Յեսուէ ըսաւ. «Այսօր պիտի սկսիմ ամբողջ Իսրայէլի աչքերուն առջեւ քեզ մեծցնել, որպէսզի գիտնան թէ ինչպէս Մովսէսի հետ էի, այնպէս ալ քեզի հետ պիտի ըլլամ» (Հմ. 7):

Յեսու ըսաւ ժողովուրդին. «Ահա՛ ամբողջ երկրի Տէրոջ ուխտին տապանակը ձեր առջեւէն պիտի անցնի Յորդանանի մէջ» (Հմ. 11): Քահանաները, տապանակը վերցնելով, ոտք դրին Յորդանան գետին մէջ, եւ «վերէն իջնող ջուրերը կայնեցան» (Հմ. 15-16): Ամբողջ ժողովուրդը՝ չոր գետահատակով անցաւ միւս կողմ (Հմ. 17):

Երբեմն մեր կեանքին մէջ ալ «գետանցումի» պահեր կ'ըլլան՝ անհնարին թուացող իրավիճակներ, որոնք կրնան աճեցնել մեր հաւատքը, եթէ դառնանք դէպի Ան՝ որ ճամբայ կը բանայ մեզի համար: Ի՛նչ ալ ըլլայ մեր դիմաց, Մովսէսին, Յեսուին եւ իսրայելացիներուն հետ եղող Աստուածը՝ մեզի համար ալ ճանապարհ կը բանայ, ինչպէս որ ըրաւ մեր պատմութեան ամենէն մութ օրերէն ետք, մեզի տալով նոր կեանք, նոր յոյս եւ նոր կարելիութիւններ:

Միշտ յիշենք որ Աստուած՝ մեզ ալ անցուցած է մահուան ու տառապանքի գետին ու մեզի հետ է:

Աղօթք - Յայր, շնորհակալ եմ՝ որ ճամբայ կը բանաս մեր առջեւ՝ իւրաքանչիւր գետի դիմաց, ներառեալ մեր Ապրիլեան Եղեռնին: Ամէն:

Յեղասպանութեան փորձառութեամբ՝ տեսած ենք Աստուծոյ գորութիւնն ու ներկայութիւնը մեր կողքին:

Ունեցե՛ք այն մտածումը՝ որ Քրիստոս Յիսուսի մեջ էր: [Փիլ. 2. 5]

ԾԱՌԱՅԵ՛Լ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՆՄԱՆ

Երբ հիւանդ մը ացելեցի հիւանդանոցը, ուշադրութիւնս գրաւեց՝ երիտասարդ բժիշկ մը, որ կեցած էր սկսնակ բժիշկներու խմբակին հետ: Անոնք կը լսէին աւելի փորձառու բժիշկի մը բացատրութիւնները՝ հիւանդին առողջութեան մասին: Յանկարծ, հիւանդը անհանգիստ ձայնով յայտարարեց, որ պէտք ունի արտաքնոցը գործածելու, բայց չէ՛ր կրնար ելլել անկողինէն: Իրականութեան մէջ՝ չէ՛ր կրնար սպասել՝ մինչեւ որ խնամակալ մը կանչուէր:

Այդ խառնաշփոթ պահուն, երիտասարդ բժիշկը՝ վերցուց մահճակալային ամանը եւ օգնեց հիւանդին: Երբ խնամակալը ժամանեց, զարմացաւ տեսնելով, որ արդէն օգնութիւն տրուած էր հիւանդին: Առաջնորդ բժիշկը հպարտութեամբ յայտնե՛ց, որ այդ գործը կատարած էր՝ երիտասարդ բժիշկը:

Յիսուս չկառչեցաւ Իր Աստուածային վիճակին եւ չմերժեց մարդոց ծառայել: Թէեւ Ան՝ «Աստուծոյ կերպարանքը ունէր, յափշտակութիւն մը չհամարեց Աստուծոյ հաւասար ըլլալը» (Փիլ. 2. 6): Մարդու կերպարանքով՝ Քրիստոս կրնար դառնալ մեր մեղքի զոհը եւ Իր անձը զոհել մեր փոխարէն: Ան տեսաւ մեր օգնութեան եւ փրկութեան կարիքը եւ խոնարհաբար Իր կեանքը դրաւ (Հմ. 8): Պօղոս գրեց. «Ունայնացուց ինքզինք, իր վրայ առաւ ծառայի մը կերպարանքը» (Հմ. 7):

Մենք ալ կոչուած ենք՝ ընդօրինակելու Յիսուսի մտածելակերպը եւ զոհաբերական ոճը՝ մեր յարաբերութիւններուն մէջ: Ինչպէ՞ս որ Ան մեզի կը ծառայէ, եկէ՛ք մենք ալ խոնարհաբար ծառայենք ուրիշներուն, նո՛յնիսկ՝ եթէ այդ գործը աննշան կամ ցած կարծուի:

Աղօթք - Տէր Յիսուս, շնորհակալ եմ, որ խոնարհաբար Քու անձդ տուիր՝ իմ մեղքերուս համար: Կը խնդրե՛մ՝ ցոյց տուր, թէ ինչպէ՛ս կրնամ զոհաբերական կերպով ծառայել ուրիշներու: Ամէն:
Ինչպէ՛ս կրնաս արտայայտել Յիսուսի մտածելակերպը եւ վարմունքը: Ի՞նչ ձեռով կրնաս խոնարհաբար ծառայել մէկուն այսօր:

Յորդողեցէ՛ք զիրար եւ շինեցէ՛ք զիրար, ինչպէս արդէն կ'ընէք: [Ա. Թես. 5. 11]

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ՉԱՆՔԵՐ

Այրիւ 2019-ին, հրդեհ մը բռնկեցաւ Փարիզի նշանաւոր միջնադարեան կոթողական Նօթր-Տամ (Notre-Dame) տաճարին մէջ: Կրակը՝ ամբողջութեամբ ոչնչացուց սրածայր աշտարակը եւ «անտառ» մը կազմող՝ կաղնիի գերանները, որոնք վեր կը բռնէին կապարով շինուած տանիքը: Գրեթէ անմիջապէս, վերանորոգման ծրագիրները սկսան ձեւաւորուիլ: Աշխարհի տարբեր անկիւններէն առատ նուիրատուութիւններ հոսեցան, եւ արհեստաւորները ձեռնարկեցին շինութեան՝ օգտագործելով նոյն տեսակի փայտ ու քար եւ նոյն շինարարական եղանակը, ինչ որ սկզբնական շինութեան ժամանակ գործածուած էին:

Երբ Նաբուգոթոնոսոր հրամայեց իր զօրքին՝ այրել Աստուծոյ տաճարը՝ Երուսաղէմի պաշարման ընթացքին (Բ. Ա. 586), ամբողջ շինութիւնը փլուզուեցաւ (Դ. Թագ. 25. 9): Տասնամեակներու գերութենէ ետք, երբ ժողովուրդը վերադարձաւ Երուսաղէմ, անոնք «Աստուծոյ տան յօժարակամ ընծաներ տուին, որպէսզի զայն իր վայրին վրայ վերականգնեն» (Եզ. 2. 68):

Ձոհասեղանը գետեղելէ ետք, անոնք «քարակոփներուն ու հիւսններուն դրամ տուին» եւ ծովու ճամբով «Լիբանանէն մայրիի փայտեր բերին» տաճարին հիմերը դնելու համար (3. 7): Թէեւ անոնց աշխատանքը ընդիմութեան ու խափանումներու դէմ կանգնեցաւ, սակայն գործը վերջացաւ եւ Աստուծոյ ժողովուրդը դարձեալ պաշտե՛ց Աստուած՝ իր տաճարին մէջ (Եզ. 6. 14-22):

Որպէս Յիսուսի հաւատացողներ մենք միասնաբար, Աստուծոյ տաճարն ենք (Ա. Կորնթ. 3. 16-17): Աստուած մեզ օժտած է՝ անընդհատ զիրար վերականգնելու եւ «շինելու» կարողութեամբ՝ ո՛չ թէ փայտով կամ քարով, այլ՝ խրախուսող խօսքերով, աղօթքով եւ հոգեւոր պարգեւներով (Ա. Թես. 5. 11):

Աղօթք - Սիրող Յայր, շնորհակալ եմ, որ կը տրամադրես՝ ի՞նչ որ պէտք ունինք՝ զիրար շինելու եւ վերականգնելու, որպէս Զու տաճարդ: Ամէն:
Ինչպէ՞ս կ'օգնեն Քրիստոսի մէջ եղող ուրիշ հաւատացեալներուն աման: Ի՞նչ ձեռով՝ մէկը քեզ շինած է վերջերս:

Անկէ դարձեալ ուրիշ անօթ մը շինեց, ինչպէս բրուտին հաճելի եղաւ ընել: [Եր. 18. 4]

ՀՆԱԶԱՆԴ ԵՒ ԽԱՂԱԴ

Ատրլէյտ Փոլարտի (*Adelaide Pollard*) մասին շատ բան ծանօթ չէ՛, եւ հաւանաբար՝ այս է կարեւորը: Ան խոնարհ Աստուծոյ ծառայ մըն էր, որ երբէ՛ք փառք կամ ճանաչում չփնտռեց՝ իր անձին համար: Քառասուն տարեկանին, ուժեղ կոչում զգաց՝ միսիոնար ըլլալու՝ Ափրիկէի մէջ, բայց այդ դուռը փակուեցաւ իր դիմաց: Ատրլէյտ՝ խորապէս յուսալքուեցաւ: Սակայն յիշեց Աստուածաշունչի սա՛ համարը. «Ինչպէս է կաւը բրուտին ձեռքին մէջ, այնպէս էք դուք իմ ձեռքիս մէջ» (Եր. 18. 6): Այդ ժամանակ, ան գրեց սիրուած երգ մը, որու խօսքերը այսպէս են. «Դու ես բրուտը, մինչ կաւն եմ ես»:

Երեմիայի մէջ եղող պատկերը այսօր մեծ բան ունի ըսելիք մեր կեանքերուն մէջ. «Կաւէ շինած անօթը բրուտին ձեռքին մէջ փճացաւ. ինք ալ անկէ դարձեալ ուրիշ անօթ մը շինեց, ինչպէս բրուտին հաճելի եղաւ ընել» (Եր. 18. 4): Այս՝ պատկեր մըն է, թէ ինչպէ՛ս Աստուած մեզ վերածեաւորել կ'ուզէ՝ Իր աւելի լաւ նպատակին համաձայն: Ինչ որ ալ մենք կարծենք, թէ պէտք է ըլլանք կամ ընենք, Աստուած կրնայ ուրի՛շ ձեւ մը ունենալ մեր կեանքին համար. «Ինչպէս է կաւը բրուտին ձեռքին մէջ, այնպէս էք դուք իմ ձեռքիս մէջ» (Հմ. 6):

Ի վերջոյ, Ատրլէյտ գնաց Ափրիկէ, բայց գուցէ՛ Աստուծոյ «ձեւը» իր կեանքին համար աւելի շատ կապուած էր ուրիշ բաներու հետ. օրինակ՝ այդ երգը գրելը. «Վարուէ ինձ հետ, Տէր, ուզածիդ պէս», որ միլիոնաւոր մարդոց ոգեշնչած է՝ երկա՛ր տարիներու ընթացքին: Երբ մեր կեանքի որոշ պարագաները կը ստիպեն մեզ «սպասելու», կարեւոր է մտածել՝ արդե՞օք Աստուած մեզ կը ձեւաւորէ այդ ժամանակ: Շատ աւելի լաւ է թողուլ Աստուծոյ՝ որ ինք Իր ուզած ձեւով առաջնորդէ մեզ եւ մենք՝ հնազանդ ու խաղաղ՝ սպասենք Իր աւելի մեծ նպատակին:

Աղօթք - Սիրելի Աստուած, օգնէ՛ ինձի՝ հնազանդ մնալու՝ քու բրուտի ձեռքերուդ մէջ: Ամեն:

Ի՞նչ ձեւով յուսալքուած ես այսօր՝ քու կեանքիդ նպատակակետերուդ մէջ: Ինչպէ՞ս կրնաս թոյլ տալ, որ Աստուած առաջնորդէ ու ձեւաւորէ քու կեանքդ:

Տերը քու ելքդ ու մուտքդ պիտի պահպանե՝ հիմա եւ յաւիտեան: [Սաղմ. 121. 8]

ԱՍՏՈՒԾՈՅ ՏԵՍԱԴՊՇՏԻՆ ՄԷՁ

Թրինա (Trina) անվճար տոմս մը ստացաւ՝ լիովին լեցուն միջոցառման մը համար եւ զայն դրաւ իր Աստուածաշունչին մէջ: Յետոյ, իր որդին տեսաւ զինք՝ խելագար վիճակի մէջ՝ բան մը կը փնտռէր պահարաններուն մէջ: Երբ ան բացատրեց, որ Աստուածաշունչը կորսնցուցած է, տղան հարցուց, թէ ինչո՞ւ ուտելիքի պահարանին մէջ կը փնտռէ: Ան ըսաւ. «Որովհետեւ՝ ամէն տեղ ստուգեցի եւ միջոցառումը կը սկսի կէս ժամէն: Չեմ ուզեր մէկ վայրկեան ի՛նչ փախցնել»: Տղան ծիծաղելով ըսաւ. «Շունչ ա՛ռ, Մամա: Կարծե՛մ՝ ՓՎ՝ «փախցնելու վախը» ունիս»: Ան ալ ժպտեցաւ: Երբ որդին սկսաւ օգնել փնտռութիւն, Թրինայի ամուսինը նե՛րս մտաւ: «Աստուածաշունչդ ինքնաշարժին մէջ ձգած էիր» ըսաւ՝ զայն ձեռքին բռնած:

Մինչ սխալ չէ՞ վայելել անակնկալ օրհնութիւններ, մեծ յաջողութիւններ կամ եզակի առիթներ, բայց հաճոյք փնտռելը՝ շատ դիւրին ձեւով կրնայ վերածուիլ վախի՝ բան մը կորսնցնելու: Երբեմն կրնայ նոյնիսկ փորձանք մը ըլլալ մտածել, թէ Աստուած մեզ կը մոռնայ կամ Իր տեսադաշտէն դուրս մնացած ենք: Բայց «երկինքի ու երկրի ստեղծիչը» (Սաղմ. 121. 2) միշտ դիտող եւ երբէ՛ք չմոռափող մեր պահապանն ու հոգատարն է (Հմ. 3-7): Ուստի՝ պէտք չունինք վախնալու շեղումներէ, ուշացումներէ կամ կորսուած առիթներէ: Աստուած պիտի հսկէ մեր «եւքն ու մուտքը՝ հիմա եւ յաւիտեան» (Հմ. 8):

Տագնապի պահերուն, առատութեան շրջանի մէջ եւ կեանքի առօրեայ սովորական պահերուն՝ Աստուած միշտ Իր աչքը պահած է քու վրադ: Դուն ոչի՛նչ պիտի փախցնես, որ Աստուած ծրագրած է քեզի համար:

Աղօթք - Հաւատարիմ Աստուա՛ծ, շնորհակալ եմ, որ միշտ կը տեսնես զիս: Ամէն:

Ինչպէ՞ս կը փոխե քու կեանքդ, գիտնալը՝ թէ Աստուծոյ տեսադաշտին մէջ ես: Ե՞րբ փախցուցած առիթ մը՝ ի վերջոյ օրհնութիւն դարձած է քեզի համար:

Աստուած ինձի անիրաւութիւն ըրաւ, եւ իր ցանցով զիս շրջապատեց: [Յոբ 19. 6]

ՔՈՂԱՐԿՈՒԱԾ ԱՂՕԹՔ

Աշուիթցի (*Auschwitz*) սարսափներէն յետոյ, էլի Ուելյզըլ (*Elie Wiesel*) կորսնցուց իր հաւատքը: «Ո՞ւր էիր. ո՞վ՛ բարեգութ Աստուած» ան հարցուց, յիշելով այն չարիքը, որ ինք եւ ուրիշներ կրեցին: «Մանկութեանս մէջ՝ մարդոցմէ շատ բան չէի ակնկալեր: Բայց Քեզմէ՛ ամէն ինչ կը սպասեմ»:

Եւ սակայն, Ուելյզըլ՝ ի վերջոյ գիտակցեցաւ, որ իր հաւատքը՝ իրականութեան մէջ երբէ՛ք չէ ձգած գինք: Լրագրողի մը ըսաւ. «Քանի որ Աստուծոյ կը հաւատայի բարկացած էի Իրմէ: Եւ տակաւին եմ»: Չե՛ս գայրանար անկէ, որուն գոյութեան չե՛ս հաւատար:

Մենք անհանգիստ կը զգանք՝ Աստուծոյ հանդէպ բարկութիւն արտայայտելէ, սակայն Աստուածաշունչի կերպարները՝ նոյնը ըրած են: Երեմիա մարգարէն աղաղակեց. «Զիս հրապուրեցիր, ո՞վ Տէր» (20. 7): Դաւիթ գրեց. «Ո՞վ Տէր, մինչեւ ե՞րբ. գիս ընդմիջտ պիտի մոռնաս» (Սաղմ. 13. 1): Յոբ ըսաւ. «Աստուած ինձի անիրաւութիւն ըրաւ, եւ իր ցանցով զիս շրջապատեց» (19. 6): Մինչ Յոբ տեղեակ չէր, որ Սատանան մասնակցութիւն ունէր իր չարչարանքներուն, ան Աստուծոյ մեղադրանքներ ուղղեց անարդար ու դաժան ըլլալու համար (10. 3), եւ նոյնիսկ պահանջեց, որ Աստուած դատարան ներկայանայ (31. 35): Թէպետե՛ւ Յոբ վերջապէս հասկցաւ իր սահմանափակ ըմբռնումը (42. 3), բայց Աստուած երբէ՛ք չմերժեց կամ չկշտամբեց անոր զգացումները:

Հակառակ իր հարցերուն՝ էլի Ուելյզըլ աղօթեց. «Եկուր՝ համաձայնի՛նք: Անհանդուրժելի է այսքա՛ն քեզմէ բաժնուած մնալը»: Մենք ալ երբեմն կրնանք գայրացած ըլլալ Աստուծմէ՛ աշխարհի մէջ չարութիւնները չկասեցնելու համար: Բայց այդ գայրոյթը Անոր յայտնելը, կրնայ աղօթք ըլլալ՝ քօղարկուած ձեւով: Այսպէս, մենք կը մնանք մօտիկ Անոր, որ կ'ուզէ, որ բերենք Իր առջեւ՝ ո՛չ միայն մեր գոհաբանական խօսքերը, ա՛յլ նաեւ մեր բարկութիւնն ու անկեղծ սիրտերը:

Աղօթք - Յայր, չեմ հասկնար՝ թէ ինչո՞ւ չե՛ս միջամտեր աշխարհի չարչարանքներուն: Բարկութիւնս Զեզի կը բերեմ՝ վստահելով Զեզի: Ամէն: Ինչպե՞ս Յոբի պատմութիւնը կրնայ օգնել մեզ՝ արտայայտելու եւ միեւնոյն ժամանակ չկորսնցնելու մեր տեսլականը:

Հիմա գործերու Տերը սա՛ կը յայտարարէ. «Մտածեցէ՛ք ձեր ընթացքին մասին»: [Ան. 1. 5]

ՅԵՏԵՒԷ՛ ԱՍՏՈՒԾՈՅ ԵԱՄԲՈՒՆ

Քէն (Ken) կը խոստափէր իր շէնքին մէջ բնակող գաղթական աշխատատեղերէն: Անոնց վարմունքը ու կեանքի սովորութիւնները իր սովորութիւններէն այնքա՛ն տարբեր էին ու կը նեղացնէին զինք: Սակայն օր մը, երբ Քէն կ’աղօթէր, միտք մը խոցեց զինք. «Տարիներէ ի վեր՝ անոնք քու հարեւաններդ են, բայց նոյնի՛սկ մէկ անգամ չէ՛ս բաժնեկցած անոնց հետ Աւետարանը: Լրջօրէն մտածէ՛ թէ ի՞նչ տեսակ վերաբերում ունիս անոնց նկատմամբ»:

Աստուածշունչը մեզի կը պատմէ նման զգուշացումի մը մասին, երբ Աստուած Իր ժողովուրդը, սաստեց ըսելով. «Մտածեցէ՛ք ձեր ընթացքին մասին» (Ան. 1. 7): Բաբելոնի գերութենէն ետք, Իսրայէլի ժողովուրդը վերադարձաւ Երուսաղէմ՝ Աստուծոյ տաճարը վերաշինելու առաքելութեամբ: Աստուած «Պարսկաստանի Կիւրոս թագաւորին հոգին արթնցուց» (Եզ. 1. 1), որ հրաման տուաւ կառուցման եւ նոյնիսկ դրամական միջոցներ տրամադրեց (Հմ. 2-4): Բայց երբ մարդիկ միայն հիմերը դրին, ընդհմութիւն սկսաւ (Եզ. 4. 1-5), ու ժողովուրդը լքեց ծրագիրը՝ տասն չորս տարիներ:

Անգէ մարգարէին միջոցով՝ Աստուած ըսաւ անոնց. «Մտածեցէ՛ք ձեր ընթացքին մասին: Իմ տունս՝ աւերակ է, մինչ ձեզմէ իւրաքանչիւրը իր տունը կը փութայ» (Ան. 1. 7, 9): Այլ խօսքով Աստուած կ’ըսէր. «Մտածեցէ՛ք լրջօրէն՝ թէ ինչպէ՞ս կ’ապրիք: Կը կատարէ՞ք այն՝ ինչ որ ես կ’ուզեմ ձեզմէ»:

Աստուած խրատեց Իր ժողովուրդը (Հմ. 5-11), բայց երբ վերսկսան շինարարութեան, Աստուած գիրենք քաջալերեց. «Իմ հոգիս ձեր մէջ կը կենայ. մի՛ վախնաք» (Ան. 2. 4-5): Տաճարը ամբողջացաւ՝ հինգ տարիներէ պակաս ժամանակ խլելով:

Ի՞նչ մարզի մէջ՝ պէտք է լրջօրէն մտածենք՝ մեր ընթացքին մասին: Աղօթելով՝ հարցնենք Աստուծոյ՝ ի՞նչ պէտք է ուղղենք եւ ինչպէ՞ս հետեւի՛նք Իր տուած ուղղութեան:

Աղօթք - Հայր, օգնէ՛ ինձի՝ քու ճամբուդ հետեւելու: Ամէն:
Ինչպէ՞ս Աստուծոյ ճամբան տարբեր է՝ քու ճամբայդ: Ի՞նչ պէտք է փոխես՝ քու կեանքիդ մէջ՝ ճշմարտապէս հնազանդ ըլլալու համար:

Աստուած իր պատկերով ստեղծեց մարդը. Աստուծոյ պատկերով ստեղծեց գայն, արու եւ էգ ստեղծեց գանոսը: [Ծն. 1. 27]

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՏԱՐԵԱԼ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1960-ական թուականներուն, քանի մը Ամերիկեան պետական գրասենեակներու համար պիտանի մելանով գրիչներ արտադրող ընկերութիւն մը՝ Հիրցալ գրիչները արտադրել՝ պահանջուած չափանիշով: Ո՛ւստի, Ընդհանուր Ծառայութիւններու Տնօրէնութիւնը՝ դիմեց Կոյրերու Ազգային Ճարտարարուեստ (ԿԱՃ)-ին (National Industries of the Blind – NIB), որպէսզի արտադրեն 70 միլիոն գրիչ՝ հակառակ անոր որ ԿԱՃ-ը երբէ՛ք նախապէս գրիչ չէր արտադրած: Անոնք ընդունեցին այս մարտահրաւէրը եւ յաջողեցան կատարել բոլոր պահանջները: 1967-էն ի վեր, կոյր գործաւորներ արտադրած են այս գրիչները, որոնք լայնօրէն օգտագործուած են բանակային անձնակազմին կողմէ: Գրիչները կրնան գրել գլխիվայր, գծել մէկ մղոն երկար գիծ մը, եւ տոկալ ծայրայեղ ջերմաստիճաններու:

Ծննդոց 1. 27-ն կը յիշեցնէ, որ իւրաքանչիւրս ստեղծուած ենք Աստուծոյ կատարեալ չափանիշներուն համաձայն: «Աստուած իր պատկերով ստեղծեց մարդը. Աստուծոյ պատկերով ստեղծեց գայն, արու եւ էգ ստեղծեց զանոնք»: Մեր ստեղծուած ըլլալը կը յայտնէ Աստուծոյ բնոյթը եւ խառնուածքը: Ստեղծուած ըլլալով իր պատկերով, իւրաքանչիւր մարդ ունի՝ բնածին արժանապնտութիւն եւ արժէք: Աստուած ըսաւ, թէ իւրաքանչիւր անձի պատմութիւնը կը սկսի՝ «մեր պատկերով, մեր նմանութեան պէս մարդ ընենք» (Հմ. 26) հասկացողութեամբ: Այս ճշմարտութիւնը՝ հիմն է հասկնալու մարդկային արժանապատուութեան, ինքնութեան եւ իրարու հետ յարաբերութիւններու ըմբռնումով:

Ինչպէ՛ս այդ գրիչները կարեւոր դեր մը ունին, նոյնպէս մենք: Իւրաքանչիւրս ունի նք՝ ներքին արժէք եւ նպատակ, որ Աստուած ստեղծած է: Ընդունինք մեր պատմութիւնը՝ վստահ ըլլալով, որ մեր Արարիչը՝ զանձ կը նկատէ մեզ եւ կը կոչէ «չատ բարի» (Հմ. 31):

Աղօթք - Արարիչ Աստուած, կը ինդրե՛մ՝ օգնէ ինձի հասկնալու, թէ Դո՛ւն ստեղծած ես գիս՝ Ըու պատկերովդ: Ամէն:

Դուն քեզ ինչպէ՛ս ընդունած ես՝ որպէս Աստուծոյ պատկերով ստեղծուած եակ: Ինչպէ՛ս Աստուած ձեւաւորած է քու պատկերդ եւ ինքնութիւնդ:

Չգա՛ստ եղեք, արթո՛ւն կեցեք: [Ա. Պետ. 5. 8]

ԼԱԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՍԸ

Պասքէթաօլի դաշտին վրայ, մեր թոռնիկին՝ եօթներորդ դասարանի խումբը իրենց լաւագոյնը ըրին՝ կ'օ՛լ նշանակելու համար: Յարձակողականը իրենց սիրածն էր: Բայց իւրաքանչիւր կ'օլէ ետք, իրենց մարզիչը՝ կը մղէր զիրենք, արագ ետ դառնալու եւ պաշտպանողական խաղալու, բան մը՝ որ երբեմն կը թերանային ընելու: Ամէնքը՝ կ'ուզէին կ'օլ ընել, բայց քիչեր պատրաստ էին աւելին ընելու՝ պաշտպանելու համար:

Մարզիչը սորվեցուց, թէ խաղին բանալին՝ կանխորոշել է հակառակորդին շարժումները: Կենալու՝ զնդակի փոխանցումի կամ նետելու ճամբուն վրայ, կրնար արգիլել կ'օլ ընել եւ օգնել խումբին՝ յաղթանակ ձեռք բերել:

Նմանապէս, պաշտպանողական մտածողութիւնը, որ կ'ենթադրէ մեր թշնամիին քայլերը, կրնայ օգտակար ըլլալ նաեւ՝ մեր հոգեւոր կեանքին մէջ: Իսկ ո՞վ է՝ այդ թշնամին: Պետրոսի նամակին մէջ յիշուած է. «Ձեր ոտխը՝ Չարխօսը՝ կը շրջի մոնչոդ առիւծի պէս, փնտռելով թէ ո՞վ կլլէ» (Ա. Պետ. 5. 8): Ահա՛ թէ ինչո՞ւ Պետրոս գրեց. «Չգա՛ստ եղէք, արթո՛ւն կեցէք»: Իրապէս, կոչուած ենք «գիմադրելու» հոգեւոր թշնամիին, «ամուր հաւատքով»: (Հմ. 9):

Գործնական պաշտպանութիւնը, Յիսուսի հետեւորդներուս համար, կը բերէ աւելի արդիւնաւոր կեանք եւ աւելի արգասաբեր ծառայութիւն Աստուծոյ արքայութեան մէջ: Եթէ երբեմն հոգեւոր ձախողութիւններ ունենանք, ամէն շնորհքի Աստուածը մեզ «կատարեալ պիտի ընէ, ամբացնէ, ուժովցնէ եւ անսասան հիմերու վրայ դնէ» (Հմ. 10): Ա՛ն է, որ մեզ կը հիմնէ եւ կը շինէ մեր հզօր պաշտպանութիւնը՝ Իրմով:

Աղօթք - Աստուած, երբ կեանքիս մէջ իմ պաշտպանութեան հոգիս տկարանայ, կը խնդրե՛մ՝ յիշեցուր ինձի, թէ Դո՛ւն ես իմ պաշտպանս: Ամէն:

Ո՛ւր եւ երբ «ձախողած ես» հոգեւոր պաշտպանութեան մէջ:
Ինչպէ՛ս կրնաս աւելի զգօ՛ն եւ արթո՛ւն ըլլալ:

Այս խօսքերս ձեր որդիներո՛ւն սորվեցուցեք: [Բ. Օր. 11. 19]

ԱՆՍԱՅՄԱՆ ՍԵՐ

«Մեր ձեռքին շարժումով ողջերթ կ'ըսենք՝ մինչեւ անոնք մեր տեսազաշտէն կորսուին: Այդ ձեւով ցոյց կու տանք, որ կը սիրենք զիրենք»: Այս բառերը մայրս ըսած էր, երբ դեռ մանուկ էի, բացատրելու համար՝ այն սովորութիւնը, որ ինք եւ հայրս ունէին, ամէն անգամ՝ որ ընտանիքի անդամ մը կ'այցելէր մեզ եւ կը մեկնէր: Իրենք դուրս կու գային ու ձեռքերու շարժումով հրաժեշտ կու տային, մինչեւ որ իրենց սիրելին անհետանար հեռուն: Երբեմն՝ երկար կը կանգնէին, բայց կարեւոր չէր: Երբ ես ալ տունէն մեկնեցայ, հասկցա՛յ այդ սովորութեան իմաստը:

Տեսնելով անոնց ձեռքերու շարժումը՝ ինքնաշարժիս ետեւը ցոյց տուող հայելիին մէջ, սիրտիս մէջ ջերմութիւն, սէր եւ հոգատարութիւն զգա՛ցի: Մինչեւ այսօր, ես ալ նո՛յն ձեւով ողջերթ կ'ըսեմ՝ մեր այցելուներուն, սէր ցոյց տալու համար: Կ'աշխատի՛մ, որ այս սովորութիւնը՝ մեր զաւակներուն մէջ ալ մնայ:

Մեր ընտանիքին հանդէպ սէրը արտայայտելու ուրիշ ձեւ մըն է, երբ Աստուծոյ սէրը՝ Իր Խօսքին միջոցով՝ կը հաղորդենք անոնց: Երբ Իսրայէլացիները՝ պատրաստուեցան Յորդանան գետը անցնելու եւ մտնելու խոստացեալ երկիրը, Աստուած այս խրատը տուաւ անոնց. «Այս խօսքերս ձեր սիրտի՛ն եւ անձի՛ն մէջ դրէք, ... Զանոնք ձեր որդիներո՛ւն սորվեցուցէք, անոնց մասին խօսելով երբ տունդ նստած ես, երբ ճամբան կը քալես, երբ կը պառկիս կամ կ'ելլես» (Բ. Օր. 11. 18-19):

Այս խօսքերը պիտի իրականցուէին ի վերջոյ Յիսուսի կատարեալ սիրոյն մէջ, որ խոստացաւ ու ըսաւ. «Ահա՛ ամէն օր ես ձեզի հետ եմ» (Մատթ. 28. 20): Երբ բաժնեկցինք Անոր ճշմարտութիւնն ու բարութիւնը, կրնանք վստա՛հ ըլլալ, որ Իր սէրը ի զօրու է ամէն հեռաւորութեան յաղթահարելու:

Աղօթք - Սիրելի Յայր, օգնէ՛ ինձի, որպէսզի այսօր Զու սերդ ու ճշմարտութիւնդ բաժնեմ ուրիշներուն հետ, որպէսզի անոնք ալ հաւատան ու միշտ Զեզի հետ ընթանան: Ամէն:

Որո՞ւ կրնաս այսօր քաջալերել՝ Աստուծոյ իմաստութեամբ եւ ճշմարտութեամբ: Ինչպէ՛ս պիտի ցոյց տաս անոնց՝ Իր սերդ:

Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը, որ Աստուած տուաւ անոր՝ ցոյց տալու համար իր ծառաներուն ինչ որ պետք է շուտով ըլլայ: [Յայտ. 1. 1]

2ԿԱ՛Յ ՎԱՍ՝ ՎԱԽՃԱՆԷՆ

1859-ին տեղի ունեցաւ՝ արեւի ամենահզօր արեգակնային փոթորիկը, արձանագրուած պատմութեան մէջ: Ծանօթ՝ որպէս «Քարինկլթըն Դէպք» (Carrington Event), սաստիկ երկրամագնիսական խանգարում մը պատճառեց, որուն հետեւանքով, հեռագրական համակարգը՝ խանգարուեցաւ: Space.com կայքը կ'ըսէ. «Եթէ այսօր այդպիսի փոթորիկ մը պատահի, կրնայ առաջացնել համացանցային վախճան մը»:

«Վախճան» բառը՝ իր չարագուշակ հնչողութեամբ՝ կը սարսափեցնէ մեզ: Յայտնութեան գիրքին Յունարէն անունն է՝ «Ափօքալիբսիս» (Apocalypsis), «յայտնութիւն»՝ այսինքն «բացայայտում»: Սակայն, բառը՝ չի՛ նշանակեր արհաւիրք կամ աշխարհի վերջ: Ինչպէս որ «Յայտնութիւն» անուանակոչումը կ'ակնարկէ վախճանին, ան նաեւ կը մատնաչէ բացայայտումի եւ քօղազերծումի մը:

Այս գիրքը կը սկսի. «Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը, որ Աստուած տուաւ անոր՝ ցոյց տալու համար իր ծառաներուն ինչ որ պէտք է շուտով ըլլայ» (Յայտ. 1. 1): Այս գիրքը կը յայտնէ Յիսուսը՝ որպէս Աստուծոյ Գառնուկը՝ արտայայտութիւն մը, որ Յովհաննէս օգտագործած է 25-էն աւելի անգամներ: Ան կը նկարագրէ Քրիստոսը՝ նաեւ որպէս հակ մը. «Որու աչքերը՝ կրակի բոցի պէս էին, ոտքերը՝ ոսկեպղինձի նման, որպէս թէ հնոցի մէջ բոցավառած, ու ձայնը յորդառատ ջուրերու ձայնին պէս» (14-15): Երբ Յովհաննէս առաջին անգամ տեսաւ Աստուծոյ Գառնուկը, «ոտքը ինկաւ մեռելի պէս» (Հմ. 17): Բայց Գառնուկը անոր դպաւ եւ ըսաւ. «Մի՛ վախնար. ... ես ահա՛ կ'ապրի՛մ դարէ դար» Հմ. 17-18):

Ուստի, փոխանակ վախնալու որեւէ վախճանէ մը, կրնանք վստահութեամբ մօտենալ Յայտնութեան գիրքին, որովհետեւ ան մեզի ցոյց կու տայ՝ փառաւորուած, յարուցեալ Քրիստոսը:

Աղօթք - Երկնաւոր Դայր, գոհութիւն կու տամ Զեզի, որ Յիսուս Քրիստոսը՝ Ըու Որդիդ՝ յայտնեցիր ինծի: Ամէն:

Վախեր ու կասկածներ պիտի ունենաք ապագային մասին:
Սակայն վստահ ըլլանք՝ թէ Յիսուս կը սփոփէ մեզ եւ վեր կը բարձրացնէ այդ վախերէն:

Այս (մահն) է ամեն մարդու վախճանը, եւ ապրողը ասոր ուշադրութիւն դարձնելու է: [Ժող. 7. 2]

ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՅ

Միացեալ Նահանգներու, նորընտիր նախագահները՝ երգում ընելէ, քաղաքական ուղեգիծեր ստորագրելէ եւ արարողութիւններու մասնակցելէ անմիջապէս ետք, կը դիմաւորուին՝ ցուրտ իրողութիւնով մը. կը սկսին պատրաստել իրենց թաղման ծրագիրը: Այսպէ՛ս, ազգը պատարաստ պիտի ըլլայ պատուելու անոնց կեանքը՝ երբ մեռնին: Երբ ձորճ Հ.Ո. Պուշի (George H. W. Bush) հարցուցին, թէ «տարօրինակ» չթուի՞ր իր թաղման ծրագիրը կազմելը, ան պատասխանեց. «Ձեռով մը դուն՝ քիչ մը կը վարժուիս անոր»: Պատմիչներ պիտի գրեն անոնց ժառանգութեան մասին, բայց նախագահները իրենք կը ծրագրեն իրենց յուղարկաւորութեան անձնական եւ աւանդական բաժինները եւ ա՛յն, թէ ինչպէ՛ս պիտի յիշուին:

Մահը՝ լուրջ իրողութիւն մըն է, որ բոլորս պէտք է դիմագրաւենք: Սողոմոն թագաւոր, որ հաճոյքներու, աշխատանքի ու գիտութեան մէջ իմաստ կ'որոնէր եւ ի վերջոյ դատարկ զգաց ու ըսաւ. «Աւելի լաւ է սուգի տուն երթալ, քան խնճոյքի տուն» (Ժո. 7. 2): Ցաւալի վիճակները՝ աւելի խոր իմաստ կու տան կեանքին, քան ուրախ պահերը: Երբ կը դիտակցինք մահուան իրողութեան, աւելի լաւ պատրաստ կ'ըլլանք՝ անկէ ետք գալիքին: Նոյն համարին մէջ՝ կ'աւելցնէ. «Մահն է ամէն մարդու վախճանը, եւ ապրողը ասոր ուշադրութիւն դարձնելու է»: Մենք՝ պէ՛տք է խորհինք եւ ծրագրենք:

Պատրաստութիւնը կու գայ՝ երբ կը ստանանք Յիսուսի կողմէ մեղքերու ներում, որ մեռաւ մեզի համար եւ յարութիւն առաւ: Ամէն մարդ կը մեռնի, որովհետեւ մահը աշխարհ մտաւ՝ երբ առաջին մարդը Ադամ, անհնազանդ եղաւ Աստուծոյ, եւ մենք հետեւեցանք անոր օրինակին: Բայց «Քրիստոսով՝ բոլորը կեանք պիտի ստանան» (Ա. Կորնթ. 15. 22):

Աղօթք - Փրկիչ Աստուած, գոհունակութիւն կու տամ Զեզի, որ խոստացած ես՝ Զրիստոսով ամեն մեռեալ պիտի ապրի կրկին: Ամէն: **Ինչպէ՛ս պատրաստուած ես մահուան: Ինչպէ՛ս կ'ուզես, որ քե՛զ յիշես:**

Յիսուս պատասխանեց անոր. «Ո՛վ կին, մեծ է հաւատքդ. թող ըլլայ քեզի՝ ինչ որ կ'ուզես: [Մատթ. 15. 28]

ՀԱՄԱՏՔՈՎ ՀՐԱՅՐՈՒԻԼ

Ճ. S. (J. D.) քանի մը Ափրիկեան երկիրներ իր կատարած այցելութիւններուն ընթացքին, զարմանալի տեսարաններու ականատես եղաւ: Արեւելեան Զամպիայէն (Zambia) իր ուղարկած կարճ պատգամներուն մէջ՝ կային պատկերներ՝ հաւատքով լեցուն կիներու մասին, որոնք կը ներկայացնէին՝ իրենց երեք տարիներու աւետարանի ծառայութեան ծրագիրը: «Ամենէն հօգօր ռազմավարական ներկայացումներէն մէկն էր, որ երբեւէ լսած եմ: Սպիտակ տախտակի տեղ՝ գետնին վրայ կը գծագրէին: Շքեղ տպագրութիւններու փոխարէն, իրենց ծրագիրը ցոյց կու տային՝ մեծ թուղթի վրայ, որ երկուքը միասին կը բռնէին: Անհաւատալի էր»:

Անոնք կը ցուցադրէին ա՛յն հաւատքը, որ Յիսուս կ'արժեւորէ: Մատթէոս 15. 21-28-ն՝ կը ներկայացնէ նման օրինակ մը: Կնոջ մը գոլասորը՝ այնպիսի ծանր դրութեան մէջ էր, որ ան ստիպուած եղաւ՝ փնտռել Յիսուսը. «Ողորմէ՛ ինծի, Տէ՛ր, Դաւիթի՛ որդի, աղջիկս սաստիկ կը չարչարուի դեւէն» (Հմ. 22): Անոր «մեծ հաւատքը» (Հմ. 28) կը տարբերէր Հրեայ առաջնորդներուն անհաւատութենէն, որոնց սիրտը հեռու էր Աստուծմէ (Հմ. 8): Մինչ Յիսուս կ'ընդունէր Աբրահամի սերունդը՝ որպէս ընտիր ժողովուրդ, իր գովեստը ուղղուած էր հեթանոս կնոջ մը, որ Աբրահամի հաւատքը ունէր:

Ի՞նչը այսօր կը մղէ քեզ դիմելու Յիսուսի: Անձնական, ընտանեկան, թէ համայնքային կարի՞ք: Ինչ որ քեզ կ'առաջնորդէ՝ դիմելու Յիսուսի, նոյնիսկ եթէ կը զգաս թէ կը կաղաս, դիմէ Յիսուսի: Քանի որ հաւատքի չափը չէ գլխաւորը, այլ՝ հաւատքի նիւթը՝ Յիսուս եւ միայն Յիսուս:

Աղօթք - Տեր Յիսո՛ւս, կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինծի, որ աճիս հաւատքով, մինչ Դուն կ'ապահովես այն ամենը՝ ինչ որ ինծի պէտք է: Ամէն:

Ինչպէ՞ս կը նկարագրես քու հաւատքդ այսօր: Ինչպէ՞ս կրնաս նորոգել վստահութիւնդ՝ Յիսուսի հանդէպ:

Յոյսով ուրախացեք. տառապանքի մէջ համբերեցե՛ք. աղօթքի մէջ յարատեւեցե՛ք: [Հռոմ. 12. 12]

ՅԱՐԱՏԵՒԵԼ ԱՂՕԹՔԻ ՄԷջ

Մեծ մայր Քլարայի (*Clara*) մահէն ետք, անոր՝ տասը ոտք երկարութեամբ աղօթքի ցուցակը, որոնց համար ան յարատեւ աղօթեց, դարձաւ ընտանեկան գանձ մը: Անոր վրայ մատնատիպով տպուած էին՝ ընտանիքի անդամներու, բարեկամներու եւ մարդոց անունները, որոնց համար բարեկամներ կ'աղօթէին, ինչպէս նաեւ հոգակաւոր քարոզիչներու, հոգեւոր առաջնորդներու եւ ծառայութիւններու՝ անուններ: Նոր ընտանիքի անդամներու անուններ եւ յատուկ խնդրանքներ ձեռագիրով գրուած էին՝ էջերու եզրերուն: Երբ տեսայ մօրս անունը՝ արձանագրուած, երբ տակաւին մանուկ էր, յուզուեցայ:

Պօղոս առաքեալ՝ գրեց առաջին դարու եկեղեցիին. «Յոյսով ուրախացէք. տառապանքի մէջ համբերեցէ՛ք. աղօթքի մէջ յարատեւեցէ՛ք» (Հռոմ. 12. 12): Իր նամակին մէջ, Պօղոս կ'առաջնորդէր հաւատացեալները՝ գործնական սիրով ապրելու՝ ատել չարութիւնը ու յարիւ բարիին (հմ. 9), պատուելու ուրիշներ՝ քեզմէ աւելի (հմ. 10), եռանդով ծառայելու Տէրոջ (հմ. 11) եւ հիւրասիրութեան հետամո՛տ ըլլալու (հմ. 13): Այս բոլոր բաներուն հիմքը՝ Քրիստոսի սէրն է՝ մեր մէջ եւ հո՛ն է, որ հաւատարիմ աղօթքը՝ կ'ունենայ իր տեղը: Պօղոս իր ընկերներէն կը խնդրէր, «որ պայքարին իր հետ իրենց աղօթքներուն մէջ՝ որոնք ուղղուած են Հօրը իրեն համար» (Հռոմ. 15. 30): Նաեւ յատուկ աղօթքներ՝ ընդիմացողներէն ապահով մնալու եւ Երուսաղէմի մէջ հաճելի ընդունելութեան մը արժանանալու համար (հմ. 31-32), անոր աղօթքի ցանկին վրայ էին: Հաւանաբար, ունեցան մեծ մեծմօր մը՝ անձնական աղօթքի ցուցակ մը՝ Հռոմի մէջ:

Աղօթքը՝ մեզ կը զօրացնէ՝ ապրելու այնպէ՛ս, որ «բարիով յաղթենք չարին» (12. 21): Թէեւ միշտ չէ՛, որ կը զգանք աղօթքին արդիւնքը, այդ կը ստեղծէ հաւատարմութեան ժառանգութիւն մը՝ յառաջիկայ սերունդներուն համար:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի հաւատարիմ մնալու աղօթքի մէջ: Ամէն:
Ի՞նչ տեսակ աղօթքներ ըրած են ուրիշներ՝ քե՛զի համար: Ո՞վ կամ ի՞նչ է աղօթքի ցանկիդ առաջինը:

Հետեւեալ տարին, թագաւորներուն պատերազմելու ատենը,
... Դաւիթ Երուսաղէմ մնաց: [Բ. Թագ. 11. 1]

ԱՍՏՈՒԾՈՅ ԶՐԱՅՆ ՀԱԳՆԻԼ

Նաֆի (*Nafi*) եւ Քամրան (*Kamran*) միացան ռազմական յեղափոխութեան: Անոնք տարիներ շարունակ պատերազմեցան եւ երբ իրենց կողմը յաղթեց, մայրաքաղաքին մէջ գրասենակային պաշտօններու նշանակուեցան: Գործերը լաւ չէին երթար: Քիչ բան կար ընելիք, ուստի սկսան Համացանցին վրայ ելլել: Նաֆի ըսաւ թէ իր ընկերներէն շատերը, «ներառեալ ես, մոլին դառցած ենք Համացանցին, մանաւանդ Թուիթըրին (*Tweeter*)»: Քամրան՝ աւելցուց. «Իսկական փորձը եւ մարտահրաւէրը՝ պատերազմի ընթացքին չէ՛ր: Ընդհակառակը՝ հիմա՛ է: Այդ ժամանակը աւելի պարզ էր, իսկ այժմ՝ շատ աւելի բարդ է»: Համացանցին մէջ գտնուած զանազան փորձութիւնները դիտելով, ան աւելցո՛ւց. «Շատեր ... երեւելիօրէն քաղցր, բայց ըստ հովթեան՝ դառն ծուղակներուն մէջ ինկած են»:

Քամրան ճիշդ է եւ կ'ըսէ՝ մենք ամենէն շատ տկար ենք՝ երբ մեր պահապան հոգին թուլցած է՝ մանաւանդ խաղաղութեան կամ հանգիստի պահերուն, ինչպէս որ ինք էր՝ պատերազմէն ետք: Աստուածաշունչին մէջ, կը գտնենք նման զգուշացում՝ Դաւիթի եւ Բեթսաբէի պատմութեան մէջ: Ամէն ինչ սկսաւ երբ Դաւիթ չզնաց պատերազմի, այլ մնաց մայրաքաղաքին մէջ: Ինչպէս անկարգապահ մարդ մը, որ Համացանցը կը թերթէ, Դաւիթ «իր անկողինէն ելլելով պալատին տանիքին վրայ կը պտըտէր» (Բ. Թագ. 11. 2): Ան ինքզինք դրաւ գայթակղութեան իրավիճակի մէջ: Եւ երբ «տանիքին վրայէն կին մը տեսաւ՝ որ կը լուացուէր», չի դարձուց իր աչքը ուրիշ կողմ (Հմ. 3):

Պատերազմէն ետք խաբուսիկ խաղաղութեանէն խուսափելու համար, պէտք է յիշենք՝ թէ տակաւին պատերազմի մէջ ենք: «Որովհետեւ մեր գօտեմարտը մարմինի եւ արիւնի հետ չէ՛, հապա ... չար ոգիներուն հետ» (Եփ. 6. 12): Ուստի, իր օգնութեամբ, մենք «կ'առնենք մեր վրայ Աստուծոյ ամբողջ սպարազինութիւնը» եւ պատրաստ կ'ըլլանք «հաստատուն կայնելու» (Եփ. 6. 12-13):

Աղօթք - Սիրելի Յիսուս, այսօր կը կռուիմ քու զօրութիւնովդ եւ քու Հոգիիդ առաջնորդութեամբ: Ամէն:

Ի՞նչ մարտահրաւէր ունիս ներկայիս: Ինչպէ՞ս կրնաս յաղթել:

Մենք ունինք այս գանձը հողէ անօթներու մէջ, որպէսզի գորութեան գերազանցութիւնը ըլլայ Աստուծմէ, եւ ո՛չ թէ մեզմէ: [Բ. Կորնթ. 4. 7]

ՅԻՍՈՒՄ՝ ՅԱՅՏՆՈՒԱԾ ՄԵՐ ՄԷՋ

Երբ Ճանի Էրիքսըն Թատայի (Joni Eareckson Tada) մայրը՝ մահացաւ. Ճանին՝ մտածեց, թէ մեր մարմինները նման են «կաւէ անօթներու», որոնք կը պահեն Քրիստոսի ներկայութեան գանձը: Ան մտածեց ժամանակակից մէկ համեմատութեան մը հետ, նկարագրելու համար՝ մեր աշխարհիկ մարմինները - գուցէ թուղթէ տուփ մը: Ան գիտէր, թէ մօր «տուփը», իր մաշած անկիւններով եւ ծալքերով, այժմ դատարկ էր: Սակայն, կը յիշէ՛ր թէ այդ տուփը թանկագին էր իրենց համար. «անօթը, որուն մէջ Քրիստոսի Հոգին բնակած էր»:

Ինչպէս Ճանին կը նշէ, Յիսուսի հետեւողները՝ թոյլ կու տան որ Ան՝ շողայ իրենցմէ, շատ անգամ չքեղ կերպով՝ իրենց ծալքերուն եւ ճեղքերուն մէջէն, երբ «տուփը» կը մաշի եւ կը փլի տարիներու ընթացքին: Այս գաղափարով՝ ան կը հետեւի Պօղոս առաքեալին խօսքերուն «գանձը կաւէ անօթներու մէջ» ըլլալուն մասին, որպէսզի պարզ դառնայ, թէ «այդ գորութեան գերազանցութիւնը ըլլայ Աստուծմէ, եւ ո՛չ թէ մեզմէ» (Բ. Կորնթ. 4. 7): Թէեւ Պօղոս «ճնշուած» եւ «խորտակուած» էր իր տառապանքներուն մէջ, սակայն չէ՛ր «կորսուած» կամ «գանդուած» (Հմ. 8-9): Իր մարմինին մէջ իր կրած այս տառապանքներուն միջոցով, ան կը գիտակցէ՛ր, թէ Քրիստոսի կեանքը կը յայտնուէր:

Ի՞նչ վիճակի մէջ է՞ քու «թուղթէ տուփը»: Գուցէ՛ զգաս թէ ծալքերն ու ճեղքերը կը մեծնան, երբ կը սեղմուիս ցաւի կամ հիւանդութեան ճնշումէն: Բայց գիտցի՛ր՝ Յիսուս ներկայ է քու մարմնիդ մէջ (Հմ. 10): Երբ յանձնուիս Անոր, Ան կը շողացնէ իր լոյսը՝ Քու միջոցովդ, որպէսզի անոնք, որ մթութեան մէջ են, ստանան իր սէրն ու իր կեանքը:

Աղօթք - Կենդանի Աստուծոյ Դո՛գի, կ'աղաչեմ՝ բնակէ իմ մէջս, որպէսզի Զու սերդ ու ներկայութիւնդ փայլի ինձմէ: Ամէն:
Ինչպէ՞ս տեսած ես Յիսուսը յայտնուած ուրիշներու մէջ: Ինչո՞ւ կը կարծես թէ Աստուած Իր ներկայութիւնը կը պահէ այս «կաւէ անօթներուն մէջ»:

Աստուծոյ խօսքը յաւիտեան կանգուն պիտի մնայ: [Ես. 40. 8]

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ՝ ՅԱՒԻՏԵԱՆ ԿԸ ՄՆԱՅ

1900-ական թուականներուն սկիզբը՝ յաջողակ պողպատագործ Չարլզ Շուապ (Charles Schwab)՝ որոշեց կառուցել՝ Հաւանաբար ամենաշքեղ դղեակը՝ Նիու Եօրքի մէջ: 1906-ին աւարտած՝ Գետեգերք Ճամբուն (Reverside Drive) կալուածը՝ ոգեշնչուած էր Ֆրանսական դղեակներէ եւ կը գրաւէր ամբողջ թաղամասի մը տարածքը՝ փարթամ պարտէզներով, շքեղ սրահներով եւ ճոխ ներքին հարդարանքով: Ան ցայտուն կերպով կը տարբերէր Մանհատթընի (Manhattan) աճող բազմաշարի բնակարաններէն: Բայց, Շուապի մահէն ետք, կալուածը դժուարութիւն ունեցաւ՝ գնորդ գտնելու: Շատ մեծ էր, շատ արժէքաւոր, եւ չէ՛ր համապատասխաներ անշարժ գոյքի նոր միտումներուն: Կալուածը քանդուեցաւ 1948-ին: Թէ՛ տունը եւ թէ՛ մարդը, ի վերջոյ մոռացութեան մատնուեցան:

Դիւրին է, երբ կը թուենք երկրային իրականութիւնները՝ հարստութիւն, յաջողութիւն, փառք, շինութիւններ՝ եւ ըսենք թէ անոնք պիտի մարին ու անհետանան: Եսայի 40-ին խօսքերը մեզի կը յիշեցնեն. «Ամէն մարմին խոտ է. անոր ամբողջ վայելչութիւնը դաշտի ծաղիկին պէս է» (Հմ. 6): Եսայի գրեց Աստուծոյ պատիժը կրած ժողովուրդի մը՝ իր ունեցած անհաւտարմութեան պատճառով: Աստուած սրբելէ ետք անոնց պատիժը, պիտի մխիթարէ զանոնք (Հմ. 1-2): Մարդարէին խօսքը՝ մարդոց, խոտին ու ծաղիկիներուն մասին՝ ճիշդ է (Հմ. 6-7): Բայց Աստուծոյ ճշմարտութի՞ւնը: Անիկա պիտի գերազանցէ մարդուն, դղեակներուն, հարստութեան, փառքին ու փառամոլութեան: Այո՛, «Աստուծոյ խօսքը յաւիտեան կը մնայ» (Հմ. 8):

Լաւ է յիշել, թէ որքա՛ն փխրուն ենք մենք: Եւ իմաստութիւն է՝ յիշե՛լ, թէ Աստուծոյ խօսքը յաւիտենական է:

Աղօթք - Աստուծոյ խօսքը՝ յա՛ւիտեան կը մնայ: Գոհութիւն Անոր: Ամէն:

Ի՞նչ տեսար թու կեանքիդ մէջ, որ մարեցաւ ու անցաւ: Ինչպե՞ս Աստուծոյ յաւիտենական բնոյթը եւ անվրեպ խօսքը կ'ունեցայք քեզ:

Ձանա՛ դուն քեզ գնահատելի ցոյց տալ Աստուծոյ առջեւ, ըլլալով այնպիսի գործաւոր մը՝ որ պիտի չամբնայ, շիտակ բացատրելով ճշմարտութեան խօսքը: [Բ. Տիմ. 2. 15]

ԶԱՐԳԱՆԱԼ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Երբ ականքանին մէջ նետուեցայ, ականխոժողուներս (լողալու ականոցներս) ջուրով լեցուեցան եւ հազիւ կրնայի տեսնել: Թէեւ լողալու յատուկ դասերու հետեւած չէի, սակայն՝ դանդաղ լողալով՝ ականքանիցի՝ պարզապէս հաճոյքի համար մասնակցած մրցումի երկու շրջագայութիւնները: Պատանի տարիքիս, այդ փորձառութիւնս ամօթալի էր: Բայց տարիներ վերջ, երբ դասեր առի ու շնչելու եւ լողալու ճիշդ ձեւերը սորվեցայ, վայելցի չորս մրցակցային լողալու ձեւերը սորվիլը:

Ճիշդ ուսուցում ստանալը՝ ի՞նչ մեծ տարբերութիւն կ'ընէ: Նոյնը կը վերաբերի Աստուածաշունչ կարգալուծ: Երբ կը հասկնանք մեր ընթերցածին բովանդակութիւնը եւ իմաստը, կրնանք աճիլ հաւատքի մէջ եւ ճիշդ կիրառել զա՛յն՝ մեր կեանքին մէջ:

Պօղոս կ'ուզէր, որ Տիմոթէոս հաստատ մնայ իր հաւատքին մէջ, խուսափի վէճերէ ու չխաբուի սուտ վարդապետներէ: Իր վերջին նամակին մէջ, առաքեալը խրատեց զինք՝ սորվելու Գիրքերը՝ ըսելով. «Ձանա՛ դուն քեզ գնահատելի ցոյց տալ Աստուծոյ առջեւ, ըլլալով այնպիսի գործաւոր մը՝ որ պիտի չամբնայ, շիտակ բացատրելով ճշմարտութեան խօսքը» (Բ. Տիմ. 2. 15):

Ինչպէս որ ճիշդ լողալու ձեւերը սորվելով՝ աւելի լաւ լողորդ դարձայ, նոյնպէ՛ս՝ երբ կը սորվինք եւ կը հասկնանք Աստուածաշունչի խօսքերն ու միտքերը, կը զարգանանք Աստուծոյ գիտութեան մէջ: Այս գիտութիւնը կ'օգնէ մեզ զանազանելու՝ ճշմարտութիւնը սուտէն եւ ձեռք բերելու իմաստութիւն: Մինչ կը կարգանք Աստուածաշունչը, շարունակենք աճիլ «որպէսզի կատարեալ պատրաստուած ըլլանք ամէն բարի գործի համար» (3.17):

Աղօթք - Սիրելի Աստուած, օգնե՛ ինձի, որ Քու մասիդ ատելի սորվիմ՝ Սուրբ Գիրքէ: Ամէն:
Որքա՞ն յաճախ կ'ընդերցես Աստուածաշունչը: Ի՞նչ սորվեցար վերջերս, երբ կարդացիր Գիրքը:

Ուստի բարիք գործելէ չձանձրանա՛նք, քանի որ յատուկ ատենին պիտի հնձենք՝ եթէ չպարտասինք: [Գաղ. 6. 9]

ՄՊԱՍԵ՛Լ ՅՈՒՆՁՔԻՆ

1962 թուականին, ձօննն Շէթլըր (Joanne Shetler) եւ էնն Ֆէթզըր (Anne Fetzer) մեծ դժուարութեամբ՝ պասով եւ ոտքով, ուղեւորուեցան Ֆիլիպիններու սաստիկ եւ անհարթ լեռները՝ աւետարանը բաժնեկցելու՝ այն մարդոց հետ, որոնք երբէ՛ք չէին լսած Յիսուսի մասին:

Հինգ տարի շարունակ, անոնք թարգմանեցին Աստուածաշունչը՝ Պալանկաօ (Balangao) ժողովուրդին լեզուով, սակայն գիւղացիները՝ չէին ընդուներ ա՛յդ պատգամը: Սակայն, անոնք օգնեցին կերտելու սկզբնական օդանավակայան մը, որպէսզի նոր պարէններ՝ օդով հասնին գիւղ: Օր մը, «այլ աշխարհէ կախարդութիւն» համարուած օդանավ մը հասաւ: Օդաչուն՝ մահուան եզրին գտնուող յղի կին մը տեղափոխեց՝ հեռու բուժարան մը: Երբ օդանավը վերադարձաւ՝ առողջացած կնոջ եւ իր առողջ նորածինին հետ, ժողովուրդը սկսաւ հարցնել «ա՛յն Աստուծոյ» մասին, որուն մասին միսիոնարները պատմած էին: Շուտով՝ գիւղը եկեղեցի ունեցաւ լեցուն Քրիստոսի հաւատացողներով:

Ամէնքս, որ կ'ուսուցանենք Յիսուսի պատմութիւնը, երբեմն կ'ունենանք յուսահատ պահեր, երբ ունկնդիրները կարծես չեն լսեր: Պօղոս առաքեալ՝ գիտէր. որ այդ բանը կրնայ պատահիլ: Գաղատացիներուն բացատրելէ ետք աւետարանի սերմանումի եւ բերքահաւաքի կարեւորութիւնը, ան նչեց՝ թէ սերմնացանը կրնայ յոգնիլ: Ահա՛ թէ ինչու՝ ան մարտահրաւէր տուաւ ըսելով. «Բարիք ընելէն չձանձրանաք» (Գաղ. 6. 9):

ձօննն եւ էնն՝ պէտք է շատ յուսահատուած ըլլային՝ առաջին հինգ տարիներուն: Բայց անոնք շարունակեցին սերմանել եւ ի վերջոյ սքանչելի բերք մը հնձեցին: Եկէ՛ք մենք ալ «չպարտասինք՝ (Հմ. 9), որովհետեւ փրկութեան այս պատգամը պիտի «յաւիտենական կեանք հնձէ» (Հմ. 8):

Աղօթք - Սիրելի Աստուա՛ծ, կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի տոկալու եւ շարունակելու սերմանել, երբ սիրելի անձ մը կը թուի թէ հետաքրքրուած չէ աւետարանով: Ամէն:

Ինչո՞ւ երբեմն կը յոգնիս աւետարանը տարածելէ: Ի՞նչ է քու հաստատ յոյսդ:

Ուրիշներ ինկան լաւ հողի մէջ, ու բուսնելով՝ հարիւրապատիկ պտուղ տուին: [Ղուկ. 8. 8]

ԼԱՒ ՀՈՂ՝ ԱՍՏՈՒԾՄՈՎ

Ամէն տարի՝ ուշ գարնան եղանակին, այգիին մէջ՝ վարունգի սերմեր կը ցանեմ: Սերմերը արագօրէն տերեւներ կը ծլին, սակայն՝ պտուղը երեւնալու համար ժամանակ կ'անցնի: Ամառ մը, երբ ջուր տուի սերմերուն ու համբերութեամբ կը սպասէի, սկսայ մտածել՝ արդեօք վարունգ պիտի ունենայի՞: Կարծեցի, թէ սերմերը շատ իրարու մօտ ցանած եմ, կամ հողը բաւարար տաք չէր՝ ցանքին ժամանակ: Բայց օր մը, կոճղէզ մը նշմարեցի: Յաջորդ շաբաթը՝ ուրիշ մը: Ապա՝ ուրիշ մը: Քանի մը շաբաթ անցնելէ յետոյ, միայն տունկեր չէին, այլ արդէն բաւական պտուղ կար՝ շաբաթ մը աղցան պատրաստելու համար:

Հոգեւոր աճն ալ երբեմն ասոր նման է: Չենք տեսներ այն բաները՝ որոնց համար աղօթած ենք. համբերութիւն, ինքնատիրապետում, քաղցրութիւն եւ սէր (տե՛ս Գաղ. 5. 22-23): Սակայն՝ եթէ Աստուծմէ խնդրենք՝ որ օգնէ մեզի ստեղծելու աճման պայմաններ՝ աղօթք, Աստուածաշունչի ընթերցում, երկրպագութիւն, ծառայութիւն ուրիշներու, Սուրբ Հոգին պիտի ստեղծէ աճը:

Ահա՛, սա՛ է Յիսուսի պատմած առակին էութիւնը, ըստ Ղուկաս 8-ին. «Սերմնացան մը գնաց իր հունտը ցանելու» (Հմ. 5): Սերմերուն մէկ մասը ինկաւ ճամբու վրայ, եւ թռչունները կերան զանոնք (Հմ. 5): Ուրիշներ ժայռոտ հողին վրայ ինկան ու խոնաւութիւն չունեցան, ուրեմն չաճեցան (Հմ. 6): Ուրիշ մաս մըն ալ ինկան փուշերու մէջ ու խեղդուեցան (Հմ. 7): Բայց այն սերմերը, որոնք լա՛ւ հողին վրայ ինկան, հարիւրապատիկ բերք տուին (Հմ. 8):

Երբ Աստուած կ'օգնէ մեզի, եկէ՛ք մենք ալ մշակենք «լաւ հող» մը ու աճեցնենք՝ Աստուծոյ մէջ:

Աղօթք - Ո՛վ Վարպետ Այգեպան, կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի, որ լաւ պտուղ բուսցնեմ: Ամէն:

Ի՞նչ ձեւերով Աստուած կ'օգնէ քեզի՞ մշակելու «լաւ հող» մը: Ո՛ր տեսած ես աճ՝ քու կեանքիդ մէջ:

Գողը կուգայ .. միայն գողնալու, սպաննելու եւ կորսնցնելու համար: Ես եկայ որ կեանք ունենան: [Յովի. 10. 10]

ՄՏԻԿ ԸՆԵԼ ԲԱՐԻ ՀՈՎԻԻՆ

Երբ բացի՝ առցանց դրամատնային ծրագիրս, տեսայ երկու ելք՝ իւրաքանչիւրը 500 տուրքէն աւելի, որոնք ես չէի կատարած: Հանգիմանուած, անմիջապէս կապուեցայ դրամատան հետ եւ բացայայտեցի, որ ինքնութիւնս գողցուած է: Դրամատան օգնութեամբ կրցայ վերականգնել վստահուած իրավիճակս, սակայն փորձառութիւնը՝ սորվեցուց ինծի զգօն ըլլալ՝ ապագայի գողութիւնները կանխարգելու համար:

Յովհաննու 10. 10-ին մէջ, Յիսուս կը զգուշացնէ. «Գողը կուգայ ... միայն գողնալու, սպաննելու եւ կորսնցնելու համար»: Շաբաթ օրով բուժում կատարելու համար (9. 13-15) Յիսուսի քննադատող կրօնական ղեկավարները, յանդիմանեցին զինք՝ բացայայտելով իրենց իսկական մտադրութիւնը. գողնալ, սպաննել եւ կործանել: Մեր հոգեւոր թշնամին սատանան, կը փորձէ գողնալ մեր հասկնալը Աստուծոյ շնորհքին վերաբերեալ. եւ այն ազատութիւնը որ Յիսուս մեզի տուաւ իր մահով: Յոյսն ու օգնութիւնը կը գտնուին նոյն հատուածին սկիզբը, ուր Յիսուս ինզինք կը նկարագրէ՝ որպէս «բարի հովիւր», որ իր ոչխարները անունով կը կանչէ (10. 2-4): Բարի հովիւին ոչխարները կը «փախչին գողէն, քանի որ օտարներուն ձայնը չեն ճանչնար» (Հմ. 5):

Շատ անգամներ, մենք մեզ կը գտնենք իբրեւ զոհեր՝ այս չար աշխարհին մէջ: Բայց մեր սիրառատ Աստուածը՝ մեզ կը հրաւիրէ ապրելու գատորոշման ընթացքով, ուր կը սորվինք ճանչնալ ու խուսափիլ՝ մեր թշնամիին ձայնէն, որ կ'ուզէ գողնալ, սպաննել եւ կործանել: Երբ կը սորվինք մեր ականջը լարել՝ Բարի Հովիւին ձայնին, կրնանք վստահիլ Անոր, որ մեզ առաջնորդէ «կեանքի ճոխութեան» (Հմ. 10):

Աղօթք - Սիրելի Աստուած, օգնէ ինծի՝ գատորոշելու գողին ձայնը եւ փոխարէնը լարելու ականջս՝ Զու ձայնիդ: Ամէն:

Քու կեանքիդ՝ ո՞ր կողմերէն «գողը» կը փորձէ վնասել քեզ:
Ինչպէ՞ս պիտի լարես ականջդ՝ Բարի Հովիւին ձայնին, որ կ'ուզէ քեզ առաջնորդել՝ Իր մօտ եւ շնորհել առատ կեանք:

Օրինեա՛լ ըլլայ այն մարդը՝ որ Տերոջ կը վստահի: [Եր. 17. 7]

ԽՈՐ ԱՐՄԱՏՆԵՐ

Տակըս Քէնթ (Douglas Kent), որպէս բնապատկերներու ճարտարապետ, երբ շրջեցաւ Լօս Անճըլըսի (Los Angeles)՝ 2025-ի այրած թաղամասերէն մէկուն մէջ՝ քաղաքին աւերիչ անտառային հրդեհներէն ետք, ան զարմացնող տեսարանի մը հանդիպեցաւ. ծառեր՝ կենդանի եւ կանաչ, անմիջապէս կողք-կողքի՝ հալած ինքնաշարժներուն եւ մոխրացած շէնքերուն: Շատեր ունէին՝ շքեղ արմաւենիի տերեւներ, առատ պտուղ, ամուր բուններ եւ ճիւղեր: Ինչպէ՞ս:

Երկու յաջորդաբար անձրեւաշատ ձմեռներէ ետք, ծառերուն արմատները խորացած էին հողին մէջ՝ հասնելու խոնաւութեան եւ այդ ջուրը հասցուցած էին ճիւղերուն ու տերեւներուն: Երբ հրդեհը եկաւ, անոնք դիմացան: Քէնթ ըսաւ. «Ինչ որ տեսայ, այն էր, որ եթէ խոր արմատներ ունէիր, փրկուեցար»:

Մեր հաւատքը՝ կեանքի կրակոտ փորձութիւններուն մէջ, կրնայ նման ըլլալ այդ ծառերուն: Երբ մեր հոգեւոր արմատները խոր են Քրիստոսի եւ Անոր սիրոյն մէջ, «ջուրերու քով տնկուած ծառի պէս պիտի ըլլանք, որ իր արմատները դէպի հոսանքը երկնցնելով՝ տաքութեան գալը չի նշմարեր. հապա անոր տերեւը կանաչ կը մնայ, երաշտի տարին չի մտահոգուիր, ու պտուղ տալէն չի դադրիր» (Եր. 17. 8):

Երեմիա, որ երբէ՛ք չէր թաքցնէր ճշմարտութիւնը, զգուշացուց, թէ անոնք, որոնք կը վստահին «միայն մարմինին», անէճքի տակ են (Հմ. 5): «Անիկա տափաստանի ցախին պէս պիտի ըլլայ, ու երբ բարիք գայ՝ պիտի չնշմարէ»: Փոխարէնը. «Անապատին խանձուած տեղերը, աղի եւ անբնակ երկրի մէջ պիտի կենայ» (Հմ. 5-6): Որքա՛ն աւելի լաւ է Աստուծոյ վրայ վստահիլը: Անոր կեանք պարգեւող սիրով՝ մենք լաւ կը ջրուինք՝ ու կ'աճինք՝ նոյնիսկ ամենավտանգաւոր ժամանակներուն հոգեւոր պտուղ տալով՝ Անոր մէջ:

Աղօթք - Սիրելի Աստուած, երբ աշխարհը կարծես թէ կը վառի շուրջս, կը խնդրե՛մ՝ յիշեցուր ինձի, որ վստահիմ Զեզի: Ամէն: **Քու արմատներդ Քրիստոսի մէջ, ի՛նչքան խոր են: Ինչպե՛ս կրնաս վստահիլ Անոր՝ կեանքի կրակոտ փորձութիւններուն մէջ:**

Այսօր, եթե պիտի լսեք անոր ձայնը, մի՛ խստացնեք ձեր սիրտերը: [Եբ. 3. 7-8]

ԿԱՐԾՐԱՅՈՂ ՍԻՐՏԻ՝ ՄԱՐՄՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Հիանալի փորձառու թիւն մըն է՝ տեսնել քու սիրտդ: Վերջերս՝ այդ պատահեցաւ ինծի: Կուրծքի ցաւը՝ պատճառ եղաւ, որ տեսնուիմ բժիշկի մը հետ: Ան յանձնարարեց քննութիւն, որու արդիւնքը ցոյց տուաւ, որ սիրտիս մէջ արդէն կրածինի կուտակում կայ. աւելի քան պէտք է: Բժիշկները այդ կ'անուանեն Աթէրօսքլէրօսիս (Atherosclerosis)՝ շնչերակներու կարծրացում:

Ինծի համար, այդ առիթ դարձաւ՝ փոխելու կերակուրի ու մարզանքի սովորութիւններս: Բայց նաեւ հասկցայ, որ սիրտիս այս վիճակը մէկ օրուան ընթացքին չէր ստեղծուած: Այդ վատ ընտրութիւններու հետեւանքն էր, որոնք տարիներով կուտակուած էին: Այդ սովորութիւնները, ի վերջոյ, ազդեցին սիրտիս առողջութեան:

Աստուածաշունչը նոյն լեզուով՝ կը նկարագրէ հոգեւոր անառողջ վիճակը: Մեր սիրտերը կրնան աստիճանաբար կարծրանալ Աստուծոյ նկատմամբ օր մը եւ մէկ ընտրութիւն մը, միւսէն ետք: Երբայեցիներուն 3. 7-8-ն, մատնանշելով Սաղմոս 95. 7-8-ն, կ'ըսէ. «Այսօր, եթէ պիտի լսէք անոր ձայնը, մի՛ խստացնէք ձեր սիրտերը՝ ինչպէս դառնութեան ատեն, փորձութեան օրը»: Աստուած Իր ժողովուրդը փրկելէ ետք Եգիպտոսէն, անոնք «փորձեցին ու քննեցին զինք» (Հմ. 9) անապատին մէջ:

Աստուած հաւատարիմ էր, բայց ժողովուրդը չտեսաւ, կամ չուզեց տեսնել այդ (Հմ. 9-10): Իսկ ի՞նչ կը վերաբերի մեզի: Ի՞նչ սովորութիւններ կը հեռացնեն մեզ Աստուծմէ՝ օրը օրին կարծրացնելով մեր սիրտերը: Մենք բոլորս ալ կ'ընենք նման ընտրութիւններ: Ահա թէ ինչո՛ւ շնորհակալ ըլլալու ենք, որ այսօր՝ այո՛, այսօ՛ր իսկ, Աստուած մեզ կ'առաջնորդէ՝ փոխելու մեր քարէ սիրտը՝ Իր սիրով փափուկցած սիրտի (տե՛ս Եզ. 36. 26):

Աղօթք - Հայր Աստուած, երբեմն սիրտս կը յոգնի: Կը խնդրե՛մ՝ ներէ ինծի՝ սխալ ընտրութիւններուս համար: Օգնէ՛ ինծի՝ ընդունելու Զու ներումդ եւ այն սիրտը, որ փափուկցած է՝ Զու սիրովդ: Ամէն:

Ի՞նչ ձեւերով՝ Աստուած կը փորձէ քեզ Իր մօտ բերել: Ինչպե՛ս կրնաս սորվիլ լսելու Անոր ձայնը:

Պետափրես՝ իր ամբողջ ունեցածը Յովսէփի ձեռքը թողուց:
[ԾՆ. 39. 6]

ԱՄԲՈՂՋՈՒՄՆ ԵՒ ԻՐՈՒՄՆ ԿԱՏՈՒԾՈՅ

Բոլոր Սինկափուրցի (*Singapore*) տղամարդերու նման, ես ալ պարտադիր էի ընելու գինուորական ծառայութիւն, երբ տասնութ տարեկան եղայ: Անկեղծ ըսած, շատ դժկամութեամբ մօտեցայ այս երկուք ու կէս տարուան ծառայութեան: Շատերու նման, փորձեցի միայն ամենէն անհրաժեշտը ընել՝ հնազանդելով հրահանգներուն բառացիօրէն՝ ո՛չ աւելին, ո՛չ ալ պակաս:

Ոմանք՝ սակայն, իրենց ամբողջ էութեամբ նուիրուեցան իրենց պարտականութիւնը ընելու՝ ի վերջոյ մեծ օգուտ քաղելով այս փորձառութենէն, սորվելով առաջնորդութիւն եւ համբերութիւն: Յետադարձ հայեացքով կը հասկնամ, որ այս տեսակի ջանքը եւ դրական տրամադրութիւնը՝ այնպիսի բան մըն է, որ Աստուած կը հաճեցնէ. ինչպէս որ Յովսէփ ցոյց տուաւ՝ Սուրբ Գիրքին մէջ:

Թէեւ ան վաճառուեցաւ՝ որպէս ստրուկ եւ աւելի ուշ բանտարկուեցաւ, բայց իրեն վերապահուած պարտականութիւնները կատարեց՝ կատարեալ նուիրումով: Փոխանակ վիրաւորուելու եւ գանգատելու իր իրավիճակէն, ան լրջօրէն ընդունեց իր դերը, այնքան որ՝ «Պետափրէս իր ամբողջ ունեցածը Յովսէփի ձեռքը թողուց» (ԾՆ. 39. 6): Յովսէփի նաեւ վստահուեցաւ բանտին գործերը եւ ի վերջոյ՝ ամբողջ եգիպտոսի դեկը:

Դարեր ետք, Պօղոս առաքեալ նոյնպէս կը խրախուսէ Յիսուսի հաւատացողներուն ըսելով. «Ամէն ինչ որ կ'ընէք, թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով, ըրէ՛ք Տէր Յիսուսի անունով» (Կող. 3. 17): Թէեւ մեր իրավիճակները կրնան հեռու ըլլալ իտէպլէն, Աստուած թող օգնէ՝ մեզի՝ հաւատարիմ մնալու՝ այն պարտականութիւններուն, որոնք մեզի վստահուած են, որովհետեւ ի վերջոյ մենք իրեն կը ծառայենք Ան որ մեր սիրտին իսկական վիճակը կը տեսնէ:

Աղօթք - Հայր Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի, հաւատարիմ ըլլալ այն ամէն բանին մէջ, որ կ'ընեմ՝ ինչ ալ ըլլայ այն վիճակը, որ Դուս թոյլ տուած ես ինձի, որովհետեւ ի վերջոյ՝ Քեզի կը ծառայեմ: Ամէն:

Ի՞նչ անհաճելի վիճակներու մէջ գտնուած ես: Ինչպէ՞ս արձագանգեցիր՝ կեցուածքով եւ արարքներով:

Հիմա ես մասամբ կը ճանչնամ, բայց այն ատեն պիտի ճանչնամ այնպես՝ ինչպես ես ճանչցուած եմ: [Ա. Կորնթ. 13. 12]

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ՝ ՅԻՍՈՒՍԻ ՄԷՋ

Երբէ՞ք յոյսդ դրած ես բանի մը վրայ, որուն միայն նշոյլները տեսած ես, բայց ամբողջութեամբ չէս կրցած բռնել: Ք. Ս. Լէուիս (C. S. Lewis) կը տենչար ուրախութեան: Ան գրեց. «Մեր կարօտը՝ վերամիանալու աշխարհի այն հատուածին, որ այսօր մեզմէ բաժնուած կը զգանք, եւ նե՛րս մտնելու այն դռներէն, զոր միշտ դուրսէն տեսած ենք, ամենաճշմարիտ ցուցանիչն է՝ մեր իրական վիճակին: Իսկ նե՛րս հրաւիրուիլը՝ վերջապէս, պիտի ըլլայ հին ցաւին բուժումը ... Ամբողջ մարդը պիտի խմէ ուրախութիւն՝ ուրախութեան աղբիւրէն»:

Լուիս կը խօսի այն լիարժէք ուրախութեան մասին, զոր պիտի վայելենք, երբ Յիսուսը տեսնենք դէմ առ դէմ: Որպէ՞ս Յիսուսի հաւատացողներ, մենք արդէն ունինք Քրիստոսի ուրախութիւնը՝ Իր հետ ունեցած յարաբերութենէն եւ մեր մէջ գործող Սուրբ Հոգիէն: Բայց դժբախտաբար՝ մեր ուրախութիւնը շատ անգամ կ'արգելափակուի մեղքով, մահով, չար ուժերով ու աշխարհի փշրուածութեամբ: Պօղոս կը գրէ. «Հիմա կը տեսնենք հայելիի մը մէջէն՝ ազօտ կերպով, բայց այն ատեն՝ պիտի տեսնենք երես առ երես: Հիմա ես մասամբ կը ճանչնամ, բայց այն ատեն պիտի ճանչնամ այնպէս՝ ինչպէս ես ճանչցուած եմ» (Ա. Կորնթ. 13. 12): 10-րդ համարին մէջ՝ Պօղոս կը խօսի եկող «կատարեալին» մասին: Այդ պահուն պիտի ճանչնանք եւ ապրինք ուրախութիւնը լիովին, որովհետեւ պիտի ըլլանք Յիսուսի հետ:

Թէեւ յուսալի սպասումով կը սպասե՛նք այդ օրը, սակայն այսօ՛ր իսկ, Ան մեզի կը շնորհէ փոքրիկ նախահամ մը՝ երկինքի յարատեւ եւ անարգել ուրախութենէն:

Աղօթք - Երկնաւոր Հայր, շնորհակալ եմ այս երկրի վրայ ունեցած ուրախութեան պահերուս համար: Տեսչալոր՛վ կը սպասեմ՝ այն օրը, երբ պիտի ճանչնամ այդ ուրախութիւնը՝ ամբողջութեամբ: Ամէն:

Ինչպէ՞ս կը պատկերացնես պահը, երբ Յիսուսը պիտի տեսնես: Ի՞նչ է այն, զոր ամենէն շատ կը սպասես երկինքին մէջ:

Ո՛վ Երուսաղեմ, եթե քեզ մոռնամ, իմ աչ ձեռքս իր պաշտօնը թող մոռնայ. իմ լեզուս քիմքիս թող փակչի: [Սաղմ. 137. 5-6]

ՏԵՆՉԱԼ ՏՈՒՆԻ

Էթըլ (*Ethel*) եւ էտ (*Ed*)՝ կը բնակին Ռաքի Լեռներուն (*Rocky Mountains*)՝ բարձր անապատային շրջանէն ներս: Երբ այցելեցինք իրենց՝ յիշագրումներով եւ յուշերով լեցուն՝ ձիաբուծարանը, գրոյցը դարձաւ դէպի իրենց մանկութեան յուշերը, ձի քշելով՝ Հիւսիսային Տաքօթայի (*North Dakota*) դաշտերուն վրայ եւ արջառներ խաշնարածելով Մօնթանայի (*Montana*) մէջ: Այժմ՝ տարիներ ետք, անոնց ձայնին մէջ կար տե՛նչ մը՝ տուն վերադառնալու:

Սաղմոս 137-ն, նման զգացական արտայայտութիւն մը կ'ընէ: Իսրայէլի ժողովուրդը աքսորուած էին ու կը տենչային տուն վերադառնալ: Անոնք ըսին. «Բաբելոնի գետերուն եզերքը, կը նստէինք ու կու լայինք: Մեր գերեզմանները հոն մեզմէ երգ մը ուզեցին» (Հմ. 1, 3), եւ հարցուցին, «Տէրօջը երգը ի՞նչպէս երգենք օտար հողի վրայ» (Հմ. 4):

Աքսորէն՝ ետ դառնալու տենչանքը՝ կրկնուող նիւթ մըն է՝ Հին Ուխտի մարգարէներուն մէջ: Վերջապէս, Իսրայէլացիները վերադարձան: Երուսաղէմը վերակառուցեցին ու վերաբնակեցան իրենց երկրին մէջ, բայց այդ այլեւս՝ նո՛յնը չէր: Երբ տաճարը վերակառուցուեցաւ, անոնք որոնք յիշեցին անոր նախկին փառքը, լացին, որովհետեւ՝ այդ առաջինին շուքն էր միայն (Եգ. 3. 12):

Ծերութիւնը՝ մեզի կու տայ զգացումը՝ որպէս թէ՛ մենք աքսորի մէջ ենք մեր անցեալէն: Միտքն ու մարմինը ժամանակի ընթացքին կը տկարանան: Բայց անոնց համար, որոնք ճանչցած են Յիսուսը, այս տենչանքը պիտի միտի՝ ո՛չ թէ՛ անցեալին, այլ ապագային: Այդտեղ ուղղուեցաւ նաեւ իմ զրոյցս՝ էթըլի եւ էտի հետ. տե՛նչ մը՝ մեր ապագայ տան, ուր ամէն ինչ՝ իր տեղն է եւ շատ աւելի լաւ, քան ինչ որ կարելի է երեւակայել:

Աղօթք - Երկինքի մէջ եղող Յայր, որ ամէն կեանքի հանգրուանին մէջ՝ ինծի հետ ես եւ լուսաւոր ապագայ մը պատրաստած ես ինծի համար: Ամէն:

Ի՞նչ բանի կը կարօտիս անցեալէն: Ինչպե՞ս կրնայ այս տենչանքը քեզի օգնել՝ ապագան սպասելու:

Տերը այդ Յոզիս է, եւ ուր Տերոյ Յոզիս կայ, հոն ազատութիւն կայ: [Բ. Կորնթ. 3. 17]

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՋ

1849 թուականին, Հէնրի «Տուփ» Պրաուն (Henry 'Box' Brown), Ամերիկացի ստրկացած մարդ մը՝ Վըրճինիայէն (Virginia), ինքզինք ծալլեց ու դրուեցա՛ւ փայտէ սնտուկի մը մէջ, որուն վրայ գրուած էր՝ «չոր ապրանք» (dry foods), ու երկու բարեկամներ գինք ուղարկեցին՝ Ռիչմոնտէն (Richmond)՝ Ֆիլատէլֆիա (Philadelphia): Պրաուն, այդ տուփին (3 x 2.5 x 2 ոտք) մէջ մնաց՝ 26 ժամ ճամբորդելով, ընդամենը՝ երե՛ք փոքրիկ անցք ունենալով՝ օդի համար: Երբ ապստամբական շարժման հետեւորդները գինք դուրս բերին տուփէն, ան երգեց Սաղմոս 40-ին թարգմանութեան՝ այլ տարբերակ մը, արտայայտելով իր յոյսը՝ ազատութիւն խոստացող Աստուծոյ վրայ: Պրաուն գրեց. «Եթէ դուն երբէք զրկուած չես ազատութենէ՛դ՝ ինչպէս ես, կրնաս իսկապէս չգիտնալ այդ ազատութեան յոյսին զօրութիւնը, որ ինծի համար ճշմարիտ կերպով հոգիի համար խարխիս մըն էր՝ թէ՛ վատահելի եւ թէ՛ հաստատուն»:

Ազատութիւնը կեդրոնական է՝ այն բանին մէջ, թէ՛ Աստուած ինչպէ՛ս կ'աշխատի մեր սիրտերուն եւ աշխարհին մէջ: Անոր իմաստութիւնը կ'առաջնորդէ մեզ՝ դէպի հոգեւոր ազատութիւն, բայց կեղծ իմաստութիւնը՝ կը բերէ ճնշում: Պօղոս կ'ըսէ. «Ուր Տէրով Հոգին կայ, հոն ազատութիւն կայ» (Բ. Կորնթ. 3. 17), յիշելով թէ՛ մենք ազատ կ'ըլլանք մեղքէն, մահէն եւ դատապարտութենէն: Երբ կը լսենք Աստուծոյ ու կը հետեւինք Անոր ճամբաներուն՝ արդիւնքը կ'ըլլայ ազատութիւն: Դժբախտաբար, հակառակը եւս ճիշդ է. երբ կը մերժենք Աստուած եւ կը դիմադրենք Անոր հրակէրներուն, մենք գերի կ'ըլլանք ու կը դրուինք կապանքներու մէջ: Աստուած կը փրկէ եւ կը փոխէ մեզ իր Հոգիով (Հմ. 18), մինչ՝ մեղքը եւ ապստամբութիւնը մեզ կը թակարդէ:

Միայն Աստուած կրնայ առաջնորդել մեզ՝ դէպի լա՛յն բա՛ց ապագայ մը՝ դէպի ճշմարիտ ազատութիւն:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ՛, որպէսզի Քու մէջդ ազատ ու փոխուած ըլլամ: Ամէն:

Ո՛ր զգացած ես, որ թակարդուած ես կեանքի մէջ: Ինչպե՞ս կը զգաս Աստուծոյ փափաքը՝ առաջնորդելու քեզ ազատութեան մէջ:

Սուրբ Յոզիմ ... պիտի սորվեցնե՛ս ձեզի ամենը, եւ ինչ որ ըսի՝
 ձեզի՝ պիտի յիշեցնե՛ս ձեզի: [Յովհ. 14. 26]

ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

«Ի՞նչ է՝ ինծի ծնունդ տուող մօրս անունը»: Եօթը տարեկան՝
 աղջկաս անկեղծ հարցումը՝ սի՛րտս խոցեց: Մեր պարագան՝
 անձնական որդեգրում մըն էր, ուր մեզի միայն տրուած էին
 իր ծնողներուն մասին՝ ամենէն հիմնական տեղեկութիւնները.
 Հասակ, ծանրութիւն, տարիք, մագերու եւ աչքերու գոյն:
 Ինչպէ՞ս պատասխանէի անոր: Հարցումը անլուծելի կը
 թուէր: Շունչ մը առի եւ աղօթեցի. «Աստուած իմ, ի՞նչ
 ըսեմ»: Յանկարծ բերնէս կը թափի նախադասութիւն մը.
 «Դո՛ւն ի՞նչ կ'ուզես որ ըլլայ անոր անունը»: Անոր դէմքը
 լուսաւորուեցաւ՝ ճարագայթեց ու յայտարարեց. «Մատրլայն»
 (Madeline): «Ուրեմն թող ըլլայ՝ Մատրլայն» պատասխանեցի:
 Կը հաւատա՛մ, թէ Աստուած պատասխան մը տուաւ, երբ ես
 չունէի:

Յիսուսի մահէն ետք՝ տարիներու ընթացքին, Իր
 հետեւորդները մեծ փորձութիւններու պիտի հանդիպէին
 եւ Աստուծոյ պատասխաններուն կարիքը պիտի ունենային՝
 անհնար թուացող իրավիճակներու մէջ: Յովհաննու 14-ին
 մէջ, Յիսուս խոստացաւ, թէ զիրենք մինակ պիտի չձգեր, այլ
 պիտի գար ու օգնէր անոնց (Հմ. 18): Աւելին, Աստուած պիտի
 ապահովէր շարունակական օգնութիւն. «Միւրթարիչը՝ Սուրբ
 Հոգին, որ Հայրը պիտի զրկէ իմ անուովս, անիկա՛ պիտի
 սորվեցնէ ձեզի ամէնը, եւ ինչ որ ըսի՝ ձեզի՝ պիտի յիշեցնէ
 ձեզի» (Հմ. 26):

Երբեմն մեր դիմաց կանգնող հարցումները՝ անլուծելի
 կը թուին: Մեր զաւակներուն, մեր աշխատանքին, մեր
 դրացիներուն ու մեր աշխարհին մէջ, Աստուծոյ օգնութեան
 ու պատասխաններուն կարիքը ունինք: Երբ մենք չունինք
 պատասխանները, Ա՛ն կրնայ զանոնք տրամադրել:

Աղօթք - Յայր իմ, շնորհակալ եմ Սուրբ Յոզիմի պարգեւի
 համար, որ ամէն ատեն առաջնորդ կը հանդիսանայ ինծի: Ամէն:
**Կեանքի՛դ՝ ո՞ր բնագաւարին մէջ այսօր Աստուծոյ օգնութեան
 կարիքը ունիս: Ի՞նչ հարցումներ ունիս, որ կրնաս Աստուծոյ
 որպէս միակ աղբիւրը՝ ճշմարիտ պատասխաններու:**

Ես պառկեցայ ու քնացայ. արթնցայ, քանի Տէրը ինձի նեցուկ եղաւ: [Սաղմ. 3. 5]

ՀԱՆԳԻՍՏ ԳՏՆԵԼ

«Մարտավարական քուն» (Tactical napping)՝ զինուորներուն համար սահմանուած ցուցմունքերու շարք մըն է՝ 10-30 վայրկեան՝ յագեցնող արդիւնաւէտ քունի համար: Երբ զինուորները յաճախ կ'ապրին երիկամային հոսք, առանձնութիւն կամ տագնապ, անոնք չեն կրնար հանգստանալ նոյնիսկ յոգնութեան ատեն: Տրուած խորհուրդներուն մէջ կ'ըլլայ ականջի խցաններու օգտագործում եւ քնանալէ առաջ՝ ընթերցանութիւն: Նոյնիսկ կ'առաջարկեն՝ բարձր զօրութեամբ սրճիտ ծամոն, որպէսզի մրափէն ետք՝ թմրութիւնը նուազի:

Անկասկած, այն պահերն են, երբ իսկապէս հանգիստի կարիքը ունինք, որ ամենէն դժուարն է գտնել: Դաւիթ թագաւոր այս փորձառութիւնը ունեցաւ, երբ փախաւ ամայի վայր մը փրկուելու համար իր որդիին՝ Աբիսողոմի դաւաճանութենէն: Դաւիթ եւ իր հետեւորդները՝ բարձրաձայն լացին իրենց գլուխները ծածկած՝ որպէս իրենց սուգին նշան (Բ. Թագ. 15. 30-31): Իրականութեան մէջ, «ամբողջ երկիրը բարձր ձայնով կու լար (Հմ. 23): Այդ ատեն էր, որ Դաւիթ բացազանչեց. «Ո՛վ Տէր, հակարակորդներս ո՛րչափ շատցան» (Սաղմ. 3. 1): Թերեւս մտածելով անցեալին ունեցած դժուար գիշերներուն մասին, Դաւիթ կը շարունակէ եւ կ'ըսէ. «Ես պառկեցայ ու քնացայ. արթնցայ, քանի Տէրը ինձի նեցուկ եղաւ: Ես պիտի չգլխանամ» (Հմ. 5-6): Դաւիթ հասկցաւ, որ Աստուած է իր կացութեան մէջ իշխանութիւն ունեցողը, ո՛չ թէ Աբիսողոմ: Ան նոյնիսկ Ուխտի Տապանակը՝ ետ դրկեց Երուսաղէմ՝ յայտարարելով, որ ապագան ամբողջովին Աստուծոյ ձեռքերուն մէջ է (Բ. Թագ. 15. 25-26):

Քունը՝ յաճախ կը թուի անհասանելի հանգիստ, երբ արթուն ժամերուն կը պայքարինք դժուարութիւններու դէմ: Բայց այդ ժամերը մեզի կը յիշեցնեն, թէ որքա՛ն շատ բաներ մեր վերահսկողութենէն դուրս են: Աստուած կ'օգնէ որ խաղաղութեամբ պառկինք:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ կը հսկես վրաս, թէ քնանալու ընթացքին՝ եւ թէ՛ արթուն եղած ատեն: Ամէն:
ԻՆչն է, որ քեզի արգելք կը հանդիսանայ՝ հանգիստ ապրելու: Ինչպէ՛ս կրնայ Աստուծոյ հանդէպ քու վստահութիւնդ՝ խաղաղութիւն բերել:

Ստախոս շրթուկը Տէրոջ գարշելի է, բայց հաւատարմութեամբ վարուողները անոր հաճելի են: [Առ. 12. 22]

ԱՆԵՂԾՈՒԹԵԱՄԲ ԳՈՐԾԵԼ

Պահ մը մտացիր՝ Սառան անգիտակցաբար իր աղամանդէ նշանախօսութեան մատանին ձգե՛ց՝ անտուն աղքատ մարդու մը բաժակին մէջ: Պիլի Ռէյ (Billy Ray), որ մուրացկան մըն էր: Երբ տեսաւ մատանին, գայն գնահատել տուաւ եւ խորհեցաւ վաճառել գայն: Բայց ան ընտրե՛ց՝ ազնուութիւնը եւ վերադարձուց մատանին Սառային, երբ ան քանի մը օր վերջ ետ եկաւ: Սառան եւ իր ամուսինը՝ Հիմնադրամ մը ստեղծեցին, որպէսզի նուիրատուութիւններ կատարուին Պիլի Ռէյին օգնելու համար: Ասիկա՝ առատաձեռնութեան մեծ ակիք մը յառաջացուց: Պիլի Ռէյ ստացաւ նիւթական եւ օրինական խորհրդատուութիւն եւ ի վերջոյ կարողացաւ՝ տուն մը գնել: Ան նաեւ վերամիացաւ՝ իր երկար տարիներով կորսուած ընտանիքին:

Երբ անեղծութեամբ ապրինք, Աստուած կը հաճեցնե՛նք եւ ուրիշներ կը ներշնչե՛նք: Սողոմոն կ'ըսէ, թէ Աստուած ուրախացաւ իր անեղծութենէն. «Ստախօս շրթուկը Տէրոջ գարշելի է, բայց հաւատարմութեամբ վարուողները անոր հաճելի են» (Առ. 12. 22): Ան ուժեղ լեզու կը գործածէ՝ նկարագրելու Աստուծոյ վերաբերմունքը՝ անպարկեշտութեան դէմ. Աստուած գայն գարշելի կը նկատէ: Երբ Աստուծոյ ժողովուրդը կը ստէ, կամ «սիրտին մէջ խաբէութիւն ըլլայ» (Հմ. 20), Աստուած կ'արհամարհէ եւ իր նկարագրին հակառակ կ'ըլլայ: Իսկ երբ անոնք «ճշմարտախօս շրթուկը ունենան» (Հմ. 19) եւ հաւատարիմ կերպով վարուին, Տէրոջ ուրախութիւն կը պատճառեն: Ուրեմն ուրիշներուն նկատմամբ լաւ վերաբերմունք ունենալը՝ միայն ճշմարտութիւն ըսել չէ՛, այլ Աստուծոյ նկարագիրը ցոլացնել է: Իսկ այն աշխարհին մէջ, ուր խաբէութիւնը շահեկան կը թուի, մեր անեղծութիւնը այն է, ինչ որ Աստուած հաճոյքով կը դիտէ (Հմ. 22):

Որոշենք անեղծութեամբ ապրիլ, մինչ Աստուած կ'օգնէ մեզի:

Աղօթք - Սիրելի Աստուած, կ'աղաչեմ՝ սորվեցուր ինծի ապրիլ անեղծութեամբ՝ Զու եւ ուրիշներու առջեւ: Ամէն:
Ինչպէ՞ս վստահելի ըլլալը կը ցոլացնէ Աստուծոյ բնաւորութիւնը:
Այսօր ինչպէ՞ս պիտի ապրիս անեղծութեամբ:

Կ'ուրախանամ ասոր համար, եւ պիտի ուրախանամ ալ:
[Փիլ. 1. 18]

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ՝ ՅԻՍՈՒՍԷ

Նէնսիին (Nancy) քաղցկեղի բուժումը՝ այնքա՛ն բորբոքումներ պատճառեց իր բերանին ու կոկորդին, որ չի կրցաւ նոյնիսկ հացի կտոր մը կլլել: Շատ ցաւալի օրերու ընթացքին՝ միայն կաթով կրցաւ ստամոքսը լեցնել: Վաթսուն տարեկան Նէնսիին դէմքին վրայ՝ ժպիտ մը կը ծաղկէր՝ միայն մէկ բանով. Յիսուսը եւ իր թոռնիկները ճանչնալու երջանկութիւնը: Ամէն շաբաթ անոնց հետ ժամանակ անցընելը՝ կ'օգնէր, որ չմտածէ իր վիճակին մասին: «Եթէ չըլլա՛յին տղաքը, ես տեղի տուած կ'ըլլայի», ըսաւ ան:

Պօղոս առաքալ ալ՝ նոյնպէս գտաւ իր ուրախութիւնը՝ Յիսուսի մէջ եւ ուրիշներու հետ, նոյնիսկ դժուարութիւններու ժամանակ: Անոր ուրախութիւնը՝ կու գար Յիսուսէն եւ Անոր համար ապրելու՝ կեանքէն: Թէեւ բանտի մէջ էր (Փիլ. 1. 13), ան գտաւ զօրութիւն ուրիշներ քաջալերելու: Ան խօսեցաւ ուրախութեան մասին, որ կու գայ Յիսուսի մասին բարի լուրը տարածելու գործակցութենէն եւ այն վստահութենէն, թէ ի՛նչ կը սպասէ իրեն՝ մահէն ետք (Հմ. 3-5, 18, 20): Այդ վստահութիւնն էր, որ իրեն կրցաւ ըսել տալ. «Ինծի համար ապրիլը՝ Քրիստոս է, ու մեռնիլը՝ շահ» (Հմ. 21):

Պօղոս կրնար ուրախանալ, որովհետեւ Յիսուս՝ իր կեանքն էր: Անոր բաւարարութեան ու ապահովութեան զգացումը, ո՛չ սեփականութենէ կամ իրավիճակէ եկաւ, այլ Յիսուսի պատկանելու գիտակցութենէն: Ուստի, ամենէն դժուար պայմաններուն մէջ գրուած նամակով, ան կրնար յայտարարել. «Ամէ՛ն ատեն ուրախացէք Տէրօջմով. դա րճեալ կ'ըսեմ, ուրախացէ՛ք» (Փիլ. 4.4):

Թող որ մենք ալ՝ ուրախութիւն գտնենք Յիսուսի մէջ, որ կը սիրէ մեզ, կը հոգայ մեզի համար եւ կը զօրացնէ մեզ, որպէսզի կարենանք ուրախանալ բոլոր պարագաներուն մէջ:

Աղօթք - Տէր Յիսու՛ս, կը խնդրե՛մ՝ զօրութիւն տուր, որպէսզի շարունակեմ յառաջ երթալ եւ աչքերս միշտ Զու վրադ պահեմ. որովհետեւ Զու ներկայութիւնդ է՝ որ ուրախութիւն կը բերէ ինծի: Ամէն: **Ի՛նչ դժուար կացութիւն կը դիմագրաւես այսօր: Ի՛նչ տարբերութիւն կը բերէ այն գիտակցութիւնը, որ Յիսուս միշտ քեզի հետ է:**

Եթէ խոստովանիս իրեց անօրէնութիւնը ... պիտի յիշեմ
Յակոբի հետ կնքած ուխտս: [Դեւ. 26. 40-42]

ԵՍ ԷԻ

Հին զաւեշտական շարժապատկերի մը մէջ, անճարակ՝ բայց
Հայածառ ծրագրաւորող մը՝ կը հռչակուի, որպէս Հրատ
մոլորակ ուղեւորող առաջին մարդաշունչ առաքելութեան
մասնակից: Միշտ սխալներ ընելով՝ ան սովորութիւն ունէր
բացազանչելու. «Ես չէի՛»: Երբ անոնք հասան Հրատ,
ծրագրաւորողը՝ սահեցաւ սանդուխէն եւ ինկաւ մոլորակին
վրայ, նախ քան իր ընկերը՝ ոտքը դնէր հոն: Հրատի վրայ
առաջին արտասանուած բառերը եղան՝ «Ես չէի՛»:

Այս պատմութիւնը զաւեշտական է, բայց այդ արտայայ-
տութիւնը՝ «Ես չէի՛» ցաւալիօրէն՝ իրական է: Երբ մեղադրանքներ
ըլլան, մեր բնագոյնի պատասխանը յաճախ նման կ'ըլլայ, «Ես չէի՛»:

Աստուած կը փափաքի մեր հնազանդութիւնը: Բայց
Ան գիտէ՛, որ մենք հակամէտ ենք անհնազանդ ըլլալու:
Դեւտացւոց 26. 1-13-ին մէջ, Աստուած կը գծէ Իսրայէլի
համար Իր ունեցած ծրագիրը: Եթէ անոնք հնազանդէին Իր
պատուէներուն, ան պիտի ըսէր. «Ձեզի ուշադրութիւն պիտի
դարձնեմ, ձեզ պիտի աճեցնեմ եւ բազմացնեմ» (Հմ. 9): Բայց
շարունակական անհնազանդութիւնը, պիտի բերէր անէծքներ
ու տառապանքներ, որոնք նախատեսուած էին՝ զղջում
յառաջացնելու: Այդ պահուն Աստուած ըսաւ թէ, եթէ Իսրայէլը
«խոստովանի իր անօրէնութիւնը եւ հայրերուն անօրէնութիւնը»
(Հմ. 40), ապա Ան պիտի յիշէր Իր ուխտը իրենց հետ:

Աստուծոյ հետ յարաբերութիւնը վերականգնելու բանալին՝
մեր կողմէ սխալներու ընդունումն է: Ուրիշներուն վրայ մեղքը
բարդելը՝ մեզ թակարդուած կը ձգէ մեղքի շրջանին մէջ, առանց
ուժ ունենալու մենք մեզ ազատելու:

Դուն քեզ Աստուծմէ հեռու կը զգա՞ս: Լաւ տեղ մըն է
սկսիլ՝ ըսելով. «Ե՛ս էի»:

Աղօթք - Սիրելի Ասուած, կ'ուզեմ, անկեղծ ըլլալ Քեզի հետ -----
մասին: Ամէն:

**Ի՞նչ է քու բնական պատասխանդ, երբ թերեւս մեղադրուիս բակի
մը համար: Յիշ՛՝ ժամանակի մը մասին, երբ իրապէս անկեղծ
եղար Աստուծոյ հետ: Ի՞նչի նման էր այդ:**

Ուժովցի՛ր ու քաջասի՛րոտ եղիր. դա՛րձեալ Տէրոջ սպասե՛:
[Մատթ. 27. 14]

ԱՍՏՈՒԾՈՅ ՍՊԱՍԵ՛Լ

Երբ փոքրիկ աղջիկ մըն էի, շատ կ'ուրախանայի՝ երբ ճամբուն եզրին յատուկ նշաններ տեսնէի: Կը կարծէի՝ թէ գունաւոր նշանները՝ կը նշանակէին, որ մեր ընտանիքը հասած է այն հանրածանօթ գուարճութեան պարտէզը, ուր կ'ուղղուէինք: Մեծ հաճոյքով կը սկսէի պայուսակներս հաւաքել, սակայն յուսախաբ կ'ըլլայի՝ երբ կը տեսնէի՝ աւելի շատ նշաններ եւ իմանալ թէ պէտք էր տակաւին աւելի երկար սպասէի պարտէզը հասնելու համար: Բայց ժամանակի ընթացքին՝ հասկցա՛յ, որ այդ նշանները կը յայտնէին թէ այցելուները կը մօտենան, սակա՛յն տակաւին մղոններ ունէին հասնելու համար:

Գրգռուած մանուկի մը նման, որ կը հարցնէ՝ «հասա՞նք հոն արդեօք», մենք ալ կրնանք անհամբեր ու մտահոգ ըլլալ մեր յաջորդ նպատակակէտին հասնելու համար:

Սպասել՝ որ Աստուած շարժի մեր կեանքին մէջ, կամ մեզ փրկէ մեր փորձութիւններուն մէջ, կրնայ շատ դժուար ըլլալ: Դաւիթ կը զիմագրաւէր բազմաթիւ դժուարութիւններ՝ ինչպէ՛ս կը տեսնենք Սաղմոս 27-ին մէջ: Բայց տակաւին՝ ան իր յոյսը եւ վստահութիւնը Աստուծոյ վրայ դրած էր եւ կը սպասէր Անոր պատասխանին: Դաւիթ չէ՛ր գիտեր թէ Աստուած որքան ժամանակ պիտի ուզէր՝ գործելու համար, բայց վստահ էր թէ Աստուած պիտի օգնէր իրեն: «Վստահ եմ թէ Տէրոջ բարութիւնը պիտի տեսնեմ ապրողներուն երկրին մէջ» (Հմ. 13):

Գուցէ երկար ժամանակ պահանջուի՝ մեր դժուարութիւններուն մէջէն յաջողութեամբ անցնելու փորձառութիւնը ունենալու, քան մենք ուզենք: Բայց քաջալերուի՛նք սա՛ խօսքերով. «Տէրո՛ջ սպասէ. ուժովցի՛ր ու քաջասի՛ր րտ եղիր. դա՛րձեալ Տէրոջ սպասէ» (Հմ. 14): Երբ դառնանք Սաղմոսներուն եւ Աստուածաշունչի մնացեալ բաժիններուն, կը մխիթարուի՛նք՝ գիտնալով, թէ Աստուած կ'աշխատի՝ նոյնիսկ երբ մենք կը սպասենք:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ նոյնիսկ երբ կը սպասեմ, Դո՛ւն կ'աշխատիս: Ամէն:

Ինչո՞ւ երբեմն դժուար կ'ըլլայ սպասել Աստուծոյ պատասխանին:
Ինչպէ՞ս կրնաս յոյսով լեցուիլ՝ մինչ կը սպասես:

Բա՛ղոր եղէք իրարու հանդէպ, գթած, ներելով իրարու, ինչպէս Աստուած Զրիստոսով ներեց ձեզի: [Եփ. 4. 32]

ԱՍՏՈՒԾՈՅ ՆԵՐՈՒՄԸ ՕՐԻՆԱԿԵԼ

Անցեալին կ'աշխատէի՝ Մատն (*Madge*) անունով կնոջ մը հետ, որ հրաշալի խոհարար մըն էր: Օր մը ան ըսաւ. «Պէ՛տք է ճաշակես ոլոռով եւ խոզապուխտով իմ պատրաստած ապուրս»: Երբ պատասխանեցի՝ թէ ոլոռ չե՛մ սիրեր, Մատն՝ ժպտեցաւ ու ըսաւ. «Պիտի սիրե՛ս, ապուրս փորձելէ ետք»: Յաջորդ օրը, ինծի համար յատուկ պատրաստած ապուրի պնակ մը տուաւ: Քանի մը օրեր ետք՝ Մատն հարցուց. «Փորձեցի՞ր ապուրս»: «Շուտով պիտի փորձեմ», պատասխանեցի, յոյս ունենալով՝ որ ալ չհարցնէ: Բայց հարցուց, յաջորդ օրը, եւ յաջորդ օրը: «Զուշացնես, թէ չէ՛ պիտի փճանայ» ակեցուց չորրորդ օրը:

Շաբաթ մը ետք, Մատնի՝ չկերուած ապուրը փճացած էր եւ ես զայն նետեցի աղբաման: Երբ Մատն ինծի մօտեցաւ, սիրտս ծանրացաւ: «Փորձեցիր չէ՞ իմ ապուրս» հարցուց:

«Այո՛» ըսի: «Շա՛տ համեղ էր»:

Եփեսացիս 4-ին մէջ, Պօղոս կ'աղօթէ, որ մենք զգուշանանք խօսքերու միջոցով գործուող մեղքերէն. օրինակ բարկութեան խօսքեր (Հմ. 26), վատ խօսակցութիւններ (Հմ. 29), եւ զայրոյթ (Հմ. 31): Բայց ասոնցմէ առաջ կուգայ՝ ակելի արմատական ու կարեւոր կոչ մը. «Ճձմարտութի՛ւնը խօսեցէք իրարու հետ» (Հմ. 25): Ես նայեցայ Մատնին՝ եւ ստեցի: Գիտէի թէ ինչ պէտք է ընեմ:

Ուստի մտա՛յ Մատնի գրասենեակը, խոստովանեցայ սուտս, ու ամջնալով՝ ներողութիւն խնդրեցի: Մատն մօտեցաւ եւ գրկեց զիս: «Ի հարկէ՛ կը ներեմ՝» ըսաւ: «Ինչպէ՞ս չներեմ, երբ գիտեմ թէ Աստուած որքա՛ն շատ ներած է ինծի»:

Աղօթք - Ներող Աստուա՛ծ, աղօթքով կը խնդրե՛մ՝ զօրացուր զիս ներելու ուրիշները, ա՛յն չափով՝ որ Դուս ներեցիր ինծի: Ամէն:

Բանի՞ մեղաւոր խօսք կամ արարք Աստուած ներած է քեզի:
Ինչպէ՞ս կրնայ այդ յիշեցումը օգնել, որպէսզի այսօր ալ՝ ե՛ս ներեմ ուրիշներուն՝ Սուրբ Զոգրիին զօրութեամբ:

Երանի՛ր թէ իմ տէրս Սամարիա եղող մարգարէին քով ըլլար:
[Բ. Թագ. 5. 3]

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՆԱՄՔԸ ԸՆԴԱՐՉԱԿԵԼ

Որպէս պատանի, լարուած յարաբերութիւն մը ունէի եկեղեցիի, ընկարուհիիս, Լիսայի (Lisa) հետ: Ուստի, յուսախաբ եղայ երբ իմացայ, որ երիտասարդաց ամառնային համագումարի ընթացքին՝ մենք պիտի ըլլայինք սենեկակիցներ: Սակայն, շաբաթը խաղաղ անցաւ, երկուքս ալ քաղաքավար ըլլալով:

Շաբթուան ամենէն շատ սպասուած ծրագիրը խարոյկի երեկոն էր: Այդ գիշեր սակայն, ես տաքութիւն ունէի եւ կանուխ անկողին մտայ, մինչ դուրսը՝ կը լսէի երաժշտութիւնը եւ ծիծաղը: Մէկ ժամ ետք, յանկարծ զարմացայ՝ երբ Լիսան մօտեցաւ եւ ջերմութիւնս չափեց: Ան ըսաւ. «Պիտի չմասնակցիմ խարոյկին. Դուն հիւանդ ես, պէտք է կողքիդ մնամ»: Ան կրնար անտարբեր մնալ, սակայն ընտրե՛ց խնամել զիս, եւ այս մէկը իմ հոգեկան վիճակս բարձրացուց:

Նման պատմութիւն մը կը տեսնենք Նէեմանի կեանքին մէջ: Նէեման՝ Ասորի բանակին հրամանտարրը, գերի առնուած Իսրայէլացի աղջիկ մը ունէր, որ կը ծառայէր իր կնոջ (Գ. Թագ. 5. 2): Ընդմիջտ հեռացած իր ընտանիքէն եւ ծառայութեան պարտադրուած, ան կրնար մերժել օգնել Նէեմանին, որ բորոտ էր: Բայց իր հաւատքը՝ մղեց զինք օգնելու եւ ըսաւ իր տիրուհիին. «Երանի՛ր թէ իմ տէրս Սամարիա եղող մարգարէին քով ըլլար» (Հմ. 3): Աստուած՝ իսկապէս օգտագործեց Եղիսէն՝ Նէեմանին բուժելու համար (Հմ. 8-14):

Լիսան եւ Իսրայէլացի աղջիկը՝ ընտրեցին օգնել եւ Աստուած գործեց իրենց միջոցով: Աղօթենք, որ Աստուած ցոյց տայ թէ ուրկէ կարող ենք իր խնամքը տարածել եւ մեզի տայ իմաստութիւն, որպէսզի՝ ճի՛շդ կերպով ծառայենք:

Աղօթք - Սիրելի Աստուա՛ծ, փորձառաբար գիտեմ թէ որքա՛ն օգնած ես ինձի: Կը խնդրե՛մ՝ գործածէ զիս՝ ուրիշներուն օգնելու համար: Ամէն:

Ինչո՞ւ երբեմն կը հրաժարինք ուրիշներու օգնելէ: Ինչպե՞ս ուրիշներուն օգնելով՝ կրնանք զիրենք առաջնորդել Աստուծոյ խնամքին ճանաչումին:

Բերքիդ ամբողջ տասանորդը հանէ ... որպէսզի
քաղաքներուդ մէջ եղած գաղթականը, որքն ու այրին գան,
ուտեն եւ կշտանան: [Բ. Օր. 14. 28-29]

ԱՌԱՏԱՁԵՆ ՆՈՒԻՐՈՒՄ

Երբ Օզուրլտ եւ Պիտտի Չէյմպըրզները (Oswald and Biddy Chambers)՝ 1911-1915 թուականներուն Լոնտոնի մէջ՝ կը վարէին իրենց Աստուածաշնչական Գոլէճը, անոնք շարունակեցին իրենց կեանքի սկզբունքը. չմերժել անոնց, որոնք կարիքի մէջ էին: Լոնտոնի իմաստուն բնակիչները՝ զարմացած էին այս վարքէն՝ խորհելով, թէ գոլէճը պիտի շահագործուի: Ապա՝ Օզուրլտ նշեց, առաջնց ուրիշները՝ նոյնը ընելու հրաւիրելով. «Իմ պատասխանատուութիւնս է տալ: Աստուած պիտի հոգայ անոր, որ կը խնդրէ»:

Այս գոյգը հետեւեցաւ մեր առատաձեռն Ստեղծիչին օրինակին: Իր ցուցմունքներով՝ Աստուած Մովսէսին միջոցով՝ ցոյց տուաւ շնորհալի ուղիներ, որոնցմով իր ժողովուրդը ապրի եւ ծառայէ ուրիշներուն՝ ներառեալ իրենց ուտելիքն ու ունեցածը բաժնելու: Մովսէս պատուիրեց Իսրայէլացիներուն, որ ամէն երէք տարուան աւարտին «բերքին ամբողջ տասանորդը հանել», որպէսզի Ղեւտացին, «գաղթականը, որքն ու այրին գան, ուտեն եւ կշտանան» (Բ. Օր. 14. 28-29): Իր ժողովուրդին առատաձեռնութեան միջոցով՝ Աստուած կը հոգայ անպաշտպաններուն:

Չէյմպըրզներուն Աստուծոյ վստահիլը այնքա՛ն մեծ էր, որ անոնք տուին յօժարակամ եւ առանց հարցաքննելու: Անոնք սորվեցան միշտ «պատուելու Աստուած» (Հմ. 23) եւ ստանալու իր օրհնութիւնը «իրենց ձեռքերուն կատարած բոլոր գործերուն մէջ» (Հմ. 29):

Մենք ալ կրնանք ներշնչուիլ ազատօրէն տալու՝ Աստուծոյ իմաստութեան եւ կամքին ապաւինելով: Գիտե՛նք թէ Աստուած առատաձեռնօրէն պիտի առաջնորդէ եւ ուղղէ մեզ, ինչպէս որ կը հոգայ օտարներուն, որբերուն եւ այրիներուն:

Աղօթք - Առատաձեռն Աստուա՛ծ, Զեզի կը դիմեմ՝ իմ բոլոր կարիքներուս համար: Գիտե՛մ թէ Դուն ես՝ բոլոր բարի բաներուն աղբիւրը: Զե՛զ կը պաշտեմ: Ամէն:

Ի՛նչ է քու տալու ըմբռնումդ եւ գործնական ձեւը: Ինչպե՛ս Աստուած հոգացած է քու ֆիզիքական, զգացական եւ հոգեւոր կարիքներդ:

Որովհետև Աստուած է որ ձեր մէջ կը ներգործէ թէ՛ կամենալը եւ թէ ընելը՝ իր բարեհաճութեանը համաձայն: [Փիլ. 2. 13]

ՄԵՐ ԲԱԺԻՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱԺԻՆԸ

Սինկաբուրի (Singapore) մէջ՝ կառավարութիւնը կը քաջալերէ ժողովուրդին՝ աջակցելու բարի նպատակներու, անոնց ըրած նուիրատուութիւններուն համապատասխանելով: Ան «կ'աւելցնէ» նուիրատուութիւնները՝ որոշ բարեսիրական կազմակերպութիւններու, իր կողմէ տալով նոյնքան կամ աւելի գումար: Մարդոց նուիրատուութիւնները այս կերպ բազմապատկելով, կառավարութիւնը՝ յոյս ունի խրախուսելու, որ մարդիկ աւելի ներգրաւուին բարեսիրական գործերու մէջ:

Այս երկժամիք մօտեցումը՝ կը յիշեցնէ ինձի, թէ ինչպէ՛ս Յիսուսի հաւատացողները կոչուած ունին Աստուծոյ չափանիշներուն՝ մեր աշակերտութեան ճանապարհին: Իր նամակին մէջ՝ ուղղուած Փիլիպպեցիներուն, Պողոս կը հրաւիրէ զանոնք «գործադրելու իրենց փրկութիւնը» (Փիլ. 2. 12) եւ «հետապնդելու» (3. 12, 14): Նո՛յն ատեն ան կը շեշտէ, թէ «Աստուած է որ կը գործէ իրենց մէջ, որպէսզի՝ թէ՛ կամենան եւ թէ՛ ալ ընեն՝ իր բարեհաճութեանը համաձայն» (2. 13):

Հաւատացեալներ չե՛ն արդարանար Աստուծոյ առջեւ բարի գործերով կամ բարի ապրելակերպով: Բայց մեր հոգեւոր աճումին մէջ, գոյութիւն ունի համագործակցութեան գաղափարը: Ան կը պահանջէ՝ մեր մասնակցութիւնը եւ ջանքը, սակայն չենք ընէր զայն՝ միայն մեր մարդկային ուժով: Աստուած կը կանչէ մեզ սուրբ ըլլալու՝ Իրեն նուիրուած, եւ մենք կը պատասխանենք անկեղծութեամբ ու շնորհակալութեամբ: Երբ կը փափաքինք հնազանդիլ եւ հաճոյ ըլլալ Անոր, Ան մեզի կ'օգնէ ու կը զօրացնէ: Ան ցոյց կու տայ, երբ սխալ կ'ընենք (Փիլ. 3. 15), կու տայ մեզի զօրութիւն՝ փորձութեան դիմադրելու (Ա. Կորնթ. 3. 15) ու կը զօրացնէ մեզ ընելու այն՝ ինչ որ ճիշդ է Իր աչքին մէջ (Եփ. 2. 10):

Աղօթք - Սուրբ Աստուած, օգնէ՛ ինձի՝ սուրբ եւ հաւատարիմ ըլլալու Զու ճաբաներուդ մէջ, որովհետև գիտեմ՝ թէ Դուս կը փափաքիս, որ ես նմանիմ Զու Որդիիդ Յիսուսի: Ամեն:

Որո՞նք են քու ամենամեծ մարտահրաւերներդ՝ հաւատարիմ եւ հաճելի ըլլալու Աստուծոյ: Ինչպէ՛ս կրնաս աւելի ապաւինիլ Սուրբ Դոգիին զօրութեան վրայ:

Դաւիթ քնարը կ'առնէր եւ իր ձեռքով կը նուագէր. Սաւուղ ալ կը հանգստանար: [Ա. Թագ. 16. 23]

ԵՐԱՇՏՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆ

Նոյեմբեր 21, 1915-ին, Սըր Ըրնէսթ Շաքլըթըն (Sir Ernest Shekleton) եւ իր քսանեօթ անդամնոց խումբը՝ իրենց *Ինտյուրընս (Endurance)* նաւին հետ միասին, խորտակուեցան Անթարքթիքայի (Antarctic) սառոյցին տակ՝ մութ անդունդին մէջ: Անոնք մնացին հազարաւոր մղոններ հեռու իրենց տունէն: Յետոյ, խումբը պատմեց քանի մը բաներու մասին, որոնք օգնած էին իրենց վերապրումին. անոնցմէ մէկը պանձօն (banjo) էր: Երբ անոնք սկսան իրենց անողոք ճամբորդութիւնը, Լիօնարտ Հասսին (Leonard Hassey)՝ արշաւախումբին օգերեւութաբանը՝ միակ անձն էր, որուն արտօնուած էր առնել մէկ քիլօյէն աւելի անձնական իրեր: Ան արտօնութիւն ստացաւ իր վեց քիլօ կշռող Ուինզորը (Windsor) պանձօն իր հետ բերել: Շաքլըթըն՝ Հասսին ըսաւ. «Ատիկա՛ կենսական դեղ մըն է մտքին համար եւ պէտք պիտի ունենանք անոր»: Խումբին օրագրութիւնները բացատրեցին Հասսիի երաժշտութեան զօրութիւնը: «Պանձօն՝ այո՛, սնունդ է», գրած էր մէկ նաւաստի մը: Ուրիշ մը անդրադարձած էր՝ «Հասսիի անփոխարինելի պանձօն»:

Աստուածաշունչը կը ներկայացնէ երաժշտութիւնը, որպէս Աստուծոյ անսահման պարզեւններէն մէկը, դարման մը, որու միջոցով՝ Անոր բժշկութիւնն ու մխիթարութիւնը կը մտնեն մարդկային սիրտը: Սաւուղ թագաւորին ողբերգական պատմութեան մէջ կը լսենք, թէ (անհնազանդութեան հետեւանքով) ան տառապեցաւ «չար ոգիէն» (Ա. Թագ. 16. 14): Իսկ ի՞նչ կը կարծէին Սաւուղի ծառաները, թէ ինչի՞ պէտք ունէր թագաւորը՝ հանգստանալու համար: Երաժշտութիւն: Ուստի գտան երիտասարդ Դաւիթը՝ իր քնարով. «Երբ Դաւիթ քնարը կ'առնէր եւ իր ձեռքով կը նուագէր. Սաւուղ ալ կը հանգստանար, կը զուարթանար, ու չար ոգին իրմէ կը հեռանար» (Հմ. 23):

Երաժշտութիւնը՝ աւելի է, քան միայն զուարճութիւն: Ան իրապէս Աստուծոյ հզօր պարզեւններէն մէկն է:

Աղօթք - Տէր, շնորհակալ եմ երաժշտութեան պարզեւին համար: Ամէն: Ի՞նչ խրախուսանք տուած է քեզի երաժշտութիւնը: Ինչպէ՞ս խորացուցած է ան՝ ըսլ յարաբերութիւնդ Աստուծոյ հետ:



Եթէ խոստովանիք մեր մեղքերը, ան հաւատարիմ եւ արդար Է՝ ներելու մեր մեղքերը, ու մաքրելու մեզ ամեն անիրաւութենէ: [Ա. Յովհ. 1. 9]

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՐՈՅՆ ՄԷՁ

Եթէ երբեւէ լսած ես՝ «ալպաթրոսի (*albatross*)՝ ձկնկուլ թռչունի մը պէս վզիս կախուած» արտայայտութիւնը, որ կը վերաբերի՝ ծանր եւ յոգնեցուցիչ բեռի մը, ապա լսած ես ակնարկ մը՝ Անգլիացի բանաստեղծ Սամուէլ Քօլրիճի (*Samuel Coleridge*) նշանաւոր բանաստեղծութեանէն. «Ծեր Նաւաստիին Երգը» (*Rime of the Ancient Mariner*): Այս բանաստեղծութեան մէջ՝ նաւաստի մը կը կրակէ եւ կը սպաննէ անվնաս, բարեկամական ձկնկուլ մը: Նաւաստիներու խումբը կը հաւատայ, թէ նաւաստիին դաժան արարքը՝ անէծք կը բերէ իրենց ճամբորդութեան վրայ եւ կը ստիպէ անոր՝ մեռած թռչունը կրելու իր վիզին՝ իբրեւ պատիժ:

Կա՛ն արդեօ՞ք ամփոսանքներ քու կեանքիդ մէջ, որոնք կը զգաս որպէ՛ս ծանր բեռ մը քու վզիդ վրայ: Մենք բոլորս ունինք այն պահերը, որոնք կ'ուզէինք ետ բերել ամէն գնով: Երբեմն՝ կը թուի, թէ անեծք մը ունինք՝ մեր մեղքի եւ ամփոսանքի ծանրութիւնը յաւիտեան կրելու:

Բայց Աստուծոյ շնորհքը կրցած է ազատել մեր սիրտերը՝ նոյնիսկ ամենացաւալի ամփոսանքէն: Բոլորս ալ մեղաւոր ենք (Ա. Յովհ. 1. 8, 10), բայց երբ անկերծօրէն կը խոստովանինք մեր բեռները Աստուծոյ, Ան խոստացած է «ներելու մեր մեղքերը, ու մաքրելու մեզ ամէն անիրաւութենէ» (Հմ. 9): Երբ Իր շնորհքը կը լեցնէ մեր սիրտերը, Իր լոյսն ու սէրը կը հոսին մեր մէջէն (2. 10), ազատելով մեզ, որպէսզի սիրենք մեր շուրջի մարդերը (3. 14):

Քօլրիճի բանաստեղծութեան մէջ ալ, տանջուած նաւաստին ի վերջոյ կը զգա՛յ՝ այս շնորհքը: Երբ Աստուծոյ ստեղծագործութեան հանդէպ սէրը կը լեցուի իր սիրտին մէջ եւ կը մղէ զինք ազօթելու, ալպաթրոսը կ'իյնայ իր վիզին՝ մշտապէս անհետանալով «ինչպէս կապարը ծովուն մէջ»:

Աղօթք - Տեր Աստուա՛ծ, շնորհակալ եմ, որ իմ կրած մեղքը՝ չի գրկեր զիս՝ Ընդ գեղեցկութիւնդ ու շնորհքդ ապրելու: Կը ինդրե՛մ՝ օրհնէ զիս այսօր, որ ազատութիւն գտնեմ Ընդ սիրոյդ մէջ: Ամեն: Ի՞նչ բան կը թուի քեզի որպէս «ալպաթրոս» քու վիզիդ վրայ: Ի՞նչ կը նշանակէ ընդունիլ Աստուծոյ շնորհքը՝ քու մեղքիդ համար:

Յովվան ձուկին փորել Տերոջ՝ իր Աստուծոյն աղօթեց: [Յով. 2. 1]

ԴԷՊԻ ԱՍՏՈՒԾ ՎԱԶԵԼ ԱՂՕԹՔՈՎ

Վայրկեան մը՝ Ատրիան Սիմանգաս (*Adrian Simancas*)՝ իր հօր հետ կը նաւարկէր Չիլիի Մակելլանի (*Magellan*) նեղուցին մէջ՝ իր նաւակով (*kayak*): Յաջորդ վայրկեանին, քսան չորս տարեկան երիտասարդը՝ գտաւ ինքզինք՝ կէտ ձուկի մը բերանին մէջ: «Կարծեցի մեռած եմ», ըսաւ Ատրիան՝ լրատուական կայանի մը: Քանի մը վայրկեաններ ետք, կէտ ձուկը արձակեց զինք՝ սառը ջուրերուն մէջ: Անոր փրկարար բաճկոնը օգնեց, որ լողայ ջուրին մակերեսին եւ իր հայրը հասցուց զինք ապահովութեան:

Հին Կտարանին մէջ Յովնան մարգարէն եւս հանդիպեցաւ մեծ ծովային էակի մը: Յովնան չուզեց հետեւիլ Աստուծոյ հրահանգին՝ քարոզելու ապաշխարութեան պատգամ մը Խորայէլացիներու թշնամիներուն՝ Նինուեցիներուն: Ան նաւ բարձրացաւ՝ ճամբայ ելլելով Նինուէի հակառակ ուղղութեամբ: Երբ նաւը հանդիպեցաւ փոթորիկի, Յովնան համոզեց նաւաստիները, որ զինք ծովը նետեն (Յով. 1. 11-12, 15): «Տէրը մեծ ձուկի մը հրահանգեց, որ Յովնանը կլլէ. Յովնան երեք օր ու երեք գիշեր ձուկին փորը մնաց» (Հմ. 17): Յովնան անցաւ Աստուծմէ փախչելէ՝ դէպի Անոր աղօթելու. «Յովնան ձուկին փորէն Տէրոջ՝ իր Աստուծոյն աղօթեց» (2. 1):

Աստուած լսեց Յովնանին եւ փրկեց զինք (Հմ. 10): Յետոյ Յովնան քարոզեց Նինուեցիներուն եւ անոնք ապաշխարեցին (3. 8-10):

Եթէ Աստուած կրնայ լսել Յովնանի ձայնը՝ մեծ ձուկին մէջէն, Ան կրնա՛յ լսել եւ փրկել մեզ ալ՝ ուր ալ գտնուինք: Փոխանակ Աստուծմէ փախչելու, վազե՛նք Դէպի Աստուած՝ աղօթքով, վստահելով, որ Ան պիտի պատասխանէ, երբ կանչե՛նք Անոր:

Աղօթք - Տեր Աստուած, շնորհակալ եմ փրկութեանդ համար, որ միայն Դուն կը շնորհես: Ամէն:

Ինչո՞ւ երբեմն կը փախչի՛ս Աստուծմէ: Ինչպե՞ս կրնաս այսօր վազել Իրեն:

Տերը իմ հովիւս է, ես ո՛չ մէկ բանի կարօտ պիտի ըլլամ: Զիս դալար մարգագետիններու մէջ կը պառկեցնէ: [Սաղմ. 23. 1-2]

ԴԱԼԱՐ ԽՄՈՐԵՂԷՆՆԵՐ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՆԱՄՔ

Երբ թոռնիկս անկողին կը դնէի՝ մեր տունը գիշերելու ընթացքին, իր Աստուածաշունչի էջանիչը՝ բացաւ 23-րդ Սաղմոսը ու ան անմիջապէս առարկեց. «Այս մէկը՝ արդէն կարգացինք»: Երբ առաջարկեցի՝ թէ գուցէ նոր բան մը կը սորվինք, ան բարձրաձայն կարգաց. «Տէրը իմ հովիւս է, ես ո՛չ մէկ բանի կարօտ պիտի ըլլամ: Զիս դալար խմորեղէններու (pastries) մէջ կը պառկեցնէ»: Դալար խմորեղէններ[՞]: Բացատրեցի, թէ բառը խմորեղէն չէ (pastries), այլ՝ մարգագետիններ (pastures): Քանի մը ժամեր առաջ, ան կանգնած էր հացի խանութի ցուցափեղկին առջեւ՝ իր սիրած քաղցրեղէնները ընտրելու: Հիմա արդէն՝ հասկցայ անոր մեկնութիւնը. իրեն համար հացի խանութը խաղաղութեան եւ վայելքի վայր մըն էր:

Երբեմն 23-րդ Սաղմոսին խոր պատգամը կը վրիպի մեր աչքէն: Դաւիթ թագաւոր մը, որ լաւ կը ճանչնար հովիւի կեանքը, կը նկարագրէ Աստուծոյ խնամքը՝ կեանքի ամբողջ ընթացքին՝ թէ՛ խաղաղ (Հմ. 5-6) եւ թէ՛ դժուար օրերու մէջ: (Հմ. 4) Ան կը մատնանչէ, որ մեր բարի Աստուածը՝ մեզ կ'առաջնորդէ այն վայրերը, ուր կրնանք վայելել իր ներկայութիւնը, վերստին գորանալ եւ պատրաստուիլ գալիքին: «Դալար մարգագետիններ» (Հմ. 1) ու «Հանդարտ ջուրերը» (Հմ. 2) այնպիսի բնակարաններն են՝ ոչխարներուն համար, եւ մենք՝ Աստուծոյ ոչխարներն ենք (Հմ. 1):

Թոռնիկիս անմեղ մեկնութիւնը՝ բացաւ աչքերս՝ տեսնելու «դալար մարգագետինները, որ Աստուած կը տրամադրէ ինծի՝ Հանգիստի ու վայելքի վայրեր՝ իմ առօրեայ կեանքիս մէջ: Ոսկեգոյն մայրամուտ մը: Կանաչ դաշտ մը: Լուռ անկիւն մը: Կամ հացի խանութի դարակ մը, «դալար խմորեղէններով» լեցուն, ուր անոնց բուրումը՝ կը լեցնէ հոգիս ուրախութեամբ: Այնքա՛ն ուրախ եմ, որ դարձեալ կարգացինք 23-րդ Սաղմոսը:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրե՛մ՝ բա՛ց աչքերս տեսնելու այն կանաչ արօտները, որոնք Դուս կը տրամադրես ինծի: Օգնե՛ ինծի, որ ամէն օր մտնեմ Ձու ներայութեանդ մէջ: Ամէն:
Ինչպե՛ս 23-րդ Սաղմոսը՝ կը հրաւիրէ քեզ Աստուծոյ ներկայութեան ապահովութեան մէջ մտնելու:

Ես ամեն բան ունիմ, եւ առատօրէն. լիացած եմ՝ ստանալով
Եպափրոդիտոսի միջոցով ձեր դրկածները: [Փիլ. 4. 18]

ՓՈՒՍԱԴԱՐՁ ԱՌԱՏԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ

Երբ Մելընին (*Melanie*) սկսաւ յաճախակի գլխացաւեր
ունենալ, անոր բժիշկները յայտնաբերեցին, որ ան ունի ո՛չ
մահացու՝ ուռ մը իր գեղձին մէջ: Ուռը սալորի մը մեծութիւնը
ունէր եւ վիրաբուժութեամբ՝ կրցան հանել զանիկա 2003-ին եւ
ապա՝ նորոգուելէ ետք՝ կրկին 2006-ին: Երբ 2017-ին՝ երրորդ
անգամ վերադարձաւ, Մելընին ենթարկուեցաւ ճառագայթային
բուժումի, ինչ որ պատճառ դարձաւ, որ ան իր մազերը կորսնցնէ:
Անոր քսանեօթ տարեկան որդին՝ Մէթթը (*Matt*), որոշեց իր
մազերը երկնցնել, որպէսզի իր մօրը համար վերարտադրուած
մազերէ գլխարկ մը՝ կեղծ մազ մը պատրաստուի:

Մէթթի արարքը ցոյց կու տայ, թէ ինչպէս մէկ անձի
կարողութիւններն ու նիւթական միջոցները կրնան լրացնել
միւսին պակասը: Պօղոս առաքեալ կը շեշտէ նման փոխադարձ
առատաձեռնութեան գեղեցկութիւնը իր նամակին մէջ՝ ուղղուած
Փիլիպպեցիներուն: Փիլիպպէի հաւատացեալները բաժնեկից եղած
էին անոր «նեղութիւններուն» եւ «դրկեցին իրեն պէտք եղածը
մէկ-երկու անգամ» (Փիլ. 4. 14, 16): Անոնց նուէրները ստանալով՝
Պօղոս գիտցաւ, որ Աստուած առատ կերպով հոգաց իր կարիքները:

Մեր պատարաստկամութիւնը իրարու հետ բաժնեկցելու,
յաճախ կը դառնայ գործիք մը, որով Աստուած կ'ապահովէ
մեր կեանքը: Երբեմն մենք ենք տուողը՝ մեր ժամանակէն,
տաղանդներէն կամ ունեցածներէն, իսկ երբեմն՝ մենք ենք կարօտ
եղողը՝ ապաւինելով ուրիշներու օժանդակութեան: Աստուծոյ
Հոգին՝ որ կ'աշխատի մեր մէջ՝ մեր նուէրները կը դարձնէ
«Աստուծոյ հաճելի» եւ ցոյց կու տայ մեր բաժնեկցած կեանքը
Քրիստոսի մարմինին մէջ (Հմ. 18):

Աղօթք - Հայր Աստուած, շնորհակալ եմ, որ Դուն կը հոգաս
իմ կարիքներս: Կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի բաժնեկցելու այն
ամէնը, ինչ որ Դուն տուած ես ինձի՝ ուրախութեամբ եւ
առատաձեռնութեամբ՝ ուրիշներուն օգնելու համար: Ամեն:
Ե՛րբ Աստուած ուրիշի մը միջոցով հոգացած է քու կարիքներդ:
Ինչպէ՞ս կրնայ այսօր Աստուած ուրիշի մը կարիքը հոգալ՝ քու
առատաձեռն տալուդ միջոցով:

Դուև սիրտիդ մեջ ըսած էիր. «Երկինք պիտի ելլեմ ... բայց անհա՛ դժոխքը կ'իջնես, գուբին խորերը: [Ես. 14. 13, 15]

ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔՆ ՈՒ ՄԵԾԱՐԱՆՔԸ

Լոնտոնի *Խնճոյքի Տան (Banqueting House)* առաստաղը հրաշալի տեսարան մըն է: Ան ներկուած է՝ Սըր Փիթըր Փօլ Ռուպընզի (*Sir Peter Paul Rubens*) կողմէ՝ 1629-1634 թուականներուն միջեւ ու պատուիրուած էր Չարլզ Ա. (*Charles I*) թագաւորին կողմէ՝ իր ընտանիքի թագաւորութիւնը փառաբանելու համար: Նկարի մը մէջ՝ աստուածուհի Միներվա (*Minerva*) կը փառաբանէ Չարլզի հայրը՝ ձէյմս Ա. (*James I*) թագաւորի յաջողութիւնները: Ուրիշ նկարի մը մէջ, ձէյմս պատկերուած է երկինք բարձրանալով՝ արծիւի թեւերուն վրայ: Երբ հիւրերը կը նային առաստաղին, յստակ պատգամ մը կը ստանան. թագաւորներ՝ Չարլզի եւ իր հօր նման՝ գրեթէ աստուածային թագաւորներ էին:

Նոյնպիսի միտք ունէր նաեւ Բաբելոնի թագաւորը՝ Եսայի մարգարէին օրերուն: Ան կ'երագէր «երկինք բարձրանալ» եւ «նստիլ ժողովի լերան վրայ», ուր կը կարծուէր թէ աստուածները կը թագաւորեն (Ես. 14. 13): Բայց Եսայի մարգարէն կանխագուշակեց, թէ ան պիտի իյնայ (Հմ. 3-4), եւ «դժոխք իջնէ, գուբին խորերը» (Հմ. 15)՝ առանց նոյնիսկ գերեզման մը ունենալու, որմով պիտի յիշուէր (Հմ. 18-19): Նման ճակատագիր ունեցաւ նաեւ Չարլզ Ա.: Տխուր հեզնական շրջադարձութիւնով, ան առաջնորդուեցաւ այն նո՛յն առաստաղին ներքեւէն, ուր պատկերուած էր իր իբրեւ աստուածային փառքը, եւ գլխատուեցաւ Խնճոյքի Տունէն դուրս՝ 1649 թուականին:

Տխուր բայց կրկնուող իրականութիւն մըն է՝ թէ պատմութեան ընթացքին շատ իշխաններ փորձած են աստուածային փառք վերագրել իրենց: Բայց միայն մէ՛կը արժանի է երկինքէն թագաւորելու եւ ամբողջ գորութիւնը, փառքն ու մեծարանքը իրեն կը պատկանին «Ա. Մնաց. 29. 11»:

Աղօթք - Երկնաւոր Յայր, Դո՛ւն միայն Աստուած ես, եւ ամբողջ գորութիւնն ու փառքը Զուկդ եմ: Ամէն:

Ինչո՞ւ կը կարծես, որ պատմութեան ընթացքին իշխաններ յաճախ փորձած են աստուածութիւնը վերագրել իրենց: Ինչպե՞ս Յիսուս կը հակադրուի նման մտածելակերպին:

Առաջուան բաները անցան: [Յայտ. 21. 4]

ՄԵՐ ԱՊԱԳԱՆ՝ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Չուիցերիա այցելելը միշտ եղած էր հօրս կեանքի երազը: Երբ ան ախտորոշուեցաւ կանխահաս մոռացութեամբ (*dementia*), մայրս որոշեց անոր հետ երթալ՝ մինչ ան տակաւին ֆիզիքապէս կարող էր: «Օր մը, երբ ձիւնը կը փչէր մեր շուրջը՝ Թիթլիս (*Titlis*) լեռան վրայ», պատմեց մայրս, «տեսայ հօրդ դէմքին վրայ խոր ուրախութիւն մը: Այդ երազ մըն էր, որ իրականացած էր»: Սակայն աւելի ուշ, երբ հայրս հարցուց. «Ո՞ր էնք մենք հիմա», մօրս աչքերէն արցունքներ հոսեցան:

Թէեւ հայրս մոռցաւ, որ Զուիցերիոյ մէջ էր, մայրս ըսաւ. «Այցելութիւնը արժած էր: Առնուազն մէկ պահի համար, ան գիտէր եւ երջանիկ էր»:

Աստուած մեզի կը վստահեցնէ, որ պիտի գայ ժամանակ մը, երբ ուրախութիւնը այլեւս երբէք մեզմէ պիտի չառնուի: Յիսուսի վրայ մեր ունեցած յոյսին պատճառով, մենք կրնանք ակնկալել «նոր երկիրք եւ նոր երկիր» (Յայտ. 21. 1), ուր ազատ պիտի ըլլանք մեզքէ եւ մահէ (Հռոմ. 5. 12): Այդ կատարեալ աշխարհին մէջ Աստուած «ամէն ինչ նոր պիտի ստեղծէ» (Յայտ. 21. 5): «Ան պիտի սրբէ բոլոր արցունքները. ա՛յ մահ պիտի չըլլայ, ո՛չ սուգ, ո՛չ գոչիւն: Այլեւս բնա՛ւ ցաւ պիտի չըլլայ, որովհետեւ առաջուան բաները անցան» (Հմ. 4): Ի՛նչ տառապանք, որ հիմա կ'ապրինք՝ ժամանակաւոր է: Աստուած խոստացած է, որ օր մը «նախնինքը պիտի չյիշուին» (Ես. 65. 17): Անոնք պիտի անցնին յաւիտեանապէս:

Գիտե՛մ, որ օր մը, երբ Աստուծոյ հետ ըլլանք (Յայտ. 21. 3), պիտի տեսնեմ իմ հօրս դէմքին վրայ այն խոր ուրախութիւնը: Այս անգամ՝ անիկա պիտի մնայ:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, կը փառաբանեմ քեզ: Օր մը Դուն ամեն բան նոր պիտի ընես: Ամէն:

Ինչպե՞ս ապագայ բնակարանդ քեզի յոյս կու տայ հիմա: Ի՞նչ կը սպասես այնտեղ տեսնել:

Միշտ պատարա՛ստ եղէք հեզութեամբ ու երկիւղածութեամբ շատագովական ներկայացնելու ամէն մէկուն՝ որ կը խնդրէ ձեզմէ ձեր մէջ եղած յոյսին պատճառը: [Ա. Պետ. 3. 15]

ՊԱՏՐԱ՛ՍՏ ԵՂԻՐ ԲԱԺՆԵԿՑԵԼՈՒ

Պատանուհին՝ հաստատ կեցաւ իր զիրքին վրայ: Երբ իր դպրոցական խումբը կ'այցելէր տուն մը, ուր մարդիկ թմրանիւթի կամ այլ տեսակի մոլուկեանէ վերականգնելու համար կը մնային, Քլէյր (Claire)՝ զրոյցի մէջ մտաւ՝ քսանականներու մէջ եղող երիտասարդի մը հետ, որ իրմէ շատ աւելի բարձրահասակ էր: Անոնք զրուցեցին հաւատքի մասին:

Քլէյր՝ պարզ ու յստակ ներկայացուց Յիսուսի աւետարանը: Տղան հակադարձեց իր հոգեւոր տեսակէտներով, որոնք շատ տարբեր էին: Վերջ ի վերջոյ, բարեկամական եւ հանդարտ զրոյցի ընթացքին՝ տղան նայեցաւ Քլէյրին եւ ըսաւ. «Դուն յաղթեցիր ինձի: Ես չե՛մ կրնար վիճիլ քու ըսածներուդ հետ»:

Թէեւ ան չհաւատաց Յիսուսի, սակայն՝ սերմ մը ցանուած էր: Եւ մինչ Քլէյր կ'ուզէր, որ տղան ընդունէր Քրիստոսը, իր զայրոյթը մեղմացաւ՝ ա՛յն իրականութեամբ, որ ան ըրաւ ա՛յն, ինչ որ Աստուած կանչած էր զինք ընելու այդ օր. «Պատրաստ եղէք ջատագովական ներկայացնելու» (Ա. Պետ. 3. 15): Ան սիրով ներկայացուց Աստուծոյ փրկութեան ծրագիրը:

Քլէյր ամօթ չսեպեց աւետարանը (Հռոմ. 1. 16): Ան պատրաստ էր «Ջատագովական ներկայացնելու ամէնուն՝ որ կը խնդրէ իր մէջ եղած յոյսին պատճառը» (Ա. Պետ. 3. 15): Ան գիտէր նաեւ, թէ ինչպէ՛ս իր «խօսքը շնորհքով՝ ըլլալու էր», որպէսզի գիտնայ «թէ ինչպէս պէտք է պատասխանէ» (Կող. 4. 6) երիտասարդին՝ ճշմարիտ հոգիով:

Ի՛նչ մեծ պատիւ է, որ Աստուած մեզի կու տայ առաջնաշնորհումը՝ Քրիստոսը ուրիշներու ծանօթացնելու: Թող որ պատրաստ ըլլանք բաժնեկցելու ուրիշներու հետ, երբ Ան մեզի պէտք եղած բարիքները կը տրամադրէ:

Աղօթք - Միրելի Աստուած, կը կը խնդրե՛մ, ոգեշնչէ սիրտս եւ բա՛ց բերանս, որպէսզի կարենամ «Պատասխան տալ ուրիշներուն», որոնք Զեզի պէտք ունին: Ամէն:

Ինչպէ՛ս կրնանք պատրաստուիլ՝ հաւատքի մասին բաժնեկցելու հնարաւորութիւնը ունենալու համար: Որո՞նք գիտես, որ պէտք ունի լսելու աւետարանը:

Իմ շնորհքս կը բաւէ քեզի, որովհետեւ իմ զօրութիւնս կ'իրագործուի տկարութեան մէջ: [Բ. Կորնթ. 12. 9]

ԱՍՏՈՒԾՈՅ ԶՕՐՈՒԹԵԱՆ ՎՍՏԱՅԻԼ

Թանկըստընը (*tungsten*) ծանրաքարը կամ Վորփրամը՝ կարծես տարաբանութիւն մըն է: Ան ունի ամենաբարձր ձգողական ուժը՝ բոլոր մաքուր տարրերուն մէջ, ինչ որ զանիկա կը դարձնէ՝ չափազանց դժուար բաժնելի: Սակայն Միտ Մէթըլ (*Mead Metal*) կայքը կը նշէ. «Հարուածական դիմադրութեան տեսակէտով՝ Թանկըսթընը՝ տկար ու փխրուն մետաղ մըն է, որ կրնայ կոտորուիլ հարուածելու պարագային»: Զարմանալի է, որ բնութեան ամենուժեղ մետաղը՝ նոյն ատեն՝ այբա՛ն փխրուն է:

Մարդիկ ալ՝ ունին նման բնոյթ մը: Թէեւ ֆիզիքապէս եւ մտային մեծ ուժի կարող ենք, սակայն հեշտ կերպով ճնշուած կը զգանք՝ այս ինկած եւ կոտրած աշխարհին ծանրութեան տակ: Պօղոս առաքեալ՝ անձամբ ունեցաւ այս փորձառութիւնը: Բ. Կորնթ. 11-րդ գլուխին մէջ՝ ան կը նկարագրէ վիճակներ, որոնք զինք կը գերազանցէին (Հմ. 23-29): Բայց Աստուած՝ զինք քաջալերեց. «Իմ շնորհքս կը բաւէ քեզի, որովհետեւ իմ զօրութիւնս կ'իրագործուի տկարութեան մէջ» (Բ. Կորնթ. 12. 9):

Աւելի առաջ՝ նոյն նամակին մէջ, Պօղոս գրած էր. «Ամէն կողմէ կը տառապինք, բայց տազնապած չենք» (4. 8): Կա՛յ յոյս, նոյնիսկ երբ Աստուծոյ ամենէն ուժեղ զաւակը, լաւ գիտնայ, որ այս աշխարհը ինքնին մեզի համար շատ ծանր է: Մենք երջանիկ կերպով կը վստահինք Անոր շնորհքին զօրութեան՝ յարատեւելու համար: Թող որ մենք ալ, Պօղոսի նման, ընդունինք մեր տկարութիւնները, որպէսզի Աստուծոյ զօրութիւնը մեզ առաջնորդէ:

Աղօթք - Սիրելի Յայր, կը խնդրե՛մ՝ օգնէ՛ ինձի հանգչելու Զու զօրութեանդ մէջ՝ կեանքիս ճշող պահերուն մէջ: Ամէն:
Ե՞րբ ապրեցար այնպիսի պահ մը, որ կարծեցի՞ր թէ պիտի ճգմուիս: Ինչպէ՞ս պիտի հանգչիս Աստուծոյ զօրութեան վրայ, երբ յաջորդ անգամ ճգնաժամի մը մէջ գտնուիս:

«Կանգնի՛ր ու կառուցանե՛ր», եւ իրենց ձեռքերը ուժովցուցին այս բարի գործին համար: [ՆԵ. 2. 18]

ՕՍՈՒՅԵԼ ԿՈՂՔ ԿՈՂՔԻ

Մէրէնտիբիթի (Պատահականութեան) Գրախանութիւնը (Serndipity Bookstore), որ Միչիկիինի՝ Չէլսի (Michigan, Chalsea) քաղաքին մէջ հանրաժանօթ տեղ մըն է, որ պէտք ունէր ընդլայնուելու: Տէրը՝ գտաւ շէնք մը՝ նախորդին կրկնապատիկ մեծութեամբ, ընդամէնը մէկ փողոց անդին: Ան կ'ուզէր արագ տեղափոխուիլ՝ առանց խանութը օրերով փակելու կամ գիրքերը տուփերու մէջ դնելու: Անոր համար դիմեց համայնքի օգնութեան: Աւելի քան երեք հարիւր մարդեր եկան: Անոնք կանգնեցան կողք-կողքի՝ կազմելով մարդկային շղթայ մը եւ գիրքերը մէկուն ձեռքէն միւսը անցուցին՝ երկու ժամէն պակաս տեսողութեան մէջ՝ տեղափոխեցին 9100 գիրք: Տէրը ըսաւ. «Գրախանութիւնը իսկապէս համայնքին մէկ մասն է, եւ (մարդերը) սեփականութիւն կը զգան անոր նկատմամբ»: Բոլորը աշխուժութեամբ աշխատեցան կողք-կողքի:

Երբ Նէեմիա, Հրեայ մը, որ պարսիկ թագաւորին վստահելի մատուցակն էր, իմացաւ, որ Երուսաղէմի պարիսպները քանդուած են, աղօթքով դիմեց Աստուծոյ առաջնորդութեան (Նէ. 1. 3-11): Բաբելոնացիները 587 թուականին աւերած էին պարիսպները: Կացութիւնը հետագօտելէ ետք, Նէեմիան համայնքին օգնութիւնը խնդրեց: Ան ըսաւ Հրեայ առաջնորդներուն. «Դուք կը տեսնէք այն ճախորդութիւնը որուն մէջ ենք, թէ ինչպէս Երուսաղէմ աւերուած է ...: Եկէ՛ք, Երուսաղէմի պարիսպը կառուցանենք» (2. 17): Երրորդ գլուխը կը նկարագրէ, թէ ինչպէ՛ս առաջնորդներն ու քաղաքացիները պատրաստակամութեամբ վերանորոգեցին այն հատուածը, որ իւրաքանչիւրին առջեւն էր: Անոնք աշխատեցան կողք-կողքի:

Մենք ալ կրնանք ազդել մեր համայնքին վրայ ծառայելով միասին՝ Աստուծոյ առաջնորդութեամբ եւ Անոր զօրութեամբ:

Աղօթք - Սիրելի Աստուած, բա՛ց աչքերս, որպէսզի տեսնե՛մ իմ շուրջս եղող մարդերը եւ ծառայեմ Քեզի՝ այն ձեւերով, որոնք իմ համայնքիս օգուտ կու տան: Ամէն:

Ի՞նչ տաղանդներ տուած է քեզի Աստուած: Ինչպե՞ս կրնայ Աս թեզի կանչել, որ ուրիշներու հետ գործես կողք-կողքի:



Աստուած կարող է բոլոր շնորհքներով ճոխացնել ձեզ, որպէսզի ... ճոխանաք ամէն բարի գործով: [Բ. Կորնթ. 9. 8]

SUL` ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒԾ ՊԱՐԳԵՆԵՐԷՆ

Սթէնլիի (Stanley) առատաձեռնութիւնը մի՛շտ ալ զիս զարմացուցած է: Ան յաճախ նուէր կամ կերակուր կը բերէր եկեղեցիի տարեց անդամներուն, իր թաղի մաքրողներուն, կամ ոեւէ մէկու մը, որ կը կարօտէր խրախուսանքի:

Նոյնքան զարմանալի էր այն, որ թէեւ Սթէնլին հարստութեամբ չէր գերազանցեր եւ ո՛չ ալ դրամ շահարկելու մէջ խիստ փորձառու էր, իր փոքր ներդրումը անսպասելիօրէն յաջողեցաւ, ինչ որ անոր հնարաւոր դարձուց շարունակել իր տալը: Ամէն անգամ որ մէկը շնորհակալութիւն կը յայտնէր իրեն, ան ունէր իր յատուկ ժպիտը՝ մատը բարձրացնելով դէպի վեր, կարծես կ'ըսէր. «Այս Աստուծմէ եկաւ, ո՛չ ինձմէ»: Յաճախ կը կրկնէր. «Աստուած ինծի կ'օգնէ, որ ուրիշներու օգնեմ»:

Ահա՜ ինչի մասին կը խօսէր Պօղոս առաքեալը՝ Բ. Կորնթացիս նամակին 9-րդ գլուխին մէջ, երբ կը խրատէր տալու մասին: Հպարտ Կորնթացիներուն պատրաստակամութեամբ՝ օգնութիւն հասցնելու իրենց հաւատակիցներուն (հմ. 2), ան կը հաւատար, որ պիտի շարունակէին իրենց սկսած դրամահաւաքը (հմ. 3): Անոր կողն էր, որ անոնք տային առատաձեռնօրէն եւ ուրախ սիրտով՝ ընդգծելով, որ Աստուած ո՛չ միայն պիտի գնահատէ տուողները (հմ. 6-7), բայց պիտի օրհնէր զանոնք, որպէսզի կարենային աւելի տալ (հմ. 8):

Աստուած մեզմէ չի սպասեր տալ այն, ինչ չենք կրնար տալ (Բ. Կորնթ. 8. 12): Ընդհակառակը՝ Ան մեզի վստահած է դրամ, ժամանակ կամ կարողութիւն, որպէսզի «ճոխանանք ամէն բարի գործով» (9. 8): Ան մեզի կը մատակարարէ՝ այն ամէնը, ինչ որ պէտք ունինք, որպէսզի «հարստանանք ամէն տեսակի առատաձեռնութեամբ» հմ. 11): Այդ պատճառով՝ մենք կրնանք տալ հաւատքով եւ ուրախ սիրտով (հմ. 7), գիտնալով, որ մեր տուածը միայն այն է, ինչ որ արդէն ստացած ենք:

Աղօթք - Դայր, կը խնդրե՛մ բա՛ց աչքերս՝ տեսնելու Քու օրհնութիւններդ եւ բա՛ց սիրտս՝ ուրիշներուն առատաձեռն եւ ուրախութեամբ օրհնելու: Ամէն:

Ի՞նչ տուած է քեզի Աստուած: Որո՞ւ կրնաս այսօր տալ՝ բաժնեկցելով այն բարիքներէն, որ ստացած ես:

Հոն պողոտայ ու ճամբայ պիտի ըլլայ, եւ ան Սրբութեան պողոտայ պիտի կոչուի: [Ես. 35. 8]

ՍՐԲՈՒԹԵԱՆ ԾԱՄԲԱՆ

Երբ ձէնիֆըրը (*Jennifer*) վաղաժամ մոռացութեամբ (*dementia*) ախտորոշուեցաւ, ան այլեւս չէր կրնար հեշտութեամբ կարգալ Աստուածաշունչը, ուստի սկսաւ զայն լսել ձայնագրութեամբ: Հիմա՝ Սուրբ Գրոց հատուածները նոր իմաստ մը ունին իրեն համար: Օրինակ՝ ան դիւրաւ կը կորսուի, շատ անգամ չիմանար՝ ո՞վ են իր շուրջը եղողները, եւ երբեմն կը տեսնէ խաբուսիկ պատկերներ՝ վայրի կենդանիներու: Երբ վախցած եւ ապակողմնորոշուած է, Աստուծոյ մխիթարութիւնը կ'ունենայ լսելով Եսայի մարգարէին խօսքերը՝ այն «Սրբութեան ձամբուն» մասին, որ Աստուած պահած է «անոնց համար, որ կ'ընթանան այդ ճամբով» (Ես. 35. 8): Այդ ճամբուն վրայ չկան չարեր կամ գազաններ, այլ «միայն փրկուածները պիտի քալեն այնտեղ», այն բոլորը, որոնք Աստուած ազատած է (Հմ. 9):

Եսայի մարգարէն փոխանցեց Աստուծոյ խոստումները Իր ժողովուրդին՝ անոնք, որոնք աքսորուած էին իրենց հայրենիքէն: Քանզուած տաճարէն եւ Աստուծոյ ներկայութենէն հեռու, անոնք անտէր ու մինակ պէտք էր զգացած ըլլային: Ահա՛ թէ ինչո՞ւ «Սրբութեան ձամբային» խոստումը՝ դէպի Աստուած տանող ուղին, կը դառնար իրենց յոյսի եւ գօրութեան աղբիւր: Կը մտածէին, որ օր մը պիտի մտնեն «Միօն՝ երգերով» առանց վախի կամ վիշտի, եւ իրենց սիրտերը պիտի լեցուէին ուրախութեամբ (Հմ. 10):

Ինչպէս ձէնիֆըրը կը կարգայ ու կը հասկնայ այս դարաւոր խոստումները, նոյնպէ՛ս ալ մենք՝ հաւատացեալներս, կրնանք վստահիլ, որ երբ կը քալենք Յիսուսի հետ, պիտի ունենանք ուրախութիւն եւ ցնծութիւն (Հմ. 10): Անկախ այն փորձութիւններուն, որոնք կ'ապրինք՝ որքան ալ ծանր կամ կեանք փոխող ըլլան, գիտե՛նք, որ Աստուծոյ ճամբան մեզի կը տանի տուն՝ դէպի Անոր:

Աղօթք - Հայր, կը ինդրե՛մ՝ օգնե՛ ինծի ձգելու իմ վախերս Զեզի եւ քալելու Սրբութեան ճամբուն մէջ: Կ'ուզեմ միշտ Զեզի հետ ըլլալ: Ամէն: **Ի՛նչ կը նշանակեն քեզի համար Աստուծոյ այս խոստումները: Երբ կը գտնուիս դժուարութիւններու մէջ, ինչպե՞ս կրնաս դառնալ Իրեն:**

Անոր քով են իմաստութիւնը եւ զօրութիւնը. Անորն են խորհուրդն ու հանճարը: [Յոթ 12. 13]

ԱՅՄՊԻՍԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ՅԵՏ

«Ես քեզ աւելի լաւ կը ճանչնամ, քան թէ դուն ինքզինքդ»: Երիտասարդ տարիքիս լսեցի ա՛յս վստահ յայտարարութիւնը՝ բարեկամի մը կողմէ: Անոր մտադրութիւնը բարի էր, բայց իմ բարդ կեանքս՝ որպէս որդեգրուած միսիոնարի գաւակ մը, որ ապրած էր չորս ցամաքամասերու վրայ եւ մշակոյթներու մէջ, զիս կազմաւորած էր այնպէ՛ս, որ ան իրականութեան մէջ չէր ճանչնար զիս:

Սոփար (Zopar)՝ Յոբի բարեկամներէն մէկը, խոհեմ կը թուէր, երբ կը խօսէր Յոբի դժուարութիւններուն մասին: Սոփար հարցուց. «Կրնա՞ս հետազօտութեամբ Աստուած յայտնաբերել, Ամենակարողը կատարելապէս հետախուզել» (Յոբ 11. 7): «Ան երկիրքին պէս բարձր է» (Հմ. 8): Ո՞վ կրնայ հակաճառել այդպիսի ճշմարտութեան: Բայց ապա, Սոփար համարձակեցաւ խօսիլ այն բանին մասին, զոր չէր գիտեր. Յոբի սիրտին մասին: Առանց ապացոյցի, ան հռչակեց. «Եթէ ձեռքդ անօրէնութիւն կայ՝ հեռացուր զայն քեզմէ, եւ մի՛ թողուր որ վրաններուդ մէջ անիրաւութիւն բնակի: Այն ատեն ... հաստատ կ'ըլլաս, ու բանէ մը չես վախնար» (Հմ. 14-15):

Յոբ պատասխանեց հեզնանքով. «Իմաստութիւնը ձեզի հետ պիտի մեռնի: Ե՛ս ալ ձեզի պէս խելք ունիմ, ու ձեզմէ նուաստ չեմ: Այսպիսի բաներ ո՞վ չի գիտեր» (12. 2-3): Յոբի իրականութիւնը այնքա՛ն բարդ էր, որ նոյնիսկ ինք չէր գիտեր, թէ ի՞նչ կը պատահէր (տե՛ս Յոբ 1-2): Իրաւացիօրէն ըսաւ ան. «Աստուծոյ իմաստութիւնը եւ զօրութիւնը» (12. 13): Սոփար սխալ էր, որովհետեւ իրեն վերագրեց այնպիսի հեղինակութիւն եւ իմացութիւն, որոնք իրեն չէին պատկաներ:

Մեր բարեկամները երբեմն կարիք ունին մեր սիրառատ խորհուրդներուն, բայց յաճախ՝ երբ բարեկամներ ճգնաժամի մէջ են, անոնց ամենէն մեծ օգնութիւնը աղօթքը կ'ըլլայ:

Աղօթք - Յայր, օգնե՛ ինձի ուրախանալ եւ հանգիլ այս հրաշալի ճշմարտութեան մէջ, որ Դուն իսկապէ՛ս կը ճանչնաս զիս եւ կը սիրես զիս այնպէս, ինչպէս որ եմ: Ամէն:

Ե՛րբ մէկը իսկապէս օգտակար եղած է քեզի՝ ճգնաժամի մէջ: Ինչպէ՞ս կրնաս այսօր օգնել ուրիշի մը՝ իր դժուար պահուն:

Տերոջ համար պիտի ըսեմ. «Իմ ապաւենս ու բերդս է: [Մատթ. 91. 2]

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԷՁ ԱՊԱՍՏԱՆԻԼ

Երբ բացօդեայ համերգը սկսաւ, զգացի մէկ հատիկ անձրեւի կաթիլ մը երեսիս վրայ: Վեր նայելով տեսայ մռայլ, խաւար ամպեր: Բայց քանի որ տոմսերու համար՝ մեծ գին վճարած էի, չուզեցի հեռանալ՝ քանի մը կաթիլ անձրեւին պատճառով: Յետոյ՝ բացուեցան հովանոցները: Կին մը բլասթիք գնումի տուարակ մը քաշեց մազերուն վրայ: Միայն մէկ որոտում բաւարար էր, որպէսզի երգիչը բռնէր բարձրախօսը եւ աղաչէր մեզի, ապաստանարան փնտռել:

Երբ անձրեւը սկսաւ տեղալ առատօրէն, ցեխոտ ջրափոսերուն մէջէն անցնելով, վազեցինք մօտակայ դպրոցի մարզարանը: Ամբողջովին թրջուած՝ անծանօթներու հետ կծկուելով՝ կէս ժամ մը, տակաւին հաւատալով՝ որ փոթորիկը պիտի դադրի: Երբ վերջապէս դուրս ելանք, տեսանք որ խումբը արդէն իր սարքերը հաւաքած էր ու պատրաստ էր մեկնելու:

Երբ կեանքի փոթորիկները կու գան, ո՛ւր կրնանք վազել: Տխրութիւնը, մտահոգութիւնը, հիւանդութիւնը եւ շփոթութիւնը կրնան մեզ վախցնել եւ ապաստանի կարիքը ունենալ: Մեզի պէտք է ամուր ապաստան մը, որ կը պաշտպանէ մեզ: Մատթոս 91-ը կը յիշեցնէ, թէ Աստուած խոստացած է փրկել մեզ եւ ըլլալ մեր կողքին՝ նեղութեան ժամանակ: «Բանի զիս կ'ապաւնի՝ զինք պիտի ազատեմ. զինք պիտի պաշտպանեմ, որովհետեւ իմ անունս գիտցաւ» (Հմ. 14): Երբ օգնութեան կարիք ունինք, կրնանք կանչել Անոր անունը եւ Ան պիտի պատասխանէ մեզի (Հմ. 15):

Երբ մեր քաջութիւնը կը սպառի, կրնանք հենիլ Անոր զօրութեան վրայ: Ան է մեր ապաստանը՝ իւրաքանչիւր փոթորիկին մէջ:

Աղօթք - Գթասիրտ Աստուած, կը փնտռե՛մ ապաստան Զու մէջդ:

Կը խնդրե՛մ՝ եղի՛ր իմ պաշտպանութիւնս եւ ապաստանս, երբ վստահութիւնս կը դնեմ Զու վրայդ: Ամէն:

Ի՞նչ փոթորիկներ կը դիմագրաւես: Ինչպէ՞ս կրնաս ձեռք բերել այն ապաստանն ու հանգստութիւնը, զոր Աստուած խոստացած է քեզի:

Չա՛յն ճանչցիր քու բոլոր ճամբաներուդ մէջ, եւ ինք պիտի շտկէ քու ուղին: [Առ. 3. 6]

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆ

Ան ծնած էր որպէս ստրուկ, 1860-ականներուն: Թոյլ եւ հիւանդոտ մանուկ էր, ու վաճառուեցաւ ստրկատիրոջ մը մէկ ձիու գինով: Երիտասարդութեան տարիներուն՝ ան ականատես եղաւ սեւամորթ մարդու մը սպաննութեան՝ սպիտակներու խումբի մը կողմէ: Զարմանալի կերպով, ճորճ փայլուն աշակերտ մը եղաւ դպրոցին մէջ, բայց երբ դիմեց Գանասաի Հայլէնտ (Kansas Highland) Համալսարանը, մերժուեցաւ՝ իր մաշկին գոյնին պատճառով: Սակայն այս բոլորին մէջ, երիտասարդը պահեց իր խոր հաւատքը Աստուծոյ նկատմամբ: Գործ Ուաշինկթըն Քարուըրին (George Washington Carver) կեանքի նշանաբանը Սողոմոնի Առակաց 3. 6-ն էր. «Չա՛յն ճանչցիր քու բոլոր ճամբաներուդ մէջ, եւ ինք պիտի շտկէ քու ուղին»:

Երբեմն կը զգանք, թէ կեանքի պայմանները կը ճնշեն մեր վրայ: Կը հանդիպինք ձախողութիւններու: Կը մոլորինք, չիմանալով՝ ո՛ւր երթալ: Բայց Առակացը կը խրատէ մեզի. «Տէրո՛ւջ վստահէ ամբողջ սիրտովդ, ու քու խելքիդ մի՛ ապաւինիր» (Հմ. 5): Ասիկա Աստուածաշունչին ձեւով ըսելն է՝ «Թող Աստուած առաջնորդէ կեանքդ»:

Ճորճ Ուաշինկթըն Քարուըրը հետեւեցաւ Աստուծոյ ճամբուն՝ տոկալով բոլոր դժուարութիւններուն, ինքն իրեն սորվեցնելով բուսաբանութիւն եւ երկրաբանութիւն ու վերջապէս դարձաւ հռչակաւոր գիտնական: Ան յայտնի եղաւ գետնապիստակէն (peanut) հարիւրաւոր օգտակար կիրառութիւններ գարգացնելով, ինչպէս նաեւ մշակեց բուսաբուծութեան փոփոխութեան նոր մեթոտներ, որոնք յեղափոխեցին Ամերիկայի գիւղատնտեսութիւնը: Աստուած կը գտնէ, թէ ինչպէս վատ վիճակներէն՝ բարիք հանել: Ինչ ալ որ դիմազբաւես այսօր, գլխաւորը այս է՝ «ճանչնալ զԻնք» եւ լսէ Անոր ձայնը: Տես, թէ ինչպէս կը բանայ Ան կեանքիդ ճամբաները:

Աղօթք - Հայր, կը խնդրե՛մ օգնէ ինձի միշտ կեդրոնանալու Զու վրայ եւ լսելու Զու առաջնորդութիւնդ իմ կեանքիս համար: Ամէն:
Ի՛նչ պայմաններ կը տանջեն քեզ: Ինչպե՛ս կրնաս փնտռել Աստուծոյ առաջնորդութիւնը կեանքիդ համար:

Յոգիո՛վ ընթացեք, ու մարմինն ցանկութիւնը պիտի չգործադրէք: [Գաղ. 5. 16]

ՍՏԱՆԱԼ ԱՍՏՈՒԾՄԷ

Իր 1937 թուականին հրատարակած «Մտածէ եւ Հարստացիր» (Think and Grow Rich) գիրքին մէջ, հեղինակ՝ Նափոլիոն Հիլլ (Napoleon Hill) ըսաւ. «Ինչ որ քու միտքդ կրնայ յղանալ եւ հաւատալ, կրնայ նաեւ իրականացնել»: Այս խօսքը կը մարմնաւորէ Ամերիկեան երազանքը, թէ՛ եթէ բաւական աշխատիս, կրնաս հասնիլ ամենախենթ երազանքներուդ:

Աշխատասիրութիւնը կրնայ բերել երկրային բարիքներ՝ եւ Սուրբ Գիրքի բազմաթիւ հատուածներ, յատկապէս Առականքը, կը կապեն այդ գաղափարները: Բայց որքան մեծնամ, այնքան աւելի կը տեսնեմ իրական վտանգ մը՝ Հիլլի գաղափարներուն մէջ՝ իմ յաճախ ինքնակեղրոն փորձերս իմ երազանքներս իրականացնելով, կրնան դառնալ փորձեր՝ ապրելու Աստուծո՛մէ անկախ:

Գաղատացիներուն նամակին մէջ Պօղոս կը հակադրէ երկու կեանքի ուղիներ. «Հոգիո՛վ ընթացէք, ու մարմինն ցանկութիւնը պիտի չգործադրէք» (Գաղ. 5. 16): Եու՛ճին Բիթըրսըն (Eugene Peterson) այսպէս կը բացատրէ զայն. «Ապրեցէ՛ք ազատ՝ Աստուծոյ Հոգիով շարժուած եւ մղուած: Այն ատեն պիտի չկիրարկէք ձեր եսասէր մղումները» (ՊԱՏԳԱՄԸ - THE MESSAGE): Բանի մը համարներ յետոյ՝ Պօղոս կը նկարագրէ Քրիստոսի մէջ ծաղկող կեանքը. «Հոգիին պտուղն է՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկայութիւն» (Հմ. 22-23):

Այս աշխարհի մէջ շատ ձայներ կը մղեն մեզ՝ մեր ցանկութիւնները բռնելու երկու ձեռքերով: Բայց այն կեանքը, զոր իսկապէս կը փափաքինք, ձեռք բերուած կեանք մը չէ, այլ տրուած է՝ երբ կ'ենթարկուինք Սուրբ Հոգիին, ազատօրէն ընթանալով Անոր հետ, այլ ո՛չ թէ՛ մեր ուժով փորձելով բռնել օրհնութիւնը մեր պայմաններով:

Աղօթք - Դա՛յր, երբեմն կը փորձեմ լեցուիլ Զեզմէ անկախ: Կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի հնազանդելու Զու Յոգիիդ առաջնորդութեան եւ վստահիլ Զեզի, որ Դուն ես զիս լեցնողը: Ամեն:

Ի՛նչ սովորութիւններ կ'օգնեն քեզի, ընդունելու այն օրինութիւնները, զոր Աստուած կ'ուզէ շնորհել քեզի:

Ծառայեցէ՛ք յօժարութեամբ, որպէս թէ Տէրոջ եւ ո՛չ թէ մարդոց: [Եփ. 6. 7]

ԱՂՕԹՔԻ ՊԱՐԳԵԼ

Մանր քայլերով մտայ մթերքի խանութը՝ Հայրերու Օրուան համար բացիկ մը գնելու համար: Արդէն ներած էի հօրս: Տարիներու ընթացքին փորձած էի հաշտուիլ՝ աղօթքով ընդունելու այն վէճքերը, որոնք ստացած էի՝ տասնհինգ տարեկան հասակիս տունէն դուրս գալէս առաջ եւ վերջը: Ցաւօք, տասնամեակներ անց, տակաւին չէի կրնար համակերպիլ այն բացիկներուն, որոնց մէջ փառաբանուած էին «ամենամեծ» Հայրերը: Ուստի, երբ կանգնած էի բացիկներու անցքին մէջ, յուսահատ՝ փափաքելով յարգել իմ երկնաւոր Հայրս, աղօթեցի իմ երկրաւոր հօրս համար:

Ադամէն ու Կայէնէն սկսեալ՝ մինչեւ Դաւիթն ու Աբիսողոմ, եւ մինչեւ իմ Հայրս ու ես, մեղքը պատճառ եղած է՝ բազմասերունդ հակամարտութեան եւ սրտացաւութեան: Սակայն Պօղոս առաքեալ քաջալերեց զաւակներուն, որ հնազանդին ծնողներուն՝ «Տէրոջմով, որովհետեւ ա՛յդ է իրաւացին» (Եփ. 6. 1): Ծնողները յարգելը՝ հրաման է, որ ունի խոստում եւ վարձատրութիւն (Հմ. 2-3): Փոխարէնը, Հայրերը կոչուած էին զաւակները դաստիարակելու՝ որպէսզի ճանչնան եւ սիրեն Աստուած (Հմ. 4): Աստուծոյ ժողովուրդը ստեղծուած է զիրար ծառայելու՝ «յօժարութեամբ, որպէս թէ՛ Տէրոջ եւ ո՛չ թէ՛ մարդոց» (Հմ. 7): Դժբախտաբար, մեղքը կրնայ կործանել այս յարաբերութիւնները:

Անկախ այն բանէն, թէ ինչպիսին է մեր յարաբերութիւնը մեր ծնողներուն հետ, մենք կրնանք գոհ ըլլալ Աստուծմէ՛ ա յն մարդոց համար, որ Ան ընտրեց երբ կեանք տուաւ մեզի, եւ աղօթել, որ անոնք վայելեն Յիսուսի հետ կեանք փոխող յարաբերութիւն մը: Աղօթքը, որ կ'առաջնորդէ Յիսուսի, սիրոյ եւ պատիւի պարգեւ մըն է, որ կրնայ փոխել յարաբերութիւններ եւ կեանքեր:

Աղօթք - Հայր, կը խնդրե՛մ՝ ցո՛յց տուր ինձի, թէ ինչպէ՛ս կրնամ պատուել Քեզ՝ թէ՛ առողջ եւ թէ՛ լարուած յարաբերութիւններուս մէջ եւ միջոցով: Ամէն:

Ինչպէ՛ս կրնաս պատուել Աստուած, երբ յարաբերութիւն մը դժուար է: Ինչպէ՛ս պիտի աղօթես մէկու մը համար, որ քեզմէ օտարացած է:

Այգիիդ մէջ մնացած ողկոյզները մի՛ քաղեր. գանսը թո՛ղ դժբախտին եւ գաղթականին: [Ղեւ. 19. 10]

ՊԱՏՐԱՍՏ՝ ԱՌԱՏԱՁԵՌՆ ԸԼԼԱԼՈՒ

Մեծ հօրեղբօրս յիշատակի արարողութեան ընթացքին՝ մատուցուեցաւ ճաշ. բոհրուած միս, եգիպտացորեն եւ լուբիա՝ ի պատիւ այն հիւրընկալութեան, որ ան եւ իր կիներ ըրած էին՝ երկա՛ր տարիներ շարունակ: Ամէն Կիրակի առաւօտ՝ անոնք կը դնէին մեծ բոհրուած միսը եւ բանջարեղէնը, խոշոր կաթսայի մը մէջ՝ եկեղեցի երթալէ առաջ: Պաշտամունքէն ետք, անոնք կը փնտռէին մէկը, հրաւիրելու ճաշի: Երբեմն անիկա կ'ըլլար հին բարեկամ մը, երբեմն՝ օտարական մը: Ամէն պարագային ալ վստահեցնելով, որ տան մէջ բաւական ուտելիք կար ու այդ կիրակի կէսօրէ ետքերը՝ յատուկ կերպով կը յատկացնէին հիւրընկալութեան:

Անոնց կիրակնօրեայ սովորութիւնը կը պահանջէր դիտաւորեալ պատրաստակամութիւն առատաձեռնութեան: Իսրայէլացիները կը հետեւէին նման օրինակի: Մովսէսի միջոցով՝ Աստուած հրամայեց անոնց թողուլ բերքին մէկ մասը «դժբախտին ու գաղթականին» (Ղեւ. 19. 10): Բերքահաւաքի ժամանակ՝ անոնք պիտի չհնձէին մինչեւ դաշտերուն եզերքները, պիտի թողուն՝ այն ինչ որ ինկած էր եւ պիտի չվերահնձէին իրենց այգիները (Հմ. 9-10): Այս փրկարար կարգադրութիւններով՝ անոնք, որոնք հող չունէին, տակաւին կրնային աշխատիլ եւ սնունդ հաւաքել: Աստուծոյ ժողովուրդին համար՝ այս մէկ անգամ եւ ինքնակամ ըլլալիք արարք մը չէր. թէպէտ այդ ալ գեղեցիկ օրհնութիւն մըն է: Անիկա կեանքի ոճ մըն էր, որ կը պահպանէին տարիէ տարի:

Մեր շուրջ՝ առիթներ շատ կան՝ ցոյց տալու Յիսուսի հիւրընկալ սէրը: Որոնցմէ մաս մը կրնանք նախապատրաստել, իսկ ուրիշներ՝ ո՛չ: Աստուծոյ օգնութեամբ, խորհինք այսօր՝ թէ ինչպէ՞ս կրնանք բարի ու նրբանկատ ըլլալ ուրիշներու հանդէպ (Հմ. 33):

Աղօթք - Հայր, Դուս կատարեալ սիրոյ եւ ինքնագոհութեան կատարեալ օրինակ ես: Կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի պատրաստ ըլլալ՝ ցոյց տալու Քու սերդ ուրիշներուն: Ամէն:

Աստուած՝ ո՛ր կը կանչէ քեզ՝ առատաձեռն ըլլալու: Ինչպէ՛ս կը պատկերացնես՝ պատրաստակամ սիրոյ եւ բարիք ցոյց տալու կեանք մը:

Ատիկա անկարելի է մարդոց քով, բայց ամեն բան կարելի է Աստուծոյ քով: [Մատթ. 19. 26]

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԷՁ ԱՐՄԱՏԱՅԱԾ ՅԻՄԱՅԸ

Ոգեւորուած էի, երբ կը կարդայի պատմական վիպական պատում մը՝ Մէրի ՄքԼաուտ Պըթիւնի (Mary McLeod Bethune) կեանքին մասին, որ հիմնադիրն էր Պըթիւն-Բուքման (Bethune-Cookman) Համալսարանին: Անոր վճռակամութեան եւ ուրիշներուն հանդէպ խնամքի պատմութիւնները՝ մղեցին զի՛ս աւելի խոր ուսումնասիրելու անոր կեանքը: Պատմութիւն մը կ'ըսէ, թէ 1900-ականներուն սկիզբները՝ ան «նկարագրեց» իր դպրոցին շէնքերը սեւամորթ երիտասարդ կիներու համար բացուած, հարուստ գործարարի մը: Բայց երբ գործարարը այցելեց «Համալսարանը», գտաւ միայն մէկ շէնք: Պըթիւն՝ իր երազը նկարագրած էր անոր՝ հաւատալով, թէ ան կ'օգնէր դպրոցին ներգրումներով: Անոր հաւատքը եւ տեսլականը միասնաբար գործեցին՝ նիւթական եկամուտ ապահովելու համար: Վերջապէս՝ անոր դպրոցը դարձաւ եւ մինչեւ այսօր ալ կը մնայ՝ չորս տարուան համալսարան:

Պըթիւնին կը վերագրուի հետեւեալ խօսքը. «Առանց հաւատքի՝ ոչինչ հնարաւոր է: Իսկ հաւատքով՝ ոչինչ անհնարին չէ»: Այս արտայայտութիւնը՝ նման է այն ինչ որ Տէր Յիսուս ըսաւ՝ զարմացած աշակերտներուն, որոնք հարցեր կ'ընէին փրկութեան մասին: Անոնք կը փորձէին հասկնալ, թէ ինչպէ՞ս մարդիկ կրնան «մտնել Աստուծոյ թագաւորութիւնը՝ այսինքն երկինք (Մատթ. 19. 24): Անոնք հարցուցին. «Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ» (զլխ. 25): Յիսուս բացատրեց իր հետեւորդներուն, թէ՛ Աստուծոյ վրայ եղած հաւատքը՝ միակ ճամբան է, որովհետեւ «ամէն բան կարելի է Աստուծոյ քով» (Հմ. 26):

Հաւատքը կը մղէ մեզ՝ հաւատալու այն բաններուն, որոնք տակաւին չենք տեսներ (տե՛ս Եբ. 11. 1), ինչպէս՝ երազ մը աղքատներու համար դպրոց մը ունենալու, կամ յաւիտենական բնակարան մը՝ Բրիտտոսը ընդունողներուն համար:

Աղօթք - Տէ՛ր, կը խնդրե՛մ՝ աւելցուր հաւատքս՝ Զու անսահման կարողութեանդ մէջ՝ գործելու այն, ինչ որ անհնարին կը թուի: Ամէն: **Ի՛նչ է այն, որ կը դժուարանաս հաւատալու: Ինչպէ՞ս կրնայ Աստուծոյ ուժին վստահիլը՝ օգնել քեզի:**

Ընդ ընդ որում գրություն կը գտնուի: [Ու. 14. 3]

ՀՐԻՆ ԲԱՅ ԲԱԶՈՒԿՆԵՐԸ

Մէրի Սլէսսըրի (*Mary Slessor*) կարեկցող սիրտը՝ մղեց զինք բանալու իր բազուկները կարօտեալներուն: Այս Սկովտիացի միսիոնարը, որ ծնած էր 1848-ին, ծառայեց Օքօեօնկի (*Okoyong*) ժողովուրդին՝ հեռաւոր երկրամասի մը մէջ: Այդ շրջանին մէջ տիրող սնապաշտութիւնը՝ մարդիկ կը մղէր հաւատալու, թէ երբ երկուրեակներ կը ծնին, մէկը բարի կ'ըլլայ, իսկ միւսը սատանայի զաւակ: Այս հաւատքը յաճախ պատճառ կը հանդիսանար, որ երկուքն ալ մեռնին թողելով ենթակայ ըլլալու սովամահութեան կամ այլ վտանգներու: Սակայն Աստուծոյ սիրող սիրտին արտացոլանքով, Մէրին ժամանակի ընթացքին կրցաւ փրկել հարիւրաւոր վտանգի տակ գտնուող մանուկներ՝ եւ ինչ մանուկներ որդեգրեց:

Իր ներշնչող խօսքերուն մէջ՝ Իսրայէլի ազգին ուղղուած, Ուսէ մարգարէն կը ցոյցնէ Աստուծոյ խնամող սիրտին մէկ պատահիկը: Ան կ'ըսէ Աստուծոյ մասին. «Քու քովդ որբը գթութիւն կը գտնէ» (Ու. 14. 3): Մարգարէն կը յայտարարէր, որ Աստուած հոգ կը տանի Իր ժողովուրդին եւ կ'ուզէ «անոնց յօժարակամ սիրել» (Հմ. 4): Սակայն անոնք պէտք ունէին դառնալու իրենց ապստամբութենէն եւ ընթանալ Իր ճամբաներուն մէջ: Անոնք հրահանգուած էին հեռանալու կռապաշտ աստուածներէն եւ դառնալու ճշմարիտ Աստուծոյ, որ կ'ընդունի ու կը խնամէ նոյնիսկ ամենէն անօգնականները՝ որբերը: Եւ եթէ վերադառնային Աստուծոյ, պիտի գտնէին ներում՝ անոր կողմէ, որ «զանոնք պիտի ընդունի բարութեամբ» (Հմ. 1-2):

Երբ մեր բազուկները կը բանանք մեր շուրջը եղող կարօտեալներուն, ներառեալ վտանգի տակ գտնուող մանուկներուն, կը ցոյցնենք Աստուծոյ գթարատ սէրը: Թող որ ընդօրինակենք Անոր կարեցող սիրտը եւ տարածենք Անոր սէրն ու խնամքը:

Աղօթք - Հայր, բա՛ց իմ սիրտս եւ ձեռքերս մանուկներուն ու բոլոր կարօտեալներուն առջեւ, որոնք կը գտնուին իմ շուրջս: Ամէն: **Ինչպե՛ս Աստուծոյ սիրող օրինակը առաջնորդած է քեզ՝ խնամելու կարօտեալները: Ինչպե՛ս կը քաջալերէ քեզ այն գիտակցութիւնը, թէ Անոր մէջ՝ «որբը գթութիւն կը գտնէ»:**

Ո՞վ է իմ ընկերս: [Ղուկ. 10. 29]

Ո՞Վ Է ԸՆԿԵՐՍ

Տարեց կին մը անդիտակից՝ պառկած էր տաք մայթին վրայ՝ սոսկալի կերպով իյնալէ ետք: Քանի մը անցորդներ՝ կանգ առին օգնութիւն ցուցաբերելու համար: Մէկը զանգեց շտապ օգնութեան: Միւսը՝ նրբօրէն բաճկոն մը դրաւ անոր գլուխին տակ: Ուրիշներ անձեռոցներ դրին՝ անոր թեւերուն տակ եւ ուրիշ մէկը՝ հովանոց մը բռնեց անոր գլուխին վրայ, մինչեւ որ շտապ օգնութեան խումբը հասնի: Տեսաբիրը հրապարակող անձը գրեց, թէ այդ տեսարանը՝ յատկապէս սիրտ ջերմացնող է, որովհետեւ կանգ առնողները տարբեր տարիքի եւ ազգային ծագումի մարդիկ էին, բոլորն ալ միացած՝ մէկ անձի օգնութեան համար:

Երբ օրինական մը հարցուց Յիսուսի՝ «ո՞վ է ընկերս» (Ղուկ. 10. 29) - այսինքն՝ որո՞ւ հանդէպ պէտք է սէր ցուցաբերեմ, Տէր Յիսուս պատմեց պատմութիւն մը՝ մարդու մը մասին, որ աւագակներու կողմէ ծանր ծեծի ենթարկուած էր եւ կիսամեր կը պառկէր ճամբուն եզրին (Հմ. 30-31): Քահանայ մը անցաւ, ապա նաեւ Ղեւտացի մը, բայց երկուքն ալ անցան անդիէն: Վերջապէ՛ս՝ Սամարացի մը կանգ առաւ եւ օգնեց: Ա՛յս այնքան արտասովոր էր, որովհետեւ Հրեաներն ու Սամարացիները դարաւոր թշնամանք ունէին: Բայց Սամարացին էր, որ կա՛նգ առաւ եւ «գթաց անոր» (Հմ. 33):

Պատմութիւնը աւարտելէ ետք, Յիսուս հարցուց, թէ ո՞վ եղաւ ընկեր կամ մերձաւոր այդ ինկած մարդուն: Օրինականը պատասխանեց. «Ա՛ն՝ որ կարեկցեցաւ անոր» (Հմ. 37): Յիսուս ըսաւ անոր՝ եւ մեզի. «Գնա՛, դո՛ւն ալ նոյնպէս ըրէ՛»:

Թող Աստուած օգնէ մեզի տեսնելու, որ ամէն մարդ, որու կը հանդիպինք, մեր ընկերը, դրացին ու մերձաւորն է, եւ այլ մարդ արարած մը՝ զոր Աստուած ստեղծած է եւ արժանի է մեր խնամքին եւ սիրոյն:

Աղօթք - Տէր, կը խնդրե՛մ՝ օգնէ՛ ինձի սիրելու ուրիշները՝ անկախ մեր ունեցած տարբերութիւններէն, որպէ՛ս իմ ընկերս: Ամէն:

Որո՞ւ հանդէպ կը դժուարանաս բարի ընկեր մը կամ դրացի մը ըլլալու: Ինչպէ՞ս Յիսուս ցոյց կու տայ, թէ ի՛նչ կը նշանակէ սիրով ընկեր ըլլալ ուրիշներուն:

Ան ամեն բանէ առաջ է, ու անո՛վ ամեն բան հաստատ կը կենայ: [Կող. 1. 17]

ՎՍՏԱ՛Յ ԲԱՆ ՍԸ

Մ առերը՝ պաղ եղանակներուն մէջ կը պատրաստուին ձմռան ընթացքի մը միջոցով, որ կը կոչուի «կարծրանալ» (*hardening*): Զուրը կը քաշուի բջիջներէն՝ որպէսզի չսառի, չընդլայնի եւ չպայթեցնէ ծառը: Այն ջուրը, որ կը մնայ բջիջներուն միջեւ, այնքա՛ն մաքուր է, որ սառոյցի բերեղները՝ չե՛ն կրնար կցուիլ անոր: Այդպէ՛ս, ջերմաստիճանը կրնայ իջնել մինչեւ գէրօէն քառասուն աստիճան վար՝ առանց ծառը ճեղքելու: Ծառերը՝ ամէն տարի՝ նո՛յն ժամանակին կը կարծրանան, որովհետեւ իրենց ազդանշանները կը ստանան օրերու կարճացումէն՝ բնութեան հաստատ օրացոյցէն: Անոնք չե՛ն հիմնուիր եղանակին վրայ, որ երբեմն անսպասելիօրէն մեղմ կրնայ ըլլալ: Անոնք կը վստահին արեւին՝ իրենց միակ հաստատ բանին:

Եւ արեւը ստեղծող Որդին՝ աւելի հաստատ է: Ան «անտեսանելի Աստուծոյ պատկերն է, բոլոր արարածներուն անդրանիկը, որովհետեւ անո՛վ ստեղծուեցաւ ամէն բան» եւ «անո՛վ ամէն բան հաստատ կը կենայ» (Կող. 1. 15-17): Ո՞վ կը յայտնէ ծառերուն, թէ երբ պէտք է կարծրանան: Նոյն Որդին՝ որ կը ծագեցնէ արեւը իւրաքանչիւր առաւօտ եւ կը մարէ գայն իւրաքանչիւր երեկոյ, ծովը կը մակընթացնէ լուսինով, կը պտըտեցնէ ելեկտրոնները ամէն բջիջի մէջ, կը տրոփէ սիրտդ եւ կը շնչեցնէ թոքերդ ու կը գրկէ քեզ, երբ սիրտդ կտորած է:

Աշխարհը միասին պահողը բնութեան մէջը եղող ուժ մը չէ՛, այլ՝ անձ մը, որ կը գտնուի բնութենէն դուրս: Անձ մը, որ մտաւ այն աշխարհը, զոր Ինք ստեղծած էր, որպէսզի «հաշտեցնէ իրեն հետ բոլորը» ներառեալ քեզ (Հմ. 20): Այս անկանխատեսելի աշխարհին մէջ ունի՛ս հաստատ բան մը: Յիսուս պիտի «անոր առջեւ սուրբ, անարատ եւ անմեղադրելի ներկայացնէ մեզ» (Հմ. 22):

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, կը վստահիմ Զեզի այսօր՝ ինչ ալ որ պատահի: Ամէն:

Ի՞նչ է, որ կը վախցնէ քեզ: Ինչպէ՛ս Յիսուսի իշխանութիւնը աշխարհի վրայ կը քաջալերէ քեզ՝ աղօթելու եւ հանգստանալու Անոր մէջ:

Ո՛րչափ քաղցր է քու խօսքդ իմ քիմքիս, մեղրեն աւելի անուշ է իմ բերանիս: [Սաղմ. 119. 103]

ՄԵՂՐԷՆ ԱԲԵԼԻ ԱՆՈՒՇ

Եթէ ուզես ժպիտ մը բերել ձէրրըթին (Jarrett) դէմքին վրայ, հարցուր անոր իր մեղուններուն մասին: Ան մեղրաբոյծ է՝ մեղուապահ: Թէեւ մեր հանդիպումները իր բակին մէջ՝ մեղուններուն մասին չեն, սակայն «մեղուապահութեան» դասերը երբեմն կը դառնան զուարճալի եւ խանդավառ մասնիկ մը՝ մեր զրոյցներուն: Բայց «մեղուային խօսքերէն» աւելի հիասքանչ է՝ այն բուրումնաւոր քաղցրութիւնը, որ կը բխի ձէրրըթի աշխատասէր մեղուններուն արտադրած ոսկեգոյն մեղրէն: Ըմմ, ըմմ, ինչքա՛ն լաւ:

Սաղմոս 119. 103-ին մէջ Սաղմոսներգուն կը բացագանչէ. «Ո՛րչափ քաղցր է քու խօսքդ իմ քիմքիս, մեղրէն աւելի անուշ է իմ բերանիս»: Եթէ ուշադիր նայինք 97-104 համարներուն, կը տեսնենք որ «մեղրէն աւելի անուշ է» արտայայտութիւնը միայն մէկ օրինակն է՝ այն բազմաթիւ պատկերներէն, որոնք զրոյցը կը գործածէ՝ շեշտելու համար Սուրբ Գիրքին գերագոյն արժէքը. «Քու պատուիրաններդ զիս թշնամիներէս աւելի իմաստուն ըրին, քանի որ անոնք միշտ իմ քովս են: Բոլոր ուսուցիչներէս աւելի ուշիմ եղայ, որովհետեւ քու վկայութիւններդ իմ խոկումս են: Երէցներէն աւելի խելացի եղայ, քանի որ քու հրամաններդ պահեցի» (Հմ. 98-100): Ամփոփելով այս՝ երբ ամբողջ սիրտով կը ողջագուրենք այն, ինչ որ Աստուած յայտնեց Աստուածաշունչին միջոցով, կը կարողանանք ապրիլ իմաստութեամբ այս աշխարհին մէջ: Նոյնպէս, երբ Յիսուս՝ Կենդանի Խօսքը (տե՛ս Յովհ. 1. 1-14), կ'ապրուի եւ կ'արժեւորուի մեր մէջ, Անոր հետեւողները՝ Սուրբ Հոգիէն զօրացած, կը գտնուին այն դիրքին մէջ, որոնց մէջ կրնան ապրիլ Աստուծոյ պատիւ բերող եւ Անոր նպատակին ծառայող կեանքով:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, փորձած եմ ու տեսած, թէ Դո՛ւն եւ Զու խօսքդ՝ բարի են: Կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի աւելի ու աւելի սիրելու եւ ողջագուրելու Զեզ: Ամէն:

Ինչպէ՞ս կրնաս աւելի վայելել Աստուածաշունչին մէջ գրուած խօսքերը: Ի՞նչ բան փորձառաբար տեսար, որ յատկապէ՛ս քաղցր եր՝ Զրիստոսի հետ քու ընթացքիդ մէջ:

Այդ կամքով է որ մենք սրբացանք՝ Յիսուս Զրիստոսի մարմինին մե՛կ անգամ ընդմիշտ պատարագուելով: [Եբ. 10. 10]

ՅԻՍՈՒՄ՝ ՄԵՐ ՓՈԽԱՐԻՆՈՂԸ

Երբ Ամերիկայի Միացեալ Նահագներու Քաղաքացիական Պատերազմը (1861-1865) երկարեցաւ, երկու կողմերն ալ դիմեցին զինծառայութեան պարտադիր զօրակոչին: Ըստ Համադաշնութեան օրէնքին՝ զօրակոչուածը կրնար խուսափիլ ծառայութենէ՝ վարձելով մէկը, որ ազատ էր զօրակոչէն՝ որպէս փոխարինող: Սովորաբար այդ մարդը՝ կամ չափահասութեան տարիքը չէր հասած, կամ ալ անցած էր այդ տարիքը: Ընդհանրապէս «Հիմնականը» (ինչպէս կը կոչուէր զօրակոչէն խուսափողը) պարտադիր գին մը կը վճարէր կառավարութեան եւ մեծ գումար մըն ալ զինք փոխարինողին: Միա՛յն հարուստները կրնային այսպիսի փոխարինողներ ունենալ:

Բայց Պօղոս առաքեալ կը խօսի տիեզերական հոգեւոր պատերազմին մասին, ուր «բոլորը մեղանչեցին, եւ զրկուած են Աստուծոյ փառքէն» (Հռոմ. 3. 23) եւ ապա կ'ըսէ՝ «մեղքին վարձատրութիւնը մահ է» (6. 23): Զկար որեւէ կէտ կամ փախուստի ճամբայ, որով «կարող» անձը կարենար փրկուիլ: Բայց ի՞նչ կ'ըլլար, եթէ գոյութիւն ունենար փոխարինող մը՝ մեր բոլորին համար: Եբրայեցիներու նամակին հեղինակը կը գովաբանէ Աստուածը, որ իր անսահման ողորմութեամբ՝ զրկեց Յիսուսը, որպէս մեր Փոխարինողը, կրել տալով Անոր մեր մեղքին պատիժը, վճարելով մեր պարտքը զոհաբերելով «Յիսուս Քրիստոսի մարմինին մէ՛կ անգամ ընդմիշտ պատարագուելով» (Եբ. 10. 10): Մենք «մեռանք Քրիստոսի հետ» եւ օր մը «կը հաւատանք թէ պիտի ապրինք ալ անոր հետ» (Հռոմ. 6. 8):

Ահա՛ բարի լուրը: Քրիստոս մեռաւ քեզի եւ ինծի համար. Փոխարինողը գրաւեց մեր տեղը: Մենք այլեւս միայն պատերազմի վերապրողներ չենք: Մենք դարձած ենք Աստուծոյ որդիներն ու զուտորերը:

Աղօթք - Տեր Յիսու՛ս, կը գովե՛մ Զեզ, որ եղար իմ Փոխարինողս եւ ապահովեցիր ինծի յաւիտենական կեանք: Ամեն:

Ինչպէ՛ս կը զգամ, երբ կը գիտնամ, որ Յիսուս մեռաւ իմ տեղս:
Ինչպէ՛ս կրնաս բացատրել այս բարի լուրը ընկերոջ մը:

Ուստի ո՛չ տնկողը բա՛ն մըն է, եւ ո՛չ ջրողը, հապա Աստուած՝:
[Ա. Կորնթ. 3. 7]

ԱՂՕԹԵԼ՝ ԱԾԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Երբ Լէմ Ուէյ Չէն (*Lam Wai Chen*) իր հայրենի Սինկափուրէն տեղափոխուեցաւ Ճաբոն՝ հովուելու եկեղեցի մը, ան խուճապահար եղաւ: Եկեղեցին հազիւ քսան անդամ ունէր: Մէկ ազգի մէջ, որ յաճախ կը կոչուի «միսիոնարական գերեզմանատուն», ուր բնակչութեան մօտաւորապէս մէկ առ հարիւրը Քրիստոնեայ է եւ շատ եկեղեցիներ դատարկ են, Լէմ զգաց այնպէս «ինչպէս կը ստանձնէի խորտակուող նաւ մը»: Աղերսելով Աստուծոյ, ան զգաց պատասխան մը. «Նուիրէ՛ եկեղեցին դարձեալ ինձի»:

Փոխանակ «Թարմացնելու» երգեցողութիւնը կամ պաշտամունքի ձեւերը, Ուէյ Չէն խրախուսեց անդամները աղօթելու՝ իրենց կարիքներուն, ընտանիքներուն եւ Յիսուսը ճանչցող բարեկամներուն համար: Դանդաղ, բայց հաստատ կերպով, եկեղեցիին թիւը կրկնապատուեցաւ:

Անոնց հաւատարիմ աղօթքը՝ կենդանի եւ աստուածաշնչային օրինակ մըն է, թէ ինչպէ՛ս կարելի է Յիսուսով համայնք մը կառուցել: Նախ աղօթե՛նք: Պօղոս կը գրէ. «Մի՛ մտահոգուիք որեւէ բանի համար. հապա ամէն բանի մէջ աղօթքով ու աղերսանքով, շնորհակալութեամբ միասին, գիտցուցէ՛ք ձեր խնդրանքները Աստուծոյ» (Փիլ. 4. 6): Այսպէ՛ս՝ մենք ետ կը նուիրենք մեր ծառայութիւնները, եկեղեցիները եւ ծրագիրները Աստուծոյ: Մենք կրնանք սերմանել եւ ջրել, բայց ինչպէս առաքեալը կ'ըսէ. «ո՛չ տնկողը բա՛ն մըն է, եւ ո՛չ ջրողը, հապա Աստուած, որ աճեցուց» (Ա. Կորնթ. 3. 7): Ան կը հրաւիրէ Կորնթացիները՝ դադրիլ վիճելու այն մասին, թէ ո՞ր առաջնորդին կը հետեւին (հմ 3-6):

Ինչպէս Պօղոս կը գրէ. «Ո՛չ մէկը ա՛լ ուրիշ հիմ կրնայ դնել՝ դրուածէն զատ, որ Յիսուս Քրիստոսն է» (հմ. 11): Եկէ՛ք աղօթքով վերանուիրենք մեր եկեղեցիները Անոր: Ապա տեսնե՛ք, թէ ինչպէս անոնք կը զարգանան:

Աղօթք - Սիրելի Աստուած, մինչ ես կը մնամ հաւատարիմ, կը խնդրե՛մ՝ Դո՛ւն կառուցէ Քու համայնքդ: Ամէն:

Ի՛նչ բաներ կը փորձեն քու ջանքերդ՝ Քրիստոսի մէջ համայնք մը կառուցելու: Ինչպէ՛ս կրնաս այդ ջանքը նուիրել Աստուծոյ:

ՑԱՆԿ ՆԻԻԹՈՑ

Աղօթք.....	Ապ. 29, Մայ. 7, Յուն. 30
Աշակերտութիւն.....	Ապ. 18, Մայ. 3, 13
Ապաշխարութիւն.....	Մայ. 28, Յուն. 5
Առատաձեռնութիւն.....	Յուն. 1, 8, 15, 22
Աստուածաշունչի Ուխտերը.....	Ապ. 2
Աստուծոյ Ընտանիքը.....	Ապ. 28, Յուն. 7, 21
Աստուծոյ ճամբան.....	Ապ. 24
Աստուծոյ Նկարագիրը ...	Ապ. 8, 12, 28, Մայ. 1, 11, 15, 25, 26, 28, Յուն. 9, 13, 23, 28
Աստուծոյ Սէրն ու Հոգատարութիւնը.....	Ապ. 3, 9, 10, 14
Աստուծոյ Վստահիլ.....	Մայ. 6, 17, 29, Յուն. 6, 18
Արդարութիւն.....	Ապ. 19
Աւետարանչութիւն.....	Ապ. 18, Մայ. 13, Յուն. 11
Բարկութիւն.....	Ապ. 12, 29
Բժշկութիւն.....	Մայ. 5, 19
Գութ.....	Ապ. 13
Երանելիներ.....	Ապ. 4
Ընտանեկան Յարաբերութիւններ.....	Մայ. 3
Իմաստութիւն.....	Ապ. 1, 16, Մայ. 5
Ծառայութիւն.....	Ապ. 4, 9, 15, 20, 25, Մայ. 19, 31, Յուն. 6, 14, 21, 22, 25
Ծեռանալ.....	Մայ. 21
Համայնք.....	Ապ. 4, 9, 15, 16, 19, 23, Յուն. 14, 30
Համբերութիւն.....	Ապ. 27
Հանգիստ.....	Մայ. 25, Յուն. 6
Հեզութիւն.....	Ապ. 11, 19, 20, 25, Մայ. 19, Յուն. 9
Հնազանդութիւն.....	Ապ. 7, 27, 30, Մայ. 10, Յուն. 5
Հոգեկան Աճում.....	Ապ. 7, 11, Մայ. 14, 18, Յուն. 1, 2
Հոգեկան Մարտ.....	Մայ. 2, 9, 16, 23
Հոգիին Պտուղները.....	Մայ. 27

Մատակարարություն	Մայ. 19, Յուն. 1, 8
Մարդկություն	Յուն. 13
Մարդոց Վրայ Ազդեցություն	Ապ. 16
Յաւիտենականություն	Յուն. 10
Յոյս	Ապ. 22, 26, Մայ. 5, 19, 20, 22, 27, Յուն 16
Ներել	Մայ. 30, Յուն. 4, 5
Որոշում Կայացնել	Մայ. 26
Ուրիշ Հաւատացեալներու Հետ Ապրիլ	Ապ. 26, Յուն. 14
Պաշտամունք	Մայ. 4, Յուն.3, 9
Չատագովականք	Յուն. 11
Սուրբ Գիրքի Սերտողություն	Մայ. 8, 12, 13
Սեր	Մայ. 3, 28, Յուն. 4, 25, 26
Սուրբ Հոգի	Ապ. 30, Մայ. 23, 24, Յուն. 19
Ստեղծագործություն	Մայ. 1, 8, 15, 22
Սրբություն	Ապ. 6, Յուն. 2, 9, 16, 23
Վաւերականություն	Մայ 26
Տառապանք	Ապ. 22, Մայ. 5, 10, 19, 22, 25, Յուն. 16, 18
Տեղապաշտություն	Յուն. 19
Փորձություն	Մայ. 9, Յուն. 20
Փրկություն	Ապ. 13, 21, Մայ. 5, 23, Յուն. 2, 4, 12, 29
Քաջալերություն	Յուն. 3, 17
Քաղաքացիություն	Ապ. 1, 8, 15, 22
Քրիստոնէական տօնակատարություններ	Ապ. 2
Քրիստոս՝ Անձ/Գործ	Ապ. 3, 5, 8, 20, 25, Յուն. 12, 14, 27
Քրիստոս՝ Ծնունդ	Մայ. 8
Քրիստոս՝ Նկարագիր	Ապ. 1, 20, 25
Քրիստոսի Նման Ապրիլ	Յուն. 26, 28
Քրիստոսի Համար Ապրիլ	Ապ. 17, 27, Մայ. 6, 31, Յուն. 19, 20
Քրիստոսի Հետ Նոյնություն	Ապ. 15, 25, Յուն. 7, 29
Օրհնություններ	Ապ. 14

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Եթէ կը ճանչնաք անձեր, որոնք պիտի փափաքին այս գրքոյկին յաջորդ թիւերը ունենալ, կրնաք անոնց անունները ու հասցէները գրել վարի կտրօնին վրայ եւ դրկել հետեւեալ հասցէներէն մէկուն.-

Սփիւռքի հասցէ՝
Armenian Missionary Association
31 West Century Road
Paramus, NJ 07652
Tel. 201.265.2607 - E-mail: info@amaa.org

Հայաստան եւ Կովկասեան երկիրներ դիմել՝
Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն
Բաղրամեան Փողոց, Թիւ 18
Երեւան, Հայաստան
հեռ. (374-10) 54-35-76

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

.....

Tel./Հեռ.....

.....

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

.....

Tel./Հեռ.....



Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն
Armenian Missionary Association of America
31 West Century Road, Paramus, NJ 07652

HY2602